

Որակի ապահովմանը ուսանողների ներգրավվածության համեմատական վերլուծություն



ESPAQ

Որակի ապահովմանը

ուսանողների

ներգրավվածության

համեմատական վերլուծություն

IMPRINT

ESPAQ—ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Brussels, January 2016

Եվրոպական ուսանողական միություն (ԵՈՒՄ, ESU)

Այս հրատարակությունն արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Եվրոպական հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող տեղեկատվության և դրա օգտագործման համար:

Փաստաթղթում «Եվրոպական ուսանողական միություն» (ESU) անվանումը օգտագործվում է մատնանշելու համար «Եվրոպայում ազգային ուսանողական միությունները» (ESIB), որոնք շահույթ չհետապնդող կազմակերպություններ են (BE0890.019.936)՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս երկու իրավաբանական անձինք էլ միաձուլման գործընթացում են: Նույն կերպ, «ESU»-ն նույնականանում է «ESIB»-ի հետ:

ՀԵՂԻՆԱԿ

Լաուրա Ֆեդելի (ՄՀ, UNIMC), laura.fedeli@unimc.it

REFERENT

Սիմոն Բետտի (ՄՀ, UNIMC)

PERSOANE IMPLICATE

Alessandra Fermani (UNIMC); Simone Betti (UNIMC), Gohar Hovhannisyan (ANSA); Irina Vanyan (NUACA), Nerses Gevorgyan (ASUE), Margarit Marukyan (ASUE), Ani Baghdasaryan (ASUE), Armen Grigoryan (ASUE), Maria Petrosyan (ASUE), Ekaterina Kashina (YSAFA), Kristine Tanajyan (ASPU), Mariam Melkumyan (ASPU), Lilit Sahakyan (ASPU); Sona Khachikyan (NPUA)..

CREDITE DE IMAGINE

Yerevan State University by Serouj Ourishian

LAYOUR

Linus Rowedda

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ	3
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ	7
ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ	13
1 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ	23
2 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ԻՍՊԱՆԻԱ	29
3 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ՌՈՒՄԻՆԻԱ	33
4 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ՍԵՐԲԻԱ	41
5 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎԱԼՆԵՐ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ	47
6 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ԲԵԼԱՌՈՒՍ	53
7 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ՄՈԼԴՈՎԱ	55
8 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆ	59
9 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ՎՐԱՍՏԱՆ	63
10 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ, ՈՒԿՐԱԻՆԱ	71
11 ՀԱՎԵԼՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ	75

ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

Սույն փաստաթուղթը աշխատանքային փաթեթում ներգրավված ծրագրի գործընկերների համագործակցության արդյունքն է: Ոլորտային նյութերի ուսումնասիրությունը ղեկավարվել է Մաշերատայի համալսարանի թիմի կողմից, սակայն համալիր իրականացվել է տարբեր գործընկերների աջակցությամբ, մասնավորապես՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ (ՈԱԱԿ), Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիա (ՀՈՒԱԱ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ), Եվրոպական ուսանողական միություն (ԵՈՒՄ), Սպիրու Հարես համալսարան (ՍՀՀ), Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (ԵԳՊԱ):

Վերլուծությունը նախատեսված է որպես համապատասխանություններն ու անհամապատասխանություններն ընդգծելու արտացոլման միջոց, որը կարող է օգնել հասկանալու որոշ եվրոպական երկրներում ՈԱ-ը ուսանողների և ուսանողական ասոցիացիաների ներգրավվածությունը և տրամադրելու համատեքստ, թե ի՞նչ է տեղի ունենում Հայաստանում և հարևան երկրներում, որտեղ ՈԱ գործակալությունները ավելի երիտասարդ են կամ որոշ դեպքերում՝ նոր ստեղծված:

Վերջնարդյունքի առաջին տարբերակը ուղարկվել է խմբագրի, ով ՄՀ-ի (Մաշերատայի համալսարան, UNIMC) պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամ է, այնուհետ փաստաթուղթը շրջանառվել է ծրագրի էլ. փոստերի ցանկի միջոցով, որպեսզի յուրաքանչյուր գործընկերոջ հնարավորություն ընծեռնվի ներկայացնելու իրենց մեկնաբանությունները և քննարկելու դրանք՝ փաստաթղթի որակը բարելավելու համար: Հեղինակը և աշակիցները, ըստ էության, պետք է հաշվի առնեն գործընկերների առաջարկները և անհրաժեշտության դեպքում փաստաթղթում կատարեն համապատասխան փոփոխություններ: Փաստաթղթի վերջնական տարբերակը հետագայում առկա կլինի և կպահպանվի Ալֆրեսկո հարթակում, որը ծրագրի փաստաթղթերի կառավարման համակարգն է:

ՎԵՐԶՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վերլուծությունը կազմված է երեք հիմնական բաժիններից. եվրոպական չափանիշների ընդհանուր պատկերացում՝ ձևավորելու վերլուծության համար հղման համատեքստ, քննարկման բաժին, որտեղ տվյալները՝ վերը նշված տարբեր երկրների վերաբերյալ՝ հավաքված միևնույն ձևաչափով, համադրվում են ու հակիրճ մեկնաբանվում, և հավելվածները, որոնցում մեկ երկրի տվյալների ձևաչափն է ներկայացված՝ լավագույն փորձի տարբեր դեպքերի հետ մեկտեղ:

Հետևելով դիմումի հիմնավորմանը և ԱՓԶ-ի աշխատանքային պլանին՝ 10 երկրներ են վերլուծվել ոլորտային նյութերի ուսումնասիրության մեջ. Պորտուգալիա, Իսպանիա, Ռումինիա, Սերբիա, Միացյալ Թագավորություն, Հայաստան և իր Արևելյան հարևանության երկրներ (Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, Բելառուս):

Ադրբեջանը չի ներառվել վերլուծության մեջ, քանի որ ոլորտային նյութերի ուսումնասիրության մեջ ներգրավված գործընկերները չկարողացան գտնել համապատասխան առկա տեղեկատվություն ՈԱ համակարգի և ԲԿ (բարձրագույն կրթություն) ուսանողների ներգրավվածության վերաբերյալ:

Ի լրումն, 8 իրավիճակներ և 7 տարբեր երկրների լավագույն փորձեր են նկարագրվել՝ Գերմանիա, Ռումինիա, Ֆինլանդիա, Պորտուգալիա, Սերբիա, Վրաստան, Հայաստան:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջնարդյունք 2.1-ի, որը կոչվում է «ՈԱ-ը ուսանողների ներգրավվածության համեմատական վերլուծություն», նպատակն է կառուցելու համատեքստ եվրոպայում, Հայաստանում և Արևելյան հարևանության երկրներում (Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, Բելառուս) ներկայիս իրավիճակի վերաբերյալ:

Ուսանողների մասնակցությունը ՈԱ գործընթացներին ուսումնասիրության առանցքն է, որում համեմատության առարկան մշակվել է արտաքին և ներքին ՈԱ-ի ուղղություններով շնորհիվ առկա լայն գրականության մեծամասամբ ENQA-ի¹ հաշվետվությունների, եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ԵՁՈՒ) և QUEST ծրագրի շրջանակներում հրատարակված փաստաթղթերի:²

Երկրների մակարդակով ուսումնասիրությունը վերլուծության համատեքստի առանցքում է, սակայն ուսումնասիրության ընթացքում օգտակար է եղել նաև, այսպես կոչված, մոխրագույն գրականությունը բացահայտելու համար լավագույն փորձը, ծրագրերը և նորարարական իրադարձությունները առավել համապարփակ մակարդակում (օրինակ՝ տարածաշրջանային), որը կարող է ենթադրել տարբեր շահակիցների ներգրավվածությունը՝ ուսանողական ասոցիացիաներ, ծրագրի գործընկերներ և այլն:

Փաստորեն, մեկնարկային հանդիպման ընթացքում³, ինչպես նշված է 2-րդ աշխատանքային փաթեթի աշխատանքային պլանի փաստաթղթի 1,0 տարբերակում, «կոնսորցիումը համաձայնեց որպես ուսումնասիրության մակարդակ դիտարկել երկրի մակարդակը հղման միավորների հետ միասին, սակայն որպես իրավիճակների ուսումնասիրություն հետազոտել նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների և ուսանողների մակարդակով: Իրավիճակային ուսումնասիրությունները կտան խորը և ոչ պաշտոնական պատկեր ընթացքում գտնվող գործողությունների մասին՝ նպաստելով առավել ամբողջական համատեքստի ձևավորմանը՝ ընտրված երկրներում ՈԱ գործընթացների իրականացման առկա իրավիճակի վերաբերյալ»:

Ուսանողների ներգրավվածությունը ՈԱ-ը կարող է ազդել.

- ▶ Որակի ներքին ապահովման վրա (ՈՆԱ). դա հանդիպում է այն դեպքում, երբ բուհերը իրականացնում են իրենց ինքնավերլուծությունը՝ կիրառելով ներքին անձնակազմը ստուգելու, թե արդյոք ընթացակարգերն ու քաղաքականությունները, որոնք գործում են որակը ապահովելու նպատակով, համապատասխանում են չափանիշներին:
- ▶ Որակի արտաքին ապահովման վրա (ՈԱԱ). դա հանդիպում է այն դեպքում, երբ կազմակերպությունները (պետական, պետական մասնակցությամբ կամ մասնավոր գործակալությունները) իրականացնում են բուհերի գնահատում: Գործընթացը կարող է բաղկացած լինել որակի պարբերական գնահատումներից, աուդիտից, հավատարմագրում շնորհելուց:

«Ուսանողների մասնակցություն» արտահայտության տակ խմբավորված գործընթացների համապատասխանությունն ու արժեքը ուղղված կլինեն վերլուծելու գործողությունների շղթան ՈԱ քաղաքականություններում և ընթացակարգերում հնարավորությունների ու ներդրման տեսանկյունից և՛ վարչական, և՛ մանկավարժական/կրթական ուղղություններով:

Մշակված ձևաչափը, հավաքելու համար երկրների տվյալները և լավագույն փորձը (Հավելված 1-2, որը շրջանառվել է ԱՓԶ-ի աշխատանքային պլանի հետ միասին 2015 թ. ապրիլին), նպատակ ունի աջակցելու և ուղղություն տալու ոլորտային նյութերի ուսումնասիրությանը:

ՈՆԱ-ի մակարդակում այս գործիքները պետք է պարզաբանեն ուսանողների հնարավոր ներգրավումը.

REFERENCE

- 1 Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանց:
- 2 Ուսանողների համար որակի որոնում (QUEST) կայքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.esu-online.org/projects/current/quest/>
- 3 Ծրագրի մեկնարկային հանդիպումը տեղի է ունեցել Երևանում, 2014թ. փետրվարի 13–14-ին:

- Ներքին խմբերում/հանձնաժողովներում, որոնք պատասխանատու են հաստատության ինքնավերլուծության մշակման համար (պատասխանելու հարցաթերթերին, կազմելու հաշվետվություններ, մասնակցելու թիրախային խմբերին/սեմինարներին),

- Արտաքին գնահատողների հետ պաշտոնական հանդիպումներում նրանց պարբերական այցերի ժամանակ:

ՈԱԱ-ի մակարդակում առանցքը ուսանողների ներգրավվածության բացահայտումն էր.

- Գնահատումների մշակման և պլանավորման գործում՝ որպես արտաքին գործակալությունների/մարմինների հանձնաժողովի անդամներ,

- Որպես արտաքին գործակալության կողմից իրականացվող գնահատման մասնակիցներ:

responsibility for

Council of Europe

cognition: the Lisbon Recognition Convention

Council of Europe Publishing

ocean universities

Council of Europe Publishing

universities

Council of Europe Publishing

res publica

BOOK 2008-09

University and the University of the

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ⁴

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ԲՈՂՈՆԻԱՑԻ

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որակի ապահովումը Բոլոնիայի գործընթացի հիմնական տարրերից մեկն է, որն աջակցում է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) վստահության ձևավորմանն ու համախմբմանը և խրախուսում է բարձրագույն կրթության որակի սահուն և շարունակական զարգացումը: Եթե նույնիսկ տարբեր շահակիցներ տարբեր մոտեցումներ ունեն որակի ապահովմանը, ապա Բոլոնիայի գործընթացը և ԵԲԿՏ-ն առաջարկում են հիանալի հարթակ այս ոլորտում համագործակցության համար՝ ներդաշնակեցնելով տեսակետներն ու ակնկալիքներն այն հարցի շուրջ, թե ինչ է նշանակում բարձրագույն կրթության որակ և ինչ պետք է անել դրան հասնելու համար:

Բոլոնիայի գործընթացի նախնական փուլում բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարները որոշեցին, որ «եվրոպական համագործակցության խթանումը որակի ապահովման համար՝ համեմատելի չափանիշներ և մեթոդաբանություն ստեղծելու տեսանկյունից» պետք է լինի առաջին տասնամյակի առաջնային նպատակներից մեկը, ինչպես նշված է Բոլոնիայի հռչակագրում՝ ստորագրված 1999թ.: Սա բացեց առավել սերտ համագործակցության դռներ ազգային և եվրոպական մակարդակում որակի ապահովման շահակիցների միջև ստեղծելով հիմք

Բոլոնիայի գործընթացի ամենաարդյունավետ բարեփոխումներից մեկի համար, ինչպես նախարարները նշել են նախարարական հաշորդ կոմյունիկեներում:

Նախարարական երկրորդ պաշտոնական գագաթնաժողովը Պրահայում (2001թ.) պահպանեց «որակի ապահովման մեջ եվրոպական համագործակցության առաջնությունը» որպես Բոլոնիայի գործընթացի վեց ուղղություններից մեկը՝ մանրամասնելով հետագա գործողությունները, որոնք անհրաժեշտ է կատարել այս ոլորտում: Նախարարները որոշեցին ստեղծել Բոլոնիայի հետամուտ աշխատանքային խումբ (ԲՀԱԽ, BFUG)՝ խրախուսելով վերջինիս կազմակերպելու սեմինարներ որակի ապահովմանն առնչվող համագործակցությունն ուսումնասիրելու համար: Կոմյունիկեն սահմանում է, որ եվրոպայում ուսանողների ազգային միությունները (որը հետագայում վերանվանվեց եվրոպական ուսանողական միություն) այլ շահակիցների հետ պետք է խորհրդատվություն ստանան ԲՀԱԽ-ից:

REFERENCE

4 Այս պարագրաֆը և առնչվող ենթապարագրաֆները հեղինակվել են Քրիստի Պոպեսկուի կողմից, ով կիրառել է հետևյալ հղումները: Բոլոնիայի հռչակագիր (1999), Եվրոպայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր կազմված Բոլոնիայում 1999թ. հունիսի 19-ին, Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս (2001թ.), Դեպի եվրոպական բարձրագույն կրթության տարածք, բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս Պրահայում մայիսի 19, 2001թ., բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս (2003թ.), «Դեպի եվրոպական բարձրագույն կրթության տարածք. իրականություն դարձնելով եվրոպական բարձրագույն կրթության տարածքը: Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս Բեռլինում 2003թ. սեպտեմբերի 19-ին», Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս (2005): Եվրոպական բարձրագույն կրթության տարածք. Հասնելով նպատակներին, Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների հռչակագիր, Բեռլին, մայիսի 19–20, 2005թ., Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս (2007), Լոնդոնի հռչակագիր՝ դեպի եվրոպական բարձրագույն կրթության տարածք. Արժազանքելով գլոբալացված աշխարհի մարտահրավերներին, բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս (2009), Բոլոնիայի գործընթաց 2020 - եվրոպական բարձրագույն կրթության տարածքը նոր տասնամյակում, բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանսի հռչակագիր, Լյուվեն, ապրիլի 28–29, 2009թ. Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կոնֆերանս (2012): Լավագույնս օգտագործելով մեր ներուժը. համախմբելով եվրոպական բարձրագույն կրթության տարածքը, Բուխարեստի հռչակագիր (<http://www.ehea.info/Uploads/%281%29/Bucharest%20Communique%202012%281%29.pdf>); Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների հանդիպում, Երևանի հռչակագիր, Երևան, մայիս 14–15, 2015թ., Եվրոպական ուսանողական միություն (2015), Բոլոնիան ուսանողների աչքերով 2015 - «Ժամանակն է բավարարելու 1999թ.ի ակնկալիքները», ապրիլ, 2015թ.

Ինչևէ, առաջին ուղղակի նախաձեռնությունը որակի ապահովմանը ուսանողների մասնակցության առումով տեղի ունեցավ միայն 2003թ.-ին նախարարների կողմից Բեռլինի նախարարական գագաթնաժողովի ժամանակ: Կոմյունիկեն սահմանում էր, որ մինչև 2005թ.-ը ազգային որակի ապահովման համակարգը պետք է ներառի ուսանողների մասնակցությունը այլ համապատասխան ուղղությունների հետ մեկտեղ, ինչպես որակի ապահովման աշխատանքներում ներգրավված մարմինների և կառույցների (ինստիտուտների) պատասխանատվության սահմանումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրերի գնահատումը (ներառյալ ներքին և արտաքին գնահատումները), հավատարմագրման համակարգը և միջազգային մասնակցությունը: Կոմյունիկեն ավելի հստակեցրեց, որ «ուսանողները բարձրագույն կրթության կառավարման լիիրավ գործընկերներ են» ապահովելով ուսանողների կարևոր դերը ոչ միայն որակի ապահովման, այլև բարձրագույն կրթությանն առնչվող բոլոր որոշումներում: Նախարարները շեշտեցին նաև այն միտքը, որ որակի ապահովման հիմնական պատասխանատվությունը կրում է բարձրագույն ուսումնական յուրաքանչյուր հաստատություն. ներկայումս սա Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման հիմնարար սկզբունքներից մեկն է: Փոփոխություններ եղան Բոլոնիայի հետամուտ աշխատանքային խմբի կառուցվածքում և Բոլոնիայի գործընթացում ևս: Նախարարները որոշեցին խորհրդատվական պաշտոն տալ ԵՄԻՄ-ի, Եվրոպայի խորհրդի (ԵԽ, Council of Europe), Եվրոպական համալսարանական ասոցիացիայի (ԵՀԱ, EUA), Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիայի (ԲԿՀԵԱ, EURASHE) և UNESCO/CEPES (CEPES: Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոն) ներկայացուցիչներին: Ստեղծվեց ԲՀԱԽ-ի խորհուրդ՝ վերահսկելու համար ԲՀԱԽ-ի հանդիպումների միջև աշխատանքը, որը ներառում է ԵՄԻՄ-ի մեկ ներկայացուցիչ այլ շահակիցների հետ միասին:

Մեկ այլ կարևոր տարր այս կոմյունիկեում այն էր, որ նախարարները կոչ արեցին ENQA-ին, EUA-ի, ESU-ի և EURASHE-ի հետ համագործակցելով, «մշակել որակի ապահովման չափանիշների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված փաթեթ, հետագոտել որակի ապահովման և/կամ համատարմագրման գործակալությունների կամ մարմինների համապատասխան գործընկերային գնահատման համակարգի ապահովման ուղիները և ԲՀԱԽ-ի միջոցով 2005թ.-ին զեկուցել նախարարներին»: 2003թ.-ից մինչ 2005թ. հաջորդ նախարարական գագաթնաժողովը Բերգենում, նախարարների կողմից առաջադրված 4 կազմակերպությունները (որոնք կոչվում էին E4) աշխատեցին ընդհանուր տեսանկյուն ձևավորելու համար այն ուղղությամբ, թե ինչ է նշանակում բարձրագույն կրթության որակի ապահովում և ինչ կարելի է անել դրան հասնելու և այն պահպանելու համար:

Խորհրդակցությունների և համաձայնությունների այս շարունակական գործընթացի արդյունքում ձևավորվեց մի փաստաթուղթ, որը կոչվում է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափանիշներ և ունենիշներ (ԵՀՈՒ), որի ձևավորմանը ուսանողները բավական ներդրում ունեցան ԵՄԻՄ-ի միջոցով, որը կազմակերպում էր խորհրդակցություններ և բանավեճեր իր անդամների հետ, ովքեր հնարավորություն ունեցան իրենց ներդրումն ունենալ փաստաթղթում: Ավելին, խորհրդակցությունները կազմակերպվում էին ոչ միայն եվրոպական մակարդակում, այլև ԵՄԻՄ-ի մեծ թվով անդամներ կազմակերպում էին այսպիսի խորհրդակցություններ ազգային մակարդակում:

ԵՀՈՒ-ն ընդունվեց նախարարների կողմից Բերգենում և ներառում էր կարևոր խորհրդատվություններ՝ կապված որակի ներքին ապահովման գործընթացում, որակի ապահովման գործակալություններում, արտաքին գործընկերային գնահատումներում և որակի ապահովման գործակալությունների կողմից արտաքին գնահատումների ժամանակ ուսանողների մասնակցության հետ: Կոմյունիկեում նշվում էր, որ նույնիսկ կարևոր զարգացումներ կան որակի ապահովման գործընթացում Բոլոնիայի գործընթացին մասնակից երկրներում. «դեռևս աշխատանքներ կան անելու, մասնավորապես՝ կապված միջազգային համագործակցության մեջ ուսանողների ներգրավման հետ»: Նախարարները նաև որոշեցին որակի ապահովման գործակալությունների եվրոպական ռեգիստր ստեղծելու գաղափարը, որտեղ կգրանցվեն ԵԲԿՏ-ում ԵՀՈՒ-ին համապատասխան աշխատող բոլոր գործակալությունները: Նրանք խնդրեցին, որ դրա իրականացման հետագա գործնական խնդիրներն իրականացվեն E4-ի կողմից, որտեղ ուսանողների ծայրը կրկին ներկայացված էր ԵՄԻՄ-ի միջոցով:

Նախարարական հաջորդ գագաթնաժողովի ժամանակ Լոնդոնում (2007թ.), նախարարները նշեցին, որ ԵՀՈՒ-ն հզոր շարժիչ է որակի ապահովման հետ կապված փոփոխությունների համար՝ ընդգծելով որակի արտաքին ապահովման մեջ և բոլոր մակարդակներում 2005թ.-ից սկսած ուսանողների ներգրավվածության ոլորտում արձանագրված հաջողությունները: Ինչևէ, ուսանողների ներգրավվածության հետ կապված նշվեց, որ «դեռևս բարելավման կարիք կա»: Նախարարները նշումներ արեցին Եվրոպական բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ռեգիստրի ստեղծման համար (հետագայում հայտնի որպես EQAR՝ Որակի ապահովման եվրոպական ռեգիստր բարձրագույն կրթության համար) և համաձայնություն էկան E4 խմբի կողմից առաջարկված գործառնական մոդելի շուրջ՝ բոլոր չորս կազմակերպությունների համագործակցություն ռեգիստրի շրջանակներում: Այլ կերպ ասած, ուսանողները EQAR-ի մշակման և գործունեության կարևոր մասն էին հենց սկզբից:

Բենյուլոքսի երկրների կողմից Լյուվենում և Լուվեն-լա-Նյուվ-ում հյուրընկալված նախարարական գագաթնաժողովում 2009թ.-ին ոչ մի կարևոր փոփոխություն չկատարվեց Բոլոնիայի գործընթացի շրջանակներում որակի ապահովման գործում: Նախարարները որոշեցին որակի ապահովման մեջ EQAR-ի և ԵՀՈՒ-ի

ազդեցությունը և խնդրեցին E4 խմբին շարունակելու իրենց համագործակցությունը և ապահովելու EQAR-ի արտաքին գնահատումը՝ հաշվի առնելով տարբեր շահակիցների տեսակետը: Նախարարները նաև որոշ պարզաբանումներ արեցին՝ նշելով, որ վերազգային կրթությունը նույնպես պետք է առաջնորդվի ԵԶՈՒ-ով, ինչպես վերջինս կիրառական է ԵԲԿՏ-ում:

Նախարարները հանդիպեցին 2010թ.-ին Բուդապեշտում և Վիեննայում սկիզբ դնելու Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին, ինչպես նախատեսվել էր առաջին հանդիպմանը 1999թ.-ին, երբ սկսվեց Բոլոնիայի գործընթացը: Այս դեպքում նախարարները գնահատեցին յուրահատուկ գործընկերությունը պետական մարմինների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ու մյուս բոլոր շահակիցների միջև, ինչպես օրինակ, գործատուները, որակի ապահովման գործակալությունները, միջազգային կազմակերպությունները և եվրոպական ինստիտուտները, որոնք այն բարեփոխումների հիմքն էին կազմում, որոնք պետք է իրականացվեին ԵԲԿՏ-ը կառուցելու համար:

2012թ.-ին Բուխարեստում կազմակերպված նախարարական գագաթնաժողովում նախարարները վերահաստատեցին որակի ապահովման կարևորությունը վստահության ձևավորման և ԵԲԿՏ-ի գրավչության վերաբերման համար: Նրանք հաշվի առան E4 խմբի հաշվետվությունը ԵԶՈՒ-ի իրականացման և կիրառման հետ կապված և խնդրեցին չորս կազմակերպություններին Միջազգային Կրթության (Educational International), Բիզնես Եվրոպա (BUSINESS EUROPE) և EQAR-ի հետ համագործակցելով աշխատել ԵԶՈՒ-ի վերամշակման համար: Միևնույն ժամանակ նախարարները ողջունեցին EQAR-ի արտաքին գնահատումը և քաջալերեցին որակի ապահովման գործակալություններին դիմելու գրանցման համար: Ուսանողը EQAR-ի գնահատման խմբերի անդամ էր:

Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների վերջին հանդիպումը 2015թ.-ին Երևանում էր, որտեղ նոր նախաձեռնություններ եղան որակի ապահովմանը ուսանողների մասնակցության հետ կապված: Նախարարները հաստատեցին, որ «իրենք ակտիվորեն կներգրավեն ուսանողներին որպես ակադեմիական հանրության լիիրավ անդամ, ինչպես նաև այլ շահակիցներին որակի ապահովման և կրթական ծրագրերի մշակման գործընթացում»: Սա 2003թ.-ին եղած նախաձեռնությունների կարևոր վերաթևարում էր և երաշխավորում է, որ ուսանողները կշարունակեն կարևոր դեր խաղալ ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացներում առաջիկա տարիներին: Ավելին, նախարարները առավել քան երբեք արժևորեցին ուսանողների մասնակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանը. «մենք կաջակցենք և կպաշտպանենք ուսանողներին ու պրոֆեսորադասախոսական անձնակազմին իրենց իրավունքները կիրառելու ակադեմիական ազատության համար և կապահովենք նրանց ներկայացվածությունը որպես լիարժեք գործընկերներ բարձրագույն ուսումնական անկախ հաստատությունների կառավարմանը»: Եվրոպական չափանիշների և ուղենիշների (ԵԶՈՒ) վերանայված տարբերակը ընդունվեց նախարարների կողմից՝ հետևելով նախորդ նախարարական գագաթնաժողովում նրանց կողմից առաջադրված յոթ կազմակերպությունների առաջարկին՝ ներառյալ Եվրոպական ուսանողական միությունը: Վերանայված ԵԶՈՒ-ն պահպանեց որակի ապահովմանը ուսանողների մասնակցության հետ կապված երաշխավորությունները և շեշտեց դասավանդման, ուսումնառության և գնահատման որակի ապահովման ժամանակ առավել ուսանողականորեն մոտեցումը: Համատեղ ծրագրերի որակի ապահովման եվրոպական մոտեցման հետ կապված մի փաստաթուղթ ևս ընդունվեց:

Եթե նույնիսկ որակի ապահովման համակարգը լայնորեն տարբերվում է ԵԲԿՏ-ում, և կան տարբեր մոտեցումներ այն հարցի շուրջ, թե ինչ է նշանակում բարձրագույն կրթության որակ և ինչպես է զարգանում որակի ապահովումը վերջին տարիներին, ԵԲԿՏ-ի տարբեր երկրներից բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարները դեռևս Բոլոնիայի գործընթացի վաղ փուլերից համաձայնեցին, որ ուսանողները կարևոր դեր են խաղում բարձրագույն կրթության զարգացման գործում և պետք է լինեն լիարժեք գործընկեր որակի ապահովման գործընթացներում բոլոր մակարդակներում: Այս նախաձեռնությունը պահպանվեց ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացում արված բոլոր գործողություններում և բարեփոխումներում, որտեղ ուսանողները Եվրոպական ուսանողական միության միջոցով ներգրավված էին որպես լիարժեք գործընկերներ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ

Չնայած բազմաթիվ նախաձեռնություններ և երաշխավորություններ տրվեցին նախարարների կողմից Բոլոնիայի գործընթացի շրջանակներում և հետագայում ԵԲԿՏ-ում, սրանք ոչ միշտ էին արտահայտվում արդյունավետ ակտիվ չափումներով: Նախարարներն իրենք բազմիցս ընդունել են նախարարական կոմյունիկներում, որ բարեփոխումները նույնիսկ ԵԲԿՏ-ի երկրներում պատշաճ մակարդակով չեն իրականացվում, և, մասնավորապես՝ որակի ապահովմանը ուսանողների մասնակցության խնդրի հետ կապված, դեռևս առաջընթաց է անհրաժեշտ:

Մյուս կողմից՝ երբեմն պարզ կարգավորումները բավարար չեն ապահովելու գործընթացի արդյունավետ իրականացումը, և, բացի այդ, կան այլ գործոններ, որոնք կարող են նպաստել բարեփոխումների հաջողությանը կամ ձախողմանը:

Այս ամենը հաշվի առնելով Բոլոնիայի գործընթացի շրջանակներում որակի ապահովմանը ուսանողների մասնակցության իրատեսական պատկեր ունենալու համար, մենք ուսումնասիրեցինք Եվրոպական ուսանողական միության կողմից կատարված հետազոտությունը՝ «Բոլոնիան ուսանողների աչքերով 2015թ.», որն արտահայտում է 39 երկրների ուսանողական ազգային միությունների տեսակետը՝ Նորվեգիայից մինչև Մալթա, Իսլանդիայից Հայաստան կապված Բոլոնիայի գործընթացի իրականացման արդյունավետության հետ:

Եվրոպական մակարդակում ուսանողների ներկայացուցիչների կողմից արված հետազոտության միայն մեկ հարցվող նշեց, որ ուսանողները չեն մասնակցում իրենց երկրում Բելառուսում, որակի ներքին ապահովման գործընթացներին: Հետազոտությունը ցույց տվեց, որ ուսանողական ազգային միությունների էական մասը (38-ից 26-ը) պատասխանել են, որ ուսանողները պաշտոնապես ներգրավված են որպես լիիրավ անդամներ ներքին գնահատման գործընթացներում:

Հարցվող ուսանողների մեծամասնությունը (38-ից 29-ը) ներգրավված են տեղեկատվություն և հետադարձ կապ տրամադրելու գործընթացում (հարցաթերթեր լրացնել, թիրախային խմբերի անդամ լինել և այլն), մինչդեռ որոշները (հարցվող միությունների մեկ երրորդը) ասել են, որ ուսանողները ակտիվորեն ներգրավված են նաև հետամուտ գործընթացներում, և միայն փոքր մասն են նշել, որ ուսանողները ներգրավված են խորհրդատվությունների մշակման և իրականացման գործընթացում:

Ուսանողական ազգային միությունների մեծամասնությունը նշել է, որ ուսանողները ներգրավված են որակի արտաքին ապահովմանը մի շարք տարբեր ձևերով, մեծամասամբ որպես լիիրավ անդամներ գնահատման խմբում (ինչպես նշել են 29 միություններ): Ինչևէ, միայն երեք երկրների դեպքում ուսանողները իրավունք չունեն նախագահի կամ քարտուղարի պաշտոն զբաղեցնել արտաքին գնահատման խմբում: Դժբախտաբար, չորս երկրների ուսանողական միություններ (Բելառուս, Լյուքսեմբուրգ, Իտալիա և Մալթա) նշել են, որ ուսանողները ամբողջությամբ դուրս են մղված որակի արտաքին ապահովման գործընթացներից:

ԵՄ-ի կողմից իրականացված հարցման համաձայն Բելառուսը, Բուլղարիան, Լատվիան և Լյուքսեմբուրգը չունեն որակի ապահովման գործակալություններ: Մյուս հարցվող երկրներում 34-ից 28 ուսանողական ազգային միություններ նշել են, որ ուսանողներն ակտիվ մասնակցություն ունեն որակի ապահովման գործակալությունների կառավարման իրենց երկրներում: Դեպքերի մեծ մասում (22 միություններ) ուսանողները գործակալությունների կառավարման մարմիններում մասնակցում են որպես լիիրավ անդամներ (որոշումների կայացում), մինչդեռ մյուսները ներգրավված են միայն որպես խորհրդատվական մարմինների անդամներ: Հետազոտությունը ցույց է տալիս նաև, որ ազգային ուսանողական միությունների մեծամասնությունը (38-ից 22-ը) խորհրդատվություն են ստանում իրենց երկրների կառավարությունների կողմից՝ կապված ԵԲԿՏ-ում որակի ապահովման հարցերի հետ:

Որակի ապահովմանը ուսանողների մասնակցության կարևոր օրինակ է Որակի ապահովման ուսանող-փորձագետների բազան, որը ուսանողների խումբ է, ովքեր որակի ապահովման գործընթացների վերապատրաստում են անցել: Ուսանողական ազգային 21 միություններ պատասխանել են, որ այսպիսի բազաներ, որոնք, սակայն, գործում են տարբեր կերպ, կան նաև իրենց երկրներում: Ուժ դեպքում այս բազաները անկախ ձևով կառավարվում են ուսանողական ազգային միությունների կողմից, այլ ուժ դեպքում կառավարվում են որակի ապահովման ազգային գործակալությունների կողմից և մնացյալ հինգ երկրներում՝ կողմից որակի ապահովման գործակալությունների, կ՝ ուսանողական ազգային միությունների կողմից: Երկրների ճնշող մեծամասնությունում (21-ից 20-ում) առկա բազաները լայնորեն օգտագործվում են ՈԱ գործակալությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ կառույցների կողմից որակի ապահովման գնահատման նպատակով: Եվրոպական մակարդակում նույնպես կա այսպիսի բազա, որը կառավարվում, վերապատրաստվում և մշտադիտարկման է ենթարկվում Եվրոպական ուսանողական միության կողմից:

Հետազոտությունը անդրադարձել է նաև ուսանողների կողմից այն խոչընդոտների ըմբռնմանը, որոնց նրանք բախվում են ազգային մակարդակում որակի ապահովման իրենց մասնակցության ժամանակ, և, դժբախտաբար, ուսանողական ազգային միությունները սահմանել են այդպիսի էական թվով խոչընդոտներ, մասնավորապես՝ արմատական կամ տեղական մակարդակով: Հիմնական խոչընդոտը, որը նրանք նշում են, ներառում է անբավարար իրազեկվածությունը և վերապատրաստումը, մեծածավալ բյուրոկրատիան և որակի ապահովման գործընթացում ուսանողին որպես հավասար գործընկեր չդիտարկելը: Այլ խոչընդոտներ, որոնք մատնանշվել են, որակի ապահովման ուսանողներին անօգտակար վերաբերվելն է՝ պայմանավորված այն դեպքերի պակասով, որոնք ի հայտ են եկել գնահատումների արդյունքում, գործընթացների թափանցիկության պակասով և թույլ հետամուտ և մշտադիտարկման գործընթացներով:

Եվրոպական ուսանողական միությունը որոշ խորհուրդներ է տվել որակի ապահովմանը ուսանողների մասնակցության բարելավման նպատակով: Ուսանողների ներկայացուցիչները առաջարկել են, որ ուսանողները պետք է ներգրավվեն որակի ապահովման անհշվող գործընթացներում, հանդիպումներում և/կամ ուղևորություններում և որակի ներքին ապահովումը պետք է ընդլայնվի ապահովելու համար հաստատության կրթական գործունեության գնահատումն ու մշտադիտարկումը: Նրանք նշել են, որ գնահատման հաշվետվությունները պետք է հասանելի լինեն ուսանողների, այլ շահակիցների և ընդհանրապես հանրության համար և պետք է ներառեն այն խորհրդատվությունները, որոնց պետք է հետևի ինստիտուտը, որն ունի հետագա

առաջընթացի մշտադիտարկման դեր: Մեկ այլ կարևոր խորհրդատվությունն այն է, որ ուսանողները պետք է համարվեն որպես հավասար անդամներ որակի ապահովման գործընթացում և պետք է ներկայացվեն բոլոր որոշումների կայացման գործընթացներում համալսարանի ներսում և բարձրագույն կրթության համակարգում որպես մեկ ամբողջություն:

Մատնանշվել է, որ որակի ապահովմանը ուսանողների մասնակցության նշանակալի լինելը բոլոր մակարդակներում որոշ չափով աճել է վերջին տարիներին, սակայն որակի ապահովումը պետք է շարունակի լինել առաջնահերթություն բարձրագույն կրթության համակարգի համար, պետք է լինի ավելի թափանցիկ և պակաս բյուրոկրատական, որպեսզի ապահովի ուսանողների կարիքների և ակնկալիքների լսելի լինելը և այն, որ ուսանողները համարվեն հավասար և իրավասու գործընկերներ, ովքեր կարող են յուրահատուկ ներդրում և մոտեցում ունենալ որակի ապահովման գործընթացներում:

Internal QA

-total

Table of 100
as per the
... by ...
... and ...
...

Self evaluation
... made ...
... by ...

Student organiza-
tions are in charge
in collecting the
feedback on ...
... on different
...

Student organiza-
tions publish annual
reports on the imple-
mentation of stu-
dent statute

Feedback from
all stakeholders
...
...
...
...
...

QA starting
FROM early
beginning
...
...
...

High student
motivation on
involving in QA
Transparency
of QA

Direct
Bond to Governor
Direct
complying
to Minister
Good level of
cooperation

...

...

...

...

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Գրականության ուսումնասիրությունից հավաքված տվյալները (ամբողջ հաշվետվությամբ ներկայացված հավելվածներում) այստեղ կազմավորված են քննարկված են հետևյալ հիմնական ասպեկտների շուրջ.

- ❖ Պաշտոնական կարգավորումների և արտաքին ՈԱ գործակալությունների առկայություն
- ❖ ՈԱ գործակալությունների բնութագրիչները (ինքնուրույնություն, անդամություն, գործունեության շրջանակ)
- ❖ Ուսանողների մասնակցությունը ՈԱ գործընթացներին և ընթացակարգերին (ՈՆԱ, ՈԱԱ):

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՈԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բոլոր երկրները, որոնք վերլուծվել են ոլորտային նյութերի ուսումնասիրության համար, ցույց են տվել օրենսդրական փորձեր որակի հայեցակարգի վրա կենտրոնացնելու տարբեր պատմություններով և տարբեր ուղղորդված ուսանողների դերին և ներգրավվածությանը բարձրագույն ուսումնական հաստատություններում ՈԱ բարելավմանը: Ուսանողների ներգրավվածությունը կարող է լինել և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ մեխանիզմներով:

Ինչպես կտեսնենք պարբերություններում, նվիրված ուսանողների ներգրավվածությանը, երկրների մեծ մասը հիմնվում է կարգավորումների վրա, որոնք սահմանում են ՈԱ մեջ ուսանողների մասնակցության մակարդակը: Որոշ դեպքերում կարգավորումները սահմանվում են ազգային/տարածաշրջանային գործակալությունների կողմից մինչդեռ այլ դեպքերում նրանք արտահայտվում են օրենսդրական համակարգում:

Մենք այստեղ կհամադրենք ՄԹ Բարձրագույն կրթության Որակի Օրենսգրքը՝ մաս Բ. Ակադեմիական որակի ապահովում և բարելավում, գլուխ Բ5 «ուսանողների մասնակցություն», որը հրատարակվել է 2012թ. հունիսին և կապված է ուսումնառության բակալավրիական և հետբուհական մակարդակի հետ:⁵

Գլուխը կենտրոնացած է երկու իրար հետ փոխկապակցված ասպեկտների վրա.

- ❖ ԲԿ տրամադրողների դերը ուսանողների ակտիվ մասնակցության բարելավման մեջ (համապատասխան ընթացակարգերի իրականացումը և միջավայրը)
- ❖ «գործընկերության» հայեցակարգը, որը միավորում է ուսանողներին և ակադեմիական անձնակազմին ՈԱ ընդհանուր տեսլականի/առաքելության մեջ (օրինակ՝ փաստերի վրա հիմնված քննարկումների կազմակերպում)

Ուսանողների մասնակցությունը ասելով նկատի ունենք ուսանողների ակտիվ դերը, այն է՝ հնարավորություն ունենալ մասնակցելու նոր կրթական ծրագրերի մշակմանը, հաստատման քաղերին և ծրագրի պարբերական գնահատումներին:

Այդ առաջադրանքները կարող են համալրվել ուսանողների ծայրի հավաքման համապատասխան մեխանիզմներով/ընթացակարգերով, ինչպես նաև շարունակական վերապատրաստումների կազմակերպմամբ և աջակցման գործողություններով, որպեսզի պատրաստեն ուսանողներին որակի ապահովման և բարելավման գործում իրենց ակտիվ դերի իրագործման համար:

Ինչպես զեկուցվում է գլխում, ուսանողների ներգրավման մեխանիզմները/ընթացակարգերը կարող են ներառել. Հարցաթերթեր, հետազոտական աշխատանքներում ուսանողների ներկայացուցչական կառույցներ, հանձնաժողովներում ուսանողների անդամակցություն, ուսանողների խորհրդատվական իրադարձություններ,

REFERENCE

5 ՄԹ Բարձրագույն կրթության որակի Օրենսգրք – Մաս Բ. Ակադեմիական որակի ապահովում և բարելավում <http://www.qaa.ac.uk/assuring-standards-and-quality/the-quality-code/quality-code-part-b>

ուսանողների ներգրավում նոր նախագծերին, ուսանողների երկխոսություն որոշում կայացնողների հետ, առցանց քննարկման ֆորումներ, ֆորմալ որակի գործընթացներ: Այսպիսով, անհրաժեշտ է ուսանողների իրազեկել իրենց պատասխանատվության մասին և ձեռնարկել համապատասխան վերապատրաստումներ՝ օգնելու ուսանողներին «օգտակար հետադարձ կապ ապահովելու համար»:

Հետաքրքիր ասպեկտ է ուսանողների մասնակցության արժեքների հանաչման վրա կենտրոնացումը և ուշադրությունը նրա ապահովմանը, որ ուսանողները իրենց ակտիվ ներգրավման համար գնահատված զգան:

Ինչպես նշվել է նախկինում, կան երկրներ, որտեղ ՈԱ-ը և ուսանողների մասնակցությունը սահմանված չեն ազգային օրենքներով կամ կարգավորմամբ և չափանիշներ են սահմանված անկախ գործակալությունների կողմից, որոնց ներկայությունը անկասկած կարևոր առաջընթաց քայլ է դեպի որակի մշակույթը և բարելավումը:

Սակայն ՈԱ արտաքին գործակալությունների սոսկ ներկայությունը (տե՛ս աղյուսակ 1) չի ապահովում բարձրագույն կրթության մեջ որակի գործընթացների հաջող զարգացումը: Բոլոր երկրները, որոնք ներառված էին գրականության ուսումնասիրության մեջ, ունեն հիմնված անկախ ՈԱ գործակալություններ (բացի Բելառուսից, որտեղ պարզ չէ, թե Կրթության նախարարությունը ինչպես է կառավարում որակի գործընթացներն ու ընթացակարգերը), սակայն նրանց գործունեությունը և նրանց ազդեցությունը ՈԱ-ը ցույց է տալիս բավականին տարբեր արդյունքներ (տե՛ս հավելվածում երկրների տվյալները): Ինչպես նշված է վերոնշյալ աղյուսակում, Հայաստանը և Եվրոպական հարևանության երկրները ունեն հիմնադրված գործակալություններ վերջին տարիներին և նրանց կազմակերպումը դեռևս ընթացքի մեջ է (Ուկրաինան կունենա գործող գործակալություն 2015թ. սեպտեմբերի 1-ից):

Աղյուսակ 1 Ընտրված երկրներում ՈԱ գործակալություններ և համապատասխան օրենքներ

Երկիր	Ազգային օրենքներ (ընտրություն)	Ազգային մակարդակում գնահատող գործակալություններ
Պորտուգալիա	Բարձրագույն կրթության գնահատման ակտ (1994 թ.)	✓ A3ES (1998թ.-ից 2006թ.-ը CNAVES)
Ռումինիա	Ազգային կրթության օրենք Թիվ 1 (2011 թ.)	✓ ARACIS (2005թ.)
Սերբիա	Բարձրագույն կրթության մասին օրենք (2005 թ.)	✓ CAQA (2006թ.)
Իսպանիա	Համալսարանների որակի ազգային պլան (PNECU) 1996-1998-1999, 2000	✓ ANECA (2002 թ.)
ՄԹ	ՄԹ բարձրագույն կրթության որակի (այն ծածկում է բոլոր չորս ազգերը ՄԹ-ում՝ Անգլիա, Հունաստանի Իոնիական, Շոտլանդիա, Ուելս) (2013 թ.)	✓ BAC (1984 թ.) ✓ QAA (1997 թ.)
Հայաստան	Հավատարմագրման մասին օրենքն ընդունվել է Ազգային ժողովի կողմից, որը սահմանում է կանոններն ու կարգավորումները ազգային հավատարմագրման համակարգում (2012 թ.)	✓ ANQA (2008 թ.)
Բելառուս	Կրթության մասին Բելառուսի Հանրապետության Օրենսգիրք (2011 թ.)	Բելառուսի Հանրապետության Կրթության նախարարություն
Վրաստան	Բարձրագույն կրթության մասին վրացական օրենքը: Կրթության Որակի բարելավման մասին վրացական օրենքը, «Կրթության որակի զարգացման» օրենք (2010 թ.)	✓ EQE (LEPL-ի փոխարեն)(2010 թ.)
Մոլդովա	Մոլդովայի Հանրապետության Կրթության Օրենսգիրք (2010)	✓ ANACIP (2015 թ.) (գերմանական գործակալություն AQAS-ը և ռումինական գործակալություն ARACIS-ը նույնպես գործում են Մոլդովային)
Ուկրաինա	Ուկրաինայի օրենքը բարձրագույն կրթության մասին (2014)	Բարձրագույն կրթության նոր օրենքին համապատասխան, Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային գործակալությունը պետք է սկսի աշխատել Ուկրաինայում 2015թ. սեպտեմբերի 1-ից:

ՈԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ՈԱ գործակալությունները երկրների մեծ մասում առաջատար դեր են խաղում, և նրանց գործունեության ոլորտը հաճախ անցնում է ազգային սահմաններից և ներառում միջազգային նախաձեռնությունները: ՈԱ գործակալությունների բնութագրերը, որոնք հիմնվել են նշված երկրներում, կարող են ամփոփվել հետևյալ ասպեկտների շուրջ (տե՛ս աղյուսակ 2)։

- Օրինական կարգավիճակ,
- Ներգրավվածությունը որպես ENQA-ի անդամ,
- Թիրախային գործունեությունը,
- Գործունեության մակարդակը,
- Այդ գործողությունների ֆորմալացման ձևեր:

Ինքնուրույնությունը կարող է լինել ՈԱ համար համապատասխան հարց և այն ENQA-ի կողմից սահմանված չափանիշներից մեկն է, երբ գնահատում են գործակալության դիմումը լիիրավ անդամակցության համար:

ENQA-ում մասնակցությունը որպես լիիրավ անդամ կարող է ընդունվել որպես չափանիշ՝ գործակալության կողմից կիրառվող ընթացակարգերի և որակի չափումների արդյունավետության գնահատման համար և պարզաբանելու, թե ինչ չափով են նրանք բավարարում եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափանիշներին ու ուղենիշներին (եԶՈԻ): Անդամակցության չափանիշները, մասնավորապես, համապատասխանում են այս հետազոտությանը, քանի որ ուսանողների մասնակցությունը հստակ նշված է «ENQA-ի անդամության չափանիշներ» փաստաթղթի 5-րդ և 6-րդ չափանիշներում:

Գործակալությունները, փաստորեն, պետք է կանոնավոր կերպով իրականացնեն որակի արտաքին ապահովման գործողություններ (ինստիտուցիոնալ կամ ծրագրային մակարդակում) և այս գործընթացում ցուցաբերեն իրենց «անկախությունը», այն է՝ նրանք չպետք է ազդեցություն կրեն բարձրագույն կրթական հաստատությունների, նախարարությունների կամ այլ շահակիցների կողմից:

Սակայն նշվում է, որ «բարձրագույն կրթության համապատասխան շահակիցները, մասնավորապես, ուսանողները/ ուսումնառողները, խորհրդակցում են որակի ապահովման գործընթացում»: Գործակալությունը կարող է, ինչպես հարկն է, ներառել ուսանողների իր արտաքին գնահատման փորձագիտական խմբում:

Թիրախային գործողությունների և ՈԱ չափումների մակարդակի վերաբերյալ գործակալությունները ցույց են տալիս այլընտրանքների բազմազանություն՝ կենտրոնացած հիմնականում ՈՆԱ, ՈԱԱ, ինքնագնահատման, ԲԿ տրամադրողների հավատարմագրման և ուսանողների վերապատրաստման դասընթացների վրա:

Գնահատող գործակալություն
Օրինական կարգավիճակ
ENQA-ի անդամակցություն
Թիրախային գործունեություն
Որակի գնահատման մակարդակներ
Գնահատման և հավատարմագրման գործընթացների ֆորմալացման ձևերը
A3ES (Պորտուգալիա)

Ազգային մասնավոր հիմնադրամ, անկախ հաստատություն	Լրիվ անդամակցություն (2014թ.)	Հավատարմագրում է ն բարձրագույն կրթական հաստատություններին, ն՝ ծրագրեր	Որակի գնահատման 4 մակարդակ. ներքին որակի ապահովում, ինքնագնահատում, արտաքին գնահատում, հավատարմագրում և ինստիտուցիոնալ աուդիտ	SS-ի վրա հիմնված պատճիռով.	նոր ծրագրերի դիմումները, ինքնավերլուծության հաշվետվությունը և արտաքին գնահատման հաշվետվությունը այլ փաստաթղթերի հետ են ուղարկվում և վերլուծվում առցանց:
ANECA (Իսպանիա)	Ազգային	Հիմնադիր անդամ (2003 թ.), Լիիրավ անդամակցություն (2004 թ.)	Հավատարմագրում է ն բարձրագույն կրթության աստիճաններ, ն՝ ծրագրեր, ն՝ անձնակազմին	Ծրագրերի գնահատում, վերապատրաստումների առաջնություն և ուսանողներին, այսպես կոչված, «որակի մշակույթ» մոտեցումների ներկայացում	Գործակալությունը հրատարակում է տարեկան գործողությունների հաշվետվություն, որը ներառում է այն նպատակները, որոնցով առաջնորդվել է ANECA-ն ամբողջ տարվա ընթացքում, ինչպես նաև գործակալության պատասխանատվության շրջանակներում իրականացված ինստիտուցիոնալ և ծրագրային գնահատման գործընթացները
AAC-DEVA (Իսպանիա)	Անդալուզական գործակալություն. պետության կողմից կառավարվող պետական հաստատություն որպես իրավաբանական անձ	Լիիրավ անդամակցություն (2000 թ.)	Գնահատում և հավատարմագրում է Անդալուզյան Գիտելիքի Համակարգում գործող համալսարանները, ծրագրերը, դասավանդող անձնակազմը և հետազոտական գործունեությունը	Որակի և հետազոտության գերազանցության համակարգի, վերահսկման և հետամուտ գործողությունների իրականացման մշակում	Հաշվետվությունները գնահատվում են Անդալուզյան տարածաշրջանային համալսարանի գործող անդամներից ձևավորված հանձնաժողովի կողմից և ամբողջ տեղեկատվությունը (բացի անձնական տվյալներից) առկա է լինում առցանց
SUCYL (Իսպանիա)	Այն անկախ է կառավարությունից, կառավարվում է տնօրենների խորհրդի կողմից, արտաքին գնահատման մարմին Կաստիլյա Լեոնի համալսարանների համակարգի համար	Լիիրավ անդամակցություն (2010 թ.)	Անկախ տարածաշրջաններում գործող համալսարանների որակի ապահովման ծրագրերի մշակում, ինչպես նաև գնահատման, հավատարմագրման և Կաստիլյա Լեոնի անկախ տարածաշրջաններում գործող համալսարանների ու բուհերի սերտիֆիկացման գործընթացում համագործակցություն ՆԲԿՏ-ի համատեքստում	Գնահատում, սերտիֆիկացում և հավատարմագրում կապված համալսարանական համակարգի որակի հետ և մասնավորապես դասավանդող անձնակազմի, կրթական աստիճանների, հետազոտության, ինչպես նաև ինստիտուցիոնալ որակի գնահատում	Վերջնական հաշվետվությունները ներառում են բարելավման խորհրդատվություններ, որոնք պարբերաբար գնահատվում են: Երբ գնահատումներն ավարտվում են, վերջնական հաշվետվությունները հրապարակվում են կայքում, և գործընթացը վերանայվում է հետագա բարելավման նպատակով
ACSUG (Իսպանիա)	Այն անկախ է, օրենքով հիմնված է որպես կոնսորցիում Գալիցիայի Տեղական կառավարության և գալիցիական երեք համալսարանների միջև, Կորունյա (UDC), Սանտիագո (USC) և Վիգո (UVI).	Լիիրավ անդամակցություն (2009 թ.)	Այն գործընթացների գնահատում, սերտիֆիկացում և հավատարմագրում, որոնք իրականացվում են Գալիցիան համալսարանների կողմից, հատկապես կապված դասավանդման, հետազոտության, գիտելիքի փոխանցման և կառավարման հետ:	Ինստիտուտների գնահատում, սերտիֆիկացում և հավատարմագրում (ծրագրեր, ծառայություններ, դասավանդման գործընթացի գնահատում, կենտրոնների որակի ներքին ապահովման համակարգ և այլ գործընթացներ). կայուն աշակցություն Գալիցիան համալսարանների, այլ հաստատությունների և սոցիալական գործակալությունների միջև տեղեկատվության փոխանցմանը	Գնահատման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է գնահատման համար դիմողի ինքնավերլուծության գործընթացի ավարտից և ACSUG-ի կողմից նշանակված վերանայման խմբի կողմից արտաքին գնահատումից հետո

Ազգային մասնավոր հիմնադրամ, անկախ Հաստատություն	Լրիվ անդամակցություն (2014թ.)	Հավատարմագրում է և բարձրագույն կրթական հաստատություններին, և ծրագրեր	Որակի գնահատման 4 մակարդակ. ներքին որակի ապահովում, ինքնազնադատում, արտաքին գնահատում, հավատարմագրում և ինստիտուցիոնալ աուդիտ	SS-ի վրա հիմնված պատճիռք.	Նոր ծրագրերի դիմումները, ինքնավերլուծության հաշվետվությունը և արտաքին գնահատման հաշվետվությունը այլ փաստաթղթերի հետ են ուղարկվում և վերլուծվում աուդանց:
AQU (Իսպանիա)	Գործակալությունը անկախ է և ֆինանսավորվում է Կատալոնիայի կառավարության կողմից	Լիիրավ անդամակցություն (2000 թ.)	Կատալոնիայի համալսարանների և բարձրագույն կրթական ինստիտուտների գնահատում, հավատարմագրում և սերտիֆիկացում (կրթական ծրագրեր, ֆակուլտետներ և դպրոցներ, ծառայություններ և ինստիտուտներ)	Վավերացման շրջանակի իրականացում (նախապես գնահատում), մշտադիտարկում, մոդիֆիկացում և հավատարմագրում: Ակադեմիական անձնակազմի նախընտրական գնահատում, դասավանդման անհատական արժանիքների գնահատում, հետազոտության և Կատալոնիական համալսարանների դասավանդող և հետազոտող անձնակազմի կառավարում	Տեղեկատվությունը բացակայում է
Unibasq (Իսպանիա)	Պետական մարմին է մասնավոր օրենքներով ամրագրված, և գործում է Բասկյան կառավարության ղեկավարման ներքին աուդիթ, որը պատասխանատու է համալսարանների համար	Լիիրավ անդամակցություն (2014 թ.)	Գնահատում է Բասկյան երկրի համալսարանների կրթական ծրագրերը, ֆակուլտետները և ինստիտուտները:	Սահմանում է գործունեության յուրաքանչյուր ոլորտի գնահատման գործընթացը, գնահատում է ակադեմիական անձնակազմի անհատական ներդրումը լրացուցիչ վարձատրության համար Բասկյան պետական համալսարաններում (UPV/EHU), ակադեմիական անձնակազմի նախընտրական գնահատում	Գնահատումն իրականացվում է արտաքին փորձագետների խմբի կողմից
FCM (Իսպանիա)	Շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրված է Մադրիդի տեղական կառավարության նախաձեռնությամբ	Լիիրավ անդամակցություն (2015 թ.)	Մադրիդի համալսարանների կրթական ծրագրերի, ֆակուլտետների և ինստիտուցիոնալ ծրագրերի գնահատում:	Պետական բարձրագույն կրթական ծառայության գնահատում, հավատարմագրում և կատարողականի չափում	Վերջնական հաշվետվության հաստատումը Գնահատման և հավատարմագրման հանձնաժողովի կողմից իրականացվում է դիմողի կողմից մշակված ինքնավերլուծության և փորձագետների կողմից այցելության հիման վրա
ARACIS (Ռումինիա)	Այն օրինական, ֆինանսապես անկախ և ինքնուրույն պետական հաստատություն է, որը գործում է ազգային մակարդակում	Լիիրավ անդամակցություն (2009 թ.)	Տեղեկատվություն առկա չէ	Գնահատում (շարունակական ձևով և ըստ պահանջի), վերանայում, աուդիտ և հավատարմագրում	Տեղեկատվությունը բացակայում է
CAQA (Սերբիա)	Այն Ազգային կրթական խորհրդի անկախ մարմին է: Այն միակ պաշտոնապես հանձնաժողովն է, որը պատասխանատու է Սերբիայի բարձրագույն կրթական հաստատությունների որակի արտաքին ապահովման համար	Լիիրավ անդամակցություն (2013թ.)	Բարձրագույն կրթական հաստատությունների և կրթական ծրագրերի հավատարմագրում	Հավատարմագրման և որակի ապահովման չափանիշների մշակում, ինստիտուտների և կրթական ծրագրերի որակի ապահովմանը աջակցություն, բոլոր բուհերի և կրթական ծրագրերի որակի արտաքին ապահովմանը անցում հավատարմագրման և գնահատման միջոցով	Իրականացվում է գործընկերային գնահատում, փորձագիտական այցեր, հաշվետվությունների հրապարակում

Ազգային մասնավոր հիմնադրամ, անկախ Հաստատություն	Լրիվ անդամակցություն (2014թ.)	Հավատարմագրում է և՛ բարձրագույն կրթական հաստատություններին, և՛ ծրագրեր	Որակի գնահատման 4 մակարդակ. ներքին որակի ապահովում, ինքնագնահատում, արտաքին գնահատում, հավատարմագրում և ինստիտուցիոնալ աուդիտ	SS-ի վրա հիմնված պատճիռ	Նոր ծրագրերի դիմումները, ինքնավերլուծության հաշվետվությունը և արտաքին գնահատման հաշվետվությունը այլ փաստաթղթերի հետ են ուղարկվում և վերլուծվում աուդանց:
---	-------------------------------	--	---	-------------------------	--

QAA (ՄԹ)	Այն անկախ մարմին է, կազմակերպություն, որը սահմանափակված է երաշխիքներով և գրանցված նախատվությամբ	Լիիրավ անդամակցություն (2015թ.)	Այն ապահովում է չափանիշների կիրառումը և որակի բարելավումը ՄԹ բարձրագույն կրթության մեջ: Այն զեկուցում է կառավարությանը չափանիշների և որակի վերաբերյալ	Մասնավոր համալսարանների գնահատում, ինչպես պահանջվում է ՄԹ Սահմանային գործակալության կողմից, այն ինստիտուտների դիմումների դիտարկում, որոնք ցանկանում են ձեռք բերել կրթական աստիճանների շնորհման իրավունք և համալսարանի տիտղոս: QAA-ը կանոնակարգում է նաև բարձրագույն կրթության դիպլոմի մատչելիությունը	Գործընկերային գնահատում հիմնված ՄԹ Բարձրագույն կրթության որակի օրենսգրքի ակնկալիքների վրա: Համալսարանները և այլ աստիճան շնորհող մարմինները գնահատվում են երեք գործընկերային գնահատման մեթոդներով. ինստիտուցիոնալ գնահատում (Անգլիա և Հյուսիսային Իռլանդիա); ինստիտուցիոնալ գնահատում (Ուելս), բարելավմամբ առաջնորդվող ինստիտուցիոնալ գնահատում (Շոտլանդիա)
----------	---	---------------------------------	---	---	--

BAC (ՄԹ)	Անկախ կազմակերպություն է, որը հիմնված է ՄԹ-ում որպես 16 տարեկանից բարձր անձանց տրամադրվող կրթության հավատարմագրող ազգային անկախ մարմին: Այն շահույթ չհետապնդող, բարեգործական կազմակերպություն է և ինքնաֆինանսավորվում է հավատարմագրման վճարների միջոցով: Այն չի ստանում պետական ֆինանսավորում:	Լիիրավ անդամակցություն (2000 թ.)	Հավատարմագրող հաստատություն	Որակի ապահովման և հավատարմագրման գործընթացի բոլոր ասպեկտների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում	Փաստաթղթավորման ստուգման փորձում և ստուգում: Ինստիտուտները ենթակա են կանոնավոր մշտադիտարկման, միջանկյալ այցելությունների և տարեկան հաշվետվությունների պատրաստման
----------	--	----------------------------------	-----------------------------	--	--

ANACIP (Մոլդովա)	Ազգային գործակալություն, որը հաստատված է կառավարության որոշմամբ, որի միջանկյալ կառավարման խորհուրդը ընտրված է կրթության նախարարության, էկոնոմիկայի նախարարության և Ռումինիայի Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալության (ARACIS) կողմից	Ոչ	Հավատարմագրում է և՛ բուհերին, և՛ ծրագրեր	Տեխնիկական, նախնական և միջին մասնագիտական դպրոցների, համալսարանների և վերապատրաստման ինստիտուտների ծրագրերի գնահատում, ինստիտուցիոնալ հավատարմագրում, որակի ապահովման պետական քաղաքականության իրականացում, հավատարմագրման չափանիշների և որակի ապահովման գնահատման գործընթացում կիրառվող կատարողականի ցուցիչների պարբերական վերանայում:	Տեղեկատվությունը բացակայում է
------------------	--	----	--	--	-------------------------------

EQE (Վրաստան)	Կրթության հավատարմագրման ազգային կենտրոնը հիմնվել է Վրաստանի Կրթության և գիտության նախարարի հրամանով	Ոչ	Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման իրականացում Վրաստանի բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական և ընդհանուր կրթական հաստատություններում	Վրաստանում թողարկված կրթական փաստաթղթերի վավերացում, որակի ապահովման մեխանիզմների աուդիտում, ինստիտուտների և չափանիշների համապատասխանության գնահատում, ինքնագնահատման սերտիֆիկացում	- Հավատարմագրման համար դիմումի ինքնագնահատում - Հավատարմագրման փորձագիտական հանձնաժողովի ստեղծում, - Հավատարմագրման այց, - Հավատարմագրման փորձագիտական հանձնաժողով, - Հավատարմագրմանն առնչվող հարցերի բանավոր լսումներ, - Վերջնական որոշման հրապարակում
---------------	--	----	---	---	---

Ազգային մասնավոր հիմնադրամ, անվախ հաստատություն	Լրիվ անդամակցություն (2014թ.)	Հավատարմագրում է և՛ բարձրագույն կրթական հաստատություններին, և՛ ծրագրեր	Որակի գնահատման 4 մակարդակ. ներքին որակի ապահովում, ինքնագնահատում, արտաքին գնահատում, հավատարմագրում և ինստիտուցիոնալ աուդիտ	SS-ի վրա հիմնված պատճիռ	Նոր ծրագրերի դիմումները, ինքնավերլուծության հաշվետվությունը և արտաքին գնահատման հաշվետվությունը այլ փաստաթղթերի հետ են ուղարկվում և վերլուծվում աուդիտի:
ANQA (Հայաստան)	Այն հիմնվել և ֆինանսավորվում է ՀՀ կառավարության կողմից, և նախատեսվում է ֆինանսավորել ձեռնարկատիրական նախաձեռնություններով: Այն կառավարվում է շահակիցների խորհրդի կողմից: Այն անվախ է Կրթության և գիտության նախարարությունից և բարձրագույն կրթության մակարդակում գործող հաստատություններից:	Ոչ	Կրթական ծրագրերի հավատարմագրում և պետական հավատարմագրման համար այդ որոշման տրամադրում Կրթության և գիտության նախարարությանը	ԲԿ հաստատությունների ակադեմիական աուդիտի անցկացում, ԲԿ հաստատությունների գնահատումը և հավատարմագրում, դրա վերաբերյալ որոշման տրամադրում Կրթության և գիտության նախարարությանը ԲԿ հաստատությունների պետական հավատարմագրման համար, ԲԿ հաստատությունների որակի ապահովման համակարգի գնահատում և խորհրդատվություն և այլն	- Արտաքին ՈԱ-ի ենթակա միավորի ինքնավերլուծություն, - Փորձագիտական խմբի կողմից մեկ փորձագիտական այց, - Առաջին երկու փուլերի արդյունքների հիման վրա որոշման կայացում և արդյունքների հրապարակում:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ և ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻՆ

Գրականության ուսումնասիրությունն ընդգծում է ՈԱ գործընթացում ուսանողներին բնորոշ տարբեր դերերը (տե՛ս աղյուսակ 3): ՈԱԱ մակարդակում ներգրավվածությունը կարող է ենթադրել սկսած «դիտորդից» մինչև ավելի ակտիվ դերեր, ինչպիսիք են «փորձագետը և շահակիցը», մինչդեռ ՈՆԱ-ում երկրների մեծ մասն օգտվում է ուսանողների «սեղեկություն հաղորդողի» դերից՝ կիրառելով տվյալների հավաքագրման գործիքներ (հարցաթերթ, թիրախային խումբ)՝ ուսումնառության ծրագրերի, միջավայրի և դասախոսական անձնակազմի մասին տվյալներ հավաքագրելու համար: Միայն քիչ թվով դեպքերում ուսանողները դիտարկվում են որպես «հավասար գործընկերներ» գիտական հանրության շրջանում նույնիսկ երբ նրանց շահերը ճանաչվում են որպես որակի բարելավմանը համահունչ:

Սա ուսանողների ֆորմալ դերի և փաստացի դերի միջև խզումներից մեկն է. մի իրավիճակ, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ որոշ դեպքերում նաև ուսանողական միություններին վրա:

Աղյուսակ 3 Աղյուսակ 3. Ուսանողների մասնակցություն ՈԱ

Երկիր	Ուսանողների մասնակցություն (Այո/Ոչ)	Ներգրավման աստիճան (դեր)	Ձևը
Պորտուգալիա	Այո. CNAVES-ում գնահատման թիմը պաշտոնապես պարտավորված է հաշվի առնելու ուսանողների ձայնը, սակայն նույնիսկ եթե նրանք պաշտոնապես ներկայացված են, նրանց գործունեության շրջանակը սահմանափակ է	Տեղեկություն հաղորդող ՈՆԱ մեջ և A3ES-ի հիմնադրման ժամանակ ուսանողների մասնակցությունը մեծապես խրախուսվեց նաև որպես արտաքին փորձագետ	ա) ինտեգրում ինքնավերլուծության փուլում. Պարտադիր մասնակցություն մանկավարժական հանդիպումներին և ուսանողական ասոցիացիաներում, բ) մասնակցություն մանկավարժական հարցումներին կապված դասախոսների և դասընթացների գնահատման հետ. Այս քաղաքականությունը է ինտեգրված է ինքնավերլուծության փուլին, գ) մասնակցություն արտաքին գնահատմանը արտաքին ընթացակարգերում հարցազրույց անցնելու միջոցով: Կառավարության հրամանով (369/2007, Հոգված 15) մասնակցությունը արտաքին գնահատմանը իրականացվում է երկու ուսանող-ներկայացուցիչների մանդատ տրամադրելով A3ES-ի խերհրդատվական խորհրդում, դ) ներգրավվածություն ուսանողական ասոցիացիաներում ներկայացուցիչների ընտրման և հավատարմագրման գործակալությունում ինտեգրման համար:

Երկիր	Ուսանողների մասնակցություն (Այո/Ոչ)	Ներգրավման աստիճան (դեր)	Ձևը
Ռումինիա	Այո	Ուսանողների ներկայացուցիչները Որակի գնահատման և ապահովման հանձնաժողովի անդամներ են սենատում և ֆակուլտետային մակարդակում	Ուսանողների կողմից դասավանդող անձնակազմի և դասավանդման/ ուսումնառության, միջավայրի գնահատումը իրականացվում է հարցաթերթի միջոցով:
Սերբիա	Այո	Ուսանողները տեղեկություն հաղորդողներ են ՈՆԱ, ընթացակարգերում, սակայն նաև ներգրավված են կառավարման և որոշումների կայացման մեջ (հավասար գործընկեր)։ Ուսանողների ներկայացուցիչները պետք է ներգրավված լինեն մասնագիտական մարմիններում, ուսանողները պետք է կազմեն մասնագիտական մարմինների առնվազն 20%-ը	Ուսանողները մասնակցում են ՈՆԱ-ը
Իսպանիա	Այո. Ուսանողների մասնակցությունը ANECA-ում աճել է մեծապես 2008–2010թթ. ընթացքում	Նախկին ծրագրերում նրանք դիտորդ անդամներ էին արտաքին գնահատման հանձնաժողովներում և հետագայում նրանք կարողացան ավելի ակտիվ դեր խաղալ որպես լիիրավ անդամներ	Նրանք մասնակցում են գործակալության խորհրդատվական խորհրդում և Որակի քառաքանակությանը ուսանողների մասնակցության աշխատանքային խմբում: Ուսանողների մասնակցությունն առկա է նաև Որակի Նշան ծրագրում իսպանական համալսարանների դոկտորական ծրագրերի համար, ՎԵՐԻՖԻԿԱ ծրագրում, ԴՈՑԵՆՏԻԱ ծրագրում և ԱՌԻԴԻՏ ծրագրում (որոնք մշակում են համալսարաններում որակի ներքին ապահովման համակարգը)
ՄԹ	Այո	ՈԱԱ-ում փորձագետ – յուրաքանչյուր գնահատող թիմում կա առնվազն մեկ ուսանող, որպես լիիրավ անդամ. Տեղեկություն հաղորդողներ – բոլոր գնահատումները ներառում են հանդիպումներ ուսանողների խմբերի, ուսանողական մարմինների ներկայացուցիչների հետ ՈՆԱ-ում Փորձագետ – կան համալսարաններ, որտեղ ուսանողները կարող են լինել որակի ապահովման համար պատասխանատու ներքին մարմինների լիիրավ անդամ, խորհրդատու գործընկերներ – կան համալսարաններ, որտեղ ուսանողների ներկայացուցչական մարմինները խորհրդակցում են որակի ներքին ապահովման համար պատասխանատու մարմինների հետ, Տեղեկություն հաղորդողներ – տրամադրում են հետադարձ կապ՝ կապված դասավանդմանը, ուսումնառությանը և ուսանողական կյանքին առնչվող տարբեր ասպեկտների հետ	ՈԱԱ-ում մասնակցություն գնահատող թիմերում, ուսանողների գրավոր ներկայացման ուղարկում արտաքին գնահատող թիմերին, արտաքին գնահատման թիմերին հետադարձ կապի տրամադրում (թիրախային խմբերի կամ հացաթերթերի լրացման միջոցով) ՈՆԱ-ում. Մասնակցություն որակի ներքին ապահովման մարմինների աշխատանքներին որպես լիարժեք կամ խորհրդատու անդամներ (օրինակ՝ մասնակցություն հանդիպումներին, աջակցություն քաղաքականություններին, հաշվետվություններին, վերլուծություններին, որոնք իրականացվում են այդ մարմինների կողմից, քվեարկություն որակի ապահովմանն առնչվող որոշումների կայացման ժամանակ և այլն), հետադարձ կապի տրամադրում տարբեր ներքին կառույցներին (օրինակ՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ, կրթական ծրագրի վերաբերյալ, յուրաքանչյուր դասախոսի կատարողականի վերաբերյալ, ուսանողների աջակցման ծառայությունների վերաբերյալ և այլն), ընդհանուր հետադարձ կապի տրամադրում բարձրագույն կրթության վերաբերյալ (Ազգային ուսանողական հարցում, հիմնական տեղեկատվական հենք), աջակցություն դասավանդման և ուսումնառության զարգացմանը (օրինակ հետադարձ կապ տրամադրելով՝ նոր ծրագրերի մշակմանը մասնակցելու միջոցով)

Երկիր	Ուսանողների մասնակցություն (Այո/Ոչ)	Ներգրավման աստիճան (դեր)	Ձևը
Հայաստան	Այո	Ուսանողները ներգրավված են Ազգային ՈԱ գործակալության կառավարման կառուցվածքում, որպես արտաքին գնահատող թիմի լիիրավ անդամներ: ՈՆԱ-ում նրանք տեղեկություն հաղորդողներ են, ՈԱԱ-ում դիտորդներ: Որպես փորձագետներ նրանք մասնակցում են հավատարմագրման գործընթացներին:	Նրանք մասնակցում են ինքնավերլուծության զեկույցի պատրաստմանը, ուսումնառության և դասավանդման գնահատմանը և հարցումների միջոցով արդյունավետության գնահատմանը, ինչպես նաև հետամուտ գործընթացներում և որոշումների կայացմանը արտաքին գնահատումների ժամանակ
Բելառուս	Ոչ	Ոչ մի	Ոչ մի
Վրաստան	Այո	Տեղեկություն հաղորդողներ և շահակիցներ (ՈՆԱ). Շահակիցներ արտաքին աուդիտում	Ուսանողները ներգրավված են ծրագրերի որակի պարբերական գնահատումներում առցանց հարցումների, թիրախային խմբերի և հավատարմագրման գործընթացին մասնակցության միջոցով (այսինքն արտաքին աուդիտ): Թիրախային միջամտությունը ներառում է ուսանողների թիրախային խմբերին կրթական ծրագրերի և դրանց կազմակերպման ծառայությունների խորը վերլուծության համար
Մոլդովա	Այո	Ուսանողները ներգրավված են ՈԱ ազգային գործակալության կառավարման կառուցվածքում (լիիրավ անդամներ): Որպես դիտորդներ՝ արտաքին գնահատման թիմում	ՈՆԱ-ում. Մասնակցություն ինքնավերլուծության զեկույցի պատրաստմանը և հետագա գործընթացներին
Ուկրաինա	Այո	Ուսանողների ներգրավվածություն որակի արտաքին ապահովման մակարդակում, մասնավորապես, որպես ոլորտային փորձագետներ	Որոշ հաշվետվություններ հաստատում են ուսանողների ներգրավվածությունը նաև ՈՆԱ մակարդակում՝ հարցաթերթերին պատասխանելու միջոցով:



1 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ. ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Հեղինակ՝ Լաուրա Ֆեդելի (ՄՇ)

1.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Կրթական համակարգը ենթադրում է երեք մակարդակ՝ հիմնական (ensinos básico), միջնակարգ (secundário) և բարձրագույն (superior): Պարտադիր կրթությունը բաժանվում է հիմնականի (չորս, երկու և երեք տարիների հաջորդական երեք փուլերով) և միջնակարգի (երեք տարի): Բարձրագույն կրթությունը կազմակերպվում է երկակի համակարգով, որը բաղկացած է համալսարաններից և պոլիտեխնիկներից (և՛ պետական, և՛ մասնավոր): Համալսարանական համակարգը տրամադրում է անհրաժեշտ ակադեմիական կրթությունը՝ զարգացնելով ուսանողներին որպես մասնագետներ և խրախուսելով նրանց մասնակցելու հետազոտական և քննադատական վերլուծության աշխատանքներին, իսկ պոլիտեխնիկները միջին մասնագիտական կամ մասնագիտական ուղղվածություն ունեն:⁶

ԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Առաջին աստիճան [Licenciatura] Համալսարանի բակալավր		Ավագ դպրոցի դիպլոմ կամ տեխնոլոգիական մասնագիտացման դասընթացներ (հետ- միջնակարգ վերապատրաստման դասընթացներ), ուսանողները պետք է հանձնեն անհրաժեշտ ընդունելության քննություններ	Սովորաբար այն տևում է վեցից ութի ուսումնական կիսամյակ (180–240 ECTS)
Առաջին աստիճան [Licenciatura] Պոլիտեխնիկական բակալավր		Ավագ դպրոցի դիպլոմ կամ տեխնոլոգիական մասնագիտացման դասընթացներ (հետ- միջնակարգ վերապատրաստման դասընթացներ), ուսանողները պետք է հանձնեն անհրաժեշտ ընդունելության քննություններ	Սովորաբար այն տևում է վեց ուսումնական կիսամյակ (180– 240 ECTS)
Բարձրագույն կրթության կարճ ցիկլի դիպլոմ		Ավագ դպրոցի դիպլոմ կամ տեխնոլոգիական մասնագիտացման դասընթացներ (հետ- միջնակարգ վերապատրաստման դասընթացներ), ուսանողները պետք է հանձնեն անհրաժեշտ ընդունելության քննություններ	Այս դիպլոմը ԵՈՇ-ում զբաղեցնում է 5-րդ մակարդակը (առնվազն 120 ECTS)

REFERENCE

6 Հիմնական օրենքը, որը կարգավորում է բարձրագույն կրթությունը Պորտուգալիայում. Կրթական համակարգի համալիր ակտ (ակտ 46/86, 14 Հոկտեմբեր): Համալսարանի ինքնուրույնության ակտ (ակտ 108/88, 24 Սեպտեմբեր): Պոլիտեխնիկական բարձրագույն կրթական ինստիտուտների ինքնուրույնության ակտ (ակտ 54/90, 5 Սեպտեմբեր): Մասնավոր և համագործակցային բարձրագույն կրթության ակտ, Հրաման, Օրենք 88/2006

ԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Երկրորդ աստիճան [Mestrado] Մագիստրոսի աստիճան		Բակալավր	(90–120 ECTS; 60 ECTS որոշ մասնագիտական առարկաներում)
Երկրորդ աստիճան [Mestrado Integrado] Ինտեգրված մագիստրոս		Բակալավր	(300–360 ECTS). Սովորաբար այն տևում է 10-ից 12 ուսումնական կիսամյակ
Երրորդ աստիճան [Doutoramento] Գիտությունների թեկնածու (տրվում է միայն համալսարանների կողմից)		Մագիստրոսի աստիճան	Ուսումնառության ամբողջ ցիկլի ձևողությունը, որը հանգեցնում է դոկտորական աստիճանի չի կարգավորվում օրենսդրությամբ, սակայն բարձրագույն կրթական ինստիտուտները սովորաբար տրամադրում են 180 եկֆՇ 6 կիսամյակ տևողության համար և մնացյալը չի ունենում 240 եկֆՇ-ից ավելին 8 կիսամյակի համար

Նկ 1 Գծապատկեր: Բարձրագույն կրթական համակարգ. <http://www.dges.mctes.pt/DGES/pt/Reconhecimento/NARICENIC/Ensino+Superior/Diagrama/>

1.2 Բ) ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նախադրյալ: Պորտուգալիայի որակի ապահովման համակարգը ուսումնասիրելիս ինքնուրույնությունը համարվում է կենտրոնական հարց. «Ընդհանուր հիմնարար սկզբունքը աստիճանաշնորհման օրենքներում պետական համալսարանների գերիշխող ինքնուրույնությունն է: Այս համալսարանները, ըստ օրենքի, օժտված են կայուն, գիտական, մանկավարժական, վարչարարական և ֆինանսական ինքնուրույնությամբ: Սա նշանակում է, որ համալսարաններն ունեն գրեթե լրիվ ազատություն նախաձեռնելու, հետաձգելու կամ չեղարկելու կրթական ծրագրերը: Գիտության և բարձրագույն կրթության նախարարությունը (ԳԲՆ), որը պաշտոնապես պատասխանատու է համալսարանների համար, գրանցում է բոլոր նոր կրթական ծրագրերն ու աստիճանները: 1988թ. Համալսարանների ինքնուրույնության ակտի համաձայն հաստատման այս գործընթացում նվազեցվել են բյուրոկրատական գործընթացները՝ առանց որևէ էական ազդեցության: Նախարարությունն իրավունք ունի մերժելու կրթական ծրագրերի կամ աստիճանների գրանցումը, եթե նրանք չեն համապատասխանում պաշտոնական պահանջներին ծրագրի տևողության կամ աստիճանի տրամադրման համար ընդհանուր կրեդիտների թվի հետ կապված: Անկախ դրանից, որոշումները հիմնված չեն գնահատումների կամ հավատարմագրման վրա: Պետական պոլիտեխնիկական համալսարանների ինքնուրույնությունը գրեթե նման է համալսարանների ինքնուրույնությանը, սակայն նոր կրթական ծրագրերի հաստատման ընթացակարգը ինչևէ ավելի պահպանողական է: Պետական պոլիտեխնիկները իրավունք չունեն մշակելու նոր կրթական ծրագրեր՝ առանց նախարարության պաշտոնական համաձայնության: Նրանք պարտավոր են ուղարկելու բոլոր դիմումները

Նախարարությանը (Բարձրագույն կրթության Գլխավոր Տնօրենին Բարձրագույն կրթության և գիտության նախարարությունում)՝ հաստատման համար»:⁷

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սրբյո՞ք կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշներ բարձրագույն կրթության որակի ապահովման վերաբերյալ: ԱՅՈ

Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել հղումը, կայքի հասցեն կամ փաստաթուղթը

<http://www.enqa.eu/indirme/papers-and-reports/occasional-papers/EPHEREport.pdf>;

<http://www.a-pagina-da-educacao.pt/>)

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների հիմքը կարելի է գտնել Բարձրագույն կրթության Գնահատման Ակտում (act 38/94): Քանի որ Պորտուգալիայի համակարգը կազմված է համալսարանների և պոլիտեխնիկների սինդիկատից, որակի ապահովման հիմնադրման հիմնական խնդիրներից մեկը կարող է համարվել յուրաքանչյուր ընտրված ոլորտում/ենթաոլորտում «բանակցությունների» սկզբունքների համախումբը: Այս իրավիճակը բերեց ներկայացուցչական կառույցների առկայություն յուրաքանչյուր ոլորտում իր գնահատման խորհրդի համար, մասնավորապես, Պետական համալսարանների գնահատման խորհուրդը (FUP), Պետական պոլիտեխնիկական համալսարանների գնահատման խորհուրդը (ADISPOR) և Մասնավոր համալսարանների և պոլիտեխնիկական համալսարանների գնահատման խորհուրդը (APESP): Սա կարող է համարվել ՈԱ համակարգի հիմնական ուժեղ կողմերից մեկը՝ «որոշ չափով բաժանումը չորս խորհուրդների նպաստել է ավելի որակի ապահովման գործընթացում ավելի հավասար ներկայացուցչությանը ենթաոլորտների միջև չնայած այն ամբողջությամբ չի իրականացվում: Չնայած խումբը մեծապես առաջարկում է ավելի համապարփակ համակարգ ապագայի համար, նոր որակի ապահովման համակարգը պետք է նաև կարողանա արտահայտել ներկայիս բաժանված կառուցվածքը»:

Ենթահամակարգերի միջև արդյունավետ կոորդինացման և համապատասխանության ապահովման նպատակով հիմնվել է մեթա-մակարդակի կազմակերպություն (1998թ. Հրաման Ակտ) Բարձրագույն կրթության Ազգային գնահատման խորհրդի տեսքով (CNAVES): Գնահատող խորհուրդների (FUP, ADISPOR, APESE) հիմնական պարտականություններն են.

- Կազմակերպել և համակարգել արտաքին գնահատման գործընթացները,
- Առաջարկ ներկայացնել CNAVES-ին գործընկերային գնահատման խմբի կազմման համար,
- Առաջարկ ներկայացնել CNAVES-ին ինքնավերլուծության գործընթացի ուղենիշների վերաբերյալ,
- Մշտադիտարկել և աջակցել ինքնագնահատման գործընթացի զարգացմանը,
- Ապահովել արտաքին գնահատման հաշվետվությունների, ինչպես նաև ցանկացած հերթման հրապարակումը, որը տրվում է այն հաստատության կողմից, որի կրթական ծրագրերը ենթարկվում են գնահատման,
- Որակի բարելավման և գնահատման մոդելի բարելավման նպատակով խորհրդատվությունների տրամադրում և խնդիրների բարձրաձայնում:

CNAVES-ի հիմնական պարտականություններն են.

- Գնահատել որակի ապահովման գլոբալ կապակցվածությունը՝ հիմնված գնահատման հաշվետվությունների համեմատական վերլուծության վրա,

REFERENCE

7 ENQA, «Պորտուգալիայում բարձրագույն կրթության որակի ապահովումը» 2006թ., էջ. 19, <http://www.enqa.eu/indirme/papers-and-reports/occasional-papers/EPHEREport.pdf>.

- Նշանակել գնահատման խմբեր՝ հիմնված գնահատման խորհուրդներից ստացված դիմումների համակարգման վրա:⁸

Որպես վերջնական դիտարկում, կարող ենք ավելացնել, որ CNAVES-ն ունի բուհերի խրախուսման դեր՝ իրենց ներքին որակի ապահովման համակարգերի զարգացման գործում: CNAVES-ի կողմից իրականացված գնահատումները, փաստորեն, բարելավել են արտահայտման փորձերը և հաստատությունների կողմից առավել թափանցիկ կրթական ծրագրերի կազմումը: CNAVES-ը գործել է 1998թ.-ից մինչև 2006թ.-ը, և հետո փոխարինվել է A3ES-ով:

- Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: ԱՅՈ

Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կայքի հասցեն կամ փաստաթուղթը):

(A3ES: <http://www.a3es.pt/en>

<http://www.a3es.pt/en/accreditation-and-audit/regulations>

<http://www.a3es.pt/en/accreditation-and-audit/norms-external-assessment>).

Համաձայն 2007թ. նոյեմբերի 5-ի Հրաման-օրենք N369-ի սահմանվում է Բարձրագույն կրթության գնահատման և հավատարմագրման գործակալության հիմնադրումը (Agência de Avaliação e Acreditação do Ensino Superior, A3ES): 2012թ. հունիսին Հավատարմագրման Նվիրույթական կոնսորցիումը (ՀԵԿ, ECA) ընդունեց A3ES-ը որպես անդամ, և գործակալությունը միացավ ՀԵԿ-ի (ECA) Համագործակցության համաձայնագրին 2012թ. հունվարից մինչև 2015թ. հունիսին ընկած ժամանակահատվածի համար:

A3ES-ը բարձրագույն ուսումնական հաստատությունների (մասնավոր և պետական պոլիտեխնիկներ և համալսարաններ) և կրթական ծրագրերի հավատարմագրմամբ զբաղվող ինքնուրույն կազմակերպություն է:

Գործակալությունն իրականացնում է որակի 4 մակարդակի գնահատումներ՝ որակի ներքին ապահովում, ինքնավերլուծություն, արտաքին գնահատում, հավատարմագրում և ինստիտուցիոնալ աուդիտ:

Պորտուգալիան առաջին երկիրն է, որը SS պլատֆորմի միջոցով աջակցում է բարձրագույն կրթական համակարգի գնահատմանը. «A3ES —ը սահմանել է, որ կրթական ծրագրերի գնահատման և հավատարմագրման ֆորմալացման անհրաժեշտ ընթացակարգերը պետք է իրականացվեն առցանց, SS պլատֆորմի միջոցով, որը տեղակայված է A3ES —ի կայքում: Որպես այդպիսին, նոր կրթական ծրագրերի դիմումները, ինքնավերլուծության հաշվետվությունները և արտաքին գնահատման հաշվետվությունները այլ փաստաթղթերի հետ միասին ուղարկվում են առցանց (և գնահատվում են առցանց)»:⁹

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ

- Արդյո՞ք ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում: ԱՅՈ

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային մակարդակում գնահատման և հավատարմագրման գործընթացում ուսանողներն ինտեգրված էին գնահատման առնչվող օրենսդրական գործողություններին մեկնարկից սկսած (Օրենք 38/94; Հրաման-օրենք 205/98):

Ներկայումս ուսանողների մասնակցությունը մեծապես գնահատման գործընթացի սահմանման և քաղաքական կոորդինացման մակարդակում է, նրանցից պահանջվում է լրացնել մանկավարժական հարցաթերթեր և մասնակցել աուդիտին, որը կառավարվում է գնահատման արտաքին հանձնաժողովի կողմից (հոդվ. 12^o և 19^o Օրենք 38/2007)։

REFERENCE

8 ENQA, «Պորտուգալիայում բարձրագույն կրթության որակի ապահովումը», 2006թ., էջ. 22–23, <http://www.enqa.eu/indirme/papers-and-reports/occasional-papers/EPHEREreport.pdf>

9 ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՑՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՊՈՐՏՈԳԱԼԻԱ, «Պորտուգալիայի բարձրագույն կրթության որակավորումների շրջանակ», FHEQ, Պորտուգալիա, 2010թ., էջ. 7 http://www.dges.mctes.pt/NR/rdonlyres/90DBE647-SCB6-4846-B88F-101180D9E425/4933/FHEQPortugal_22Nov_2010.pdf

- ◉ Եթե այո, ինդրում ենք մանրամասնել (ավելացնել աղբյուրը, որին հղում եք կատարել)
 - ◉ Ներգրավվածության մակարդակը (օրինակ՝ որպես տեղեկատվություն հաղորդողներ, փորձագետներ և այլն, ներկայացնել որոշ օրինակներ)
 - ◉ Առկա է խզում ուսանողների ֆորմալ դերի և փաստացի դերի միջև: CNAVES-ում գնահատման թիմերը, փաստորեն, պաշտոնապես պարտավորված են հաշվի առնելու ուսանողների ծայրը: Սակայն նույնիսկ եթե նրանք պաշտոնապես ներկայացված են, նրանց գործունեության փաստացի ծավալը սահմանափակ է: Հաշվետվության մեջ վերլուծված և հղում տրված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ուսանողները երբեք չեն կարողացել իրենց դրսևորել որպես հիմնական դերակատարներ ո՛չ ներքին ինքնավերլուծության գործընթացներում, ո՛չ որպես արտաքին գնահատման թիմերի անդամներ»: Թերություններից մեկը, որն անհրաժեշտ է ընդգծել, ուսանողական կազմակերպությունների բաժանված կառուցվածքն է: Սակայն A3ES-ի հիմնադրամաթ և 2011-2012թթ.-ին իրականացված փորձի հիման վրա ուսանողների մասնակցությունը մեծապես խրախուսվում է նաև CAE-ում (Comissões de Avaliação Externa) որպես արտաքին գնահատման փորձագետ: Արդյունքում բարձրացել է ուսանողների տարեկան զբաղվածության և վերապատրաստման մակարդակը:
 - ◉ Ժամկետները (օրինակ, կրթական ծրագրի ավարտին, ուսումնական ողջ տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
 - ◉ Պաշտոնական փաստաթղթերում որևէ տեղեկություն չկա:
 - ◉ Ձևերը (օրինակ, պատասխանել ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերին, մասնակցություն արտաքին աուդիտին և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- Նոր կարգավորումներում (հոդվ. 12^o Օրենք 38/2007) ուսանողների մասնակցությունը սահմանված է (ներքին և արտաքին որակի ապահովման) հետևյալ ուղղություններով.
- 1 ինտեգրում ինքնավերլուծության փուլում. պարտադիր մասնակցություն մանկավարժական հանդիպումներին և ուսանողական ասոցիացիաներում,
 - 2 մասնակցություն մանկավարժական հարցումներին՝ կապված դասախոսների ու դասընթացների գնահատման հետ: Այս քայլը պարտադիր է և ներառված է ինքնավերլուծության փուլում,
 - 3 մասնակցություն արտաքին գնահատմանը արտաքին ընթացակարգերում հարցազրույցի միջոցով: Կառավարության հրամանով (369/2007, Հոդված 15) մասնակցությունը արտաքին գնահատմանը իրականացվում է երկու ուսանող-ներկայացուցիչների մանդատ տրամադրելով A3ES-ի խորհրդատվական խորհրդում,
 - 4 ներգրավվածություն ուսանողական ասոցիացիաներում ներկայացուցիչների ընտրման և հավատարմագրման գործակալությունում ինտեգրման համար:



2 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ. ԻՍՊԱՆԻԱ

Հեղինակ՝ Լաուրա Ֆեդելի (ՄՀ)

2.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Իսպանիայում կրթությունը երեխաների համար պարտադիր է 6-ից 16 տարեկան հասակում: Այն ներառում է տարրական կրթությունը (primaria), որը տևում է վեց տարի, և չորս տարի տեղորոշված պարտադիր միջնակարգ կրթությունը (E.S.O.), որի ավարտին տրվում է կրթության վկայական:

Բարձրագույն կրթությունը ենթադրում է բարձրագույն ուսումնական հաստատությունում (համալսարանում) կրթությունը և մասնագիտական վերապատրաստման դասընթացները: Համալսարաններում կրթությունը կարող է ավարտվել բակալավրի, մագիստրոսի կամ դոկտորական կրթական աստիճաններով: Մասնագիտական վերապատրաստման խորացված դասընթացները կազմակերպվում են այն նույն հաստատություններում, որտեղ անցկացվում են նաև միջին մասնագիտական վերապատրաստման դասընթացները:

ԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Առաջին աստիճան Բակալավր	18	Միջնակարգ կրթություն (Bachillerato) Լրացուցիչ պահանջներ. Ընդունելության քննություն, ամփոփիչ գնահատականը ձեռք է բերվել ուսումնառության ավարտին կամ հատուկ մոդուլներից/ առարկաններից, ավարտուն ուսումնառության կրթական ծրագրերի և համալսարանական համապատասխան աստիճանի միջև հարաբերությունները, ակադեմիական կամ մասնագիտական վերապատրաստման լրացուցիչ դասընթացներ և նախկինում անցած բարձրագույն կրթական դասընթացներ:	4 տարի (240 ECTS)
Երկրորդ աստիճան Մագիստրոս		Բակալավրի աստիճան	1 կամ 2 տարի (60–120 ECTS)
Երրորդ աստիճան Գիտությունների թեկնածու (PhD) (տրվում է միայն համալսարաններին կամ համալսարանական հաստատություններին կողմից)		Բակալավրի աստիճան կամ դրան համարժեք և մագիստրոսի աստիճան	3-4 տարի

Գծապատկեր: Կրթական համակարգն Իսպանիայում, <https://www.nuffic.nl/en/library/education-system-spain.pdf>

2.2 Բ) ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սրբյո՞ք կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշ բարձրագույն կրթության որակի ապահովման մասին: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել: (http://www.fga.it/uploads/media/J._Vidal___C._Ferreira___THE_STATE_OF_EVALUATION_IN_THE_SPANISH_UNIVERSITY_CONTEXT.pdf)

Բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականությունն իսպանիայում գոյություն ունի ավելի քան 10 տարի, այն ժամանակից սկսած, երբ 1996թ. Համալսարանների խորհուրդը հաստատեց Համալսարանների որակի առաջին ազգային պլանը (PNECU) 1996թ.-1998թ.-1999թ., 2000թ.

Նկ 2 The education system in Spain, URL: <https://www.nuffic.nl/en/library/education-system-spain.pdf>

- Սրդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կալքի հասցեն/փաստաթուղթը):

Իսպանիայում որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալությունը ՈԳՀԱԳ-ն է (ANECA; <http://www.aneca.es/eng/ANECA>), բացի այդ, կան որակի ապահովման տարածաշրջանային (ինքնավար մարզերի) գործակալություններ, ինչպիսիք են Կատալոնիայի համալսարանական համակարգի որակի գործակալությունը (AQU; http://www.aqu.cat/index_en.html) և Անդալուզիական համալսարանների որակի բաժինը (the Unidad para la Calidad de las Universidades Andaluzas: UCUA; <http://www.ucua.es/>), Գալիսիական համալսարանական համակարգի որակի ապահովման գործակալությունը (the Axencia para a Calidade do Sistema Universitario de Galicia: ACSUG; Axencia para a Calidade do Sistema Universitario de Galicia), Բալեարիկ կղզիների համալսարանի որակի գործակալությունը (the Agència de Qualitat Universitària de les Illes Balears: AQIB; <http://www.aquib.org/cat/aquib/>) և Կաստիլիայի համալսարանական համակարգի որակի գործակալությունը (the Agencia para la Calidad del Sistema Universitario de Castilla y León: ACSUCYL; <http://www.acsucyl.es/acsucyl/opencms/agencia/index.html>):

ՈԳՀԱԳ-ն նպատակ ունի վերապատրաստման դասընթացների կազմակերպման ու առաջխաղացման միջոցով ուսանողների շրջանում ձևավորելու, այսպես կոչված, «որակի մշակույթ» և նպաստելու վերջիններիս հնարավոր մասնակցությունը գնահատման ծրագրերին:

2.3 ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՍ

- Արդյո՞ք ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում (ԱՅՈ):
- Եթե այո, խնդրում ենք մանրամասնել (ավելացրեք աղբյուրը, որին հղում եք կատարել). http://www.eua.be/Libraries/EQAF_2010/PaperAbstracts_WGSIA_2_Esteve_Mon_Galan_Palomares_Pastor_Valcarcel.sflb.ashx; <http://www.esu-online.org/asset/News/6068/QUEST-for-quality-for-students-publication-Part1.pdf>)
- Ներգրավվածության մակարդակը (օրինակ, որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)

2006թ. ՈԳՀԱԳ-ն կապ հաստատեց ՊՀՈՆՀ (CREUP)-ի Պետական համալսարանների ուսանողների ներկայացուցիչների համակարգողի (ուսանողական ասոցիացիա, որն ազգային մակարդակում ներկայացնում է ուսանողների մեծամասնությունը) և ուսանողական ազգային այլ կազմակերպությունների հետ՝ առաջարկելով նրանց աշխատանքային խումբ ստեղծել: Այնուհետ ստեղծվեց ՈԳՀԱԳ-ի որակի քաղաքականությանն ուսանողների մասնակցության աշխատանքային խումբը (GATPEPC)՝ սկզբնապես ձևավորված ՈԳՀԱԳ-ի միջազգային և ինստիտուցիոնալ հարաբերությունների բաժնի աշխատակիցներից ու իսպանական մի քանի համալսարանների ուսանողների ներկայացուցիչներից: Աշխատանքային խմբի ստեղծման նպատակը հնարավոր մեթոդներ առաջարկելն էր ուսանողներին որակի ապահովման գործակալություններում մասնակցության համար:

Առաջին անգամ իսպանացի ուսանողները մասնակցեցին ինստիտուցիոնալ գնահատման պետական ծրագրին 2007թ.՝ որպես արտաքին գնահատման հանձնաժողովի դիտորդ անդամներ, իսկ 2008թ.՝ արդեն որպես լիիրավ անդամներ մեկ այլ ծրագրում: Այսօր ուսանողները մասնակցում են կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացին:

2007թ. վերջին եռամսյակում ՈԳՀԱԳ-ն հրավիրեց ուսանողներին մասնակցելու ինստիտուցիոնալ գնահատման իր ծրագրին (PEI): Սա առաջին օրինակը և փորձն էր ՈԳՀԱԳ-ի ծրագրին համազգային մակարդակով ուսանողի մասնակցության:

Առանձնահատուկ դեպք է այն, որ Կատալոնիայի համալսարանների ուսանողները, ովքեր կարող են միանալ AQU Ուսանողական հանձնաժողովին՝ AQU Catalunya's գործունեությանը մասնակցելու նպատակով, թե՛ խորհրդատվություն են տալիս գործակալությանը այն նախագծերի հետ կապված, որոնք անմիջական ազդեցություն ունեն ուսանողական մարմինների վրա, թե՛ մասնակցում են այնպիսի հետազոտությունների, որոնք ուսանողների շահերի և հետաքրքրությունների շրջանակում են:

Ժամկետները (օրինակ, կրթական ծրագրի ավարտին, ուսումնական ողջ տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)

Պաշտոնական փաստաթղթերում որևէ տեղեկատվություն չկա:

- Ձևերը (օրինակ, ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- Այսպիսով, ուսանողների մասնակցությունը ՈԳՀԱԳ-ին անշեղորեն աճել է վերջին 2 տարիների ընթացքում (2008-2010թթ.): Ուսանողների մասնակցությունն արտահայտվում է ոչ միայն գործակալության խորհրդատվական խորհրդում և GATPEPC-ում ներկայացված լինելով, այլև հետևյալ ծրագրերում՝ մասնակցությամբ՝ իսպանական համալսարաններում դոկտորական ծրագրերի «Որակի նշում» (Quality Label), «Վերիֆիկա» (VERIFICA), «Դոսենտիա» (DOCENTIA) և «Աուդիտ» (AUDIT) (համալսարանների համար որակի ներքին համակարգի ձևավորում): Թերևս, ներկայումս ուսանողների մասնակցությունն այն բոլոր ծրագրերում է, որտեղ անհրաժեշտ է այդ մասնակցությունը:



3 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ. ՌՈՒՄԻՆԻԱ

Հեղինակներ՝ Մարիա Անդրոնի և Ֆայինիսի Ֆլորին (ՍՀՀ)

3.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Բակալավր (Laurea triennale)	18	Միջնակարգ/ավագ դպրոցի վկայական	3 տարի (180 ECTS)
Մագիստրոս (Laurea magistrale)	—	Բակալավրի դիպլոմ (Laurea triennale)	2 տարի (120 ECTS)
Մագիստրոս (Laurea magistrale a ciclo unico)	18	Միջնակարգ/ավագ դպրոցի վկայական	5 կամ 6 տարի (300 կամ 360 ECTS)
Հետրուհական (մասնագիտացված դասընթաց)	—	Բակալավրի դիպլոմ (Laurea triennale)	6 ամիս/1 տարի
Հետմիջնակարգ/ավագ դպրոց	—	Միջնակարգ/ավագ դպրոցի վկայական	3 տարի
Մագիստրոս (մագիստրոսական դասընթաց)	—	Բակալավրի դիպլոմ (Laurea triennale)	2 տարի (120 ECTS)
Դոկտորական կրթաստիճան	—	Մագիստրոսի դիպլոմ	3 տարի
Հետդոկտորանտուրա	—	Դոկտորանտուրայի դիպլոմ	տարի

3.2 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյո՞ք կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշ բարձրագույն կրթության որակի ապահովման մասին: **Եթե այո**, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել:

ԱՅՈ, Ռումինիայում բարձրագույն կրթության որակը կարգավորվում է

- «Ազգային կրթության մասին» օրենք no.1/2011 (փոփոխություններով և լրացումներով)
http://www.aracis.ro/uploads/media/Lege_nr.1_din_2011__actualizata_01.01.2014_.pdf
- Օրենք no.87/2006 կրթության որակի ապահովման վերաբերյալ (փոփոխություններով և լրացումներով)
<http://www.aracis.ro/uploads/media/legea87.pdf>
- Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: **Եթե այո**, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կապի հասցեն/հիաստատվելը):

ԱՅՈ, ազգային մակարդակով գնահատման գործակալությունն ARACIS-ն է, որը զբաղվում է բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատմամբ, (բարձրագույն կրթության որակի ապահովման ռումինական գործակալություն), որը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) անդամ է և գրանցված է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR):
<http://www.aracis.ro/>
<http://www.enqa.eu/index.php/enqa-agencies/members/full-members/>
<https://www.eqar.eu/register/search.html>

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՍ

- ❖ Արդյո՞ք ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում (ԱՅՈ):
- ❖ Եթե այո, խնդրում ենք մանրամասնել (ավելացրեք աղբյուրը, որին հղում եք կատարել).
- ❖ Ներգրավվածության մակարդակը (օրինակ, որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
Ուսանողների ներկայացուցիչները որակի գնահատման և ապահովման հանձնաժողովների անդամներ են կառավարման և ֆակուլտետային խորհուրդներում: Բացի այդ, նրանց մի մասը մասնակցում է դասախոսների գնահատմանը:
- ❖ Ժամկետները (օրինակ, կրթական ծրագրի ավարտին, ուսումնական ողջ տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
Որակի գնահատման և ապահովման վերոնշյալ հանձնաժողովների գործունեությունը ծավալվում է ուսումնական ողջ տարվա ընթացքում՝ ըստ յուրաքանչյուր հոկտեմբեր կազմվող պլանի: Հանձնաժողովները կազմակերպում են ամսական հանդիպումներ աշխատանքային ծրագիրը մանրամասնելու և ուսումնական գործընթացի որակը վերլուծելու համար:
- ❖ Ձևերը (օրինակ, ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
Ֆակուլտետների մակարդակում մշակվում են տարբեր հարցաթերթեր որակի գնահատման և ապահովման գործընթացում կիրառվող գործառնական որոշ ընթացակարգերի կատարման անմիջկանոթին աշակցելու համար, մասնավորապես՝ դասախոսների գնահատում ուսանողների կողմից, դասավանդման/ ուսումնառության միջավայրի գնահատում՝ առաջարկված համալսարանի կողմից, ուսանողների կողմից ուսումնառության ընթացքի գնահատում և այլն:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԿ-ՈՒՄ

Ռումինիայում «Ազգային կրթության մասին» 1/2011 օրենքն ապահովում է լայն շրջանակ Ռումինական պետության իրավասության ներքո կյանքի ընթացքում կրթության հիմնարար իրավունքի իրագործման համար: Օրենքը կարգավորում է ազգային կրթական համակարգի կառուցվածքը, գործառույթները, կազմակերպումն ու գործառնությունը:

Օրենքի տեսլականն ուղղված է դեպի արժեքային կողմնորոշված կրթության, ստեղծարարության, կոգնիտիվ ունակությունների, կամային հատկությունների, մարտական կարողությունների, գործնական հմտությունների, հիմնարար ու մշտապես օգտագործվող գիտելիքների, այն կարողությունների և հմտությունների առաջնադասմանը, որոնք վերաբերում են մասնագիտությանն ու հասարակությանը:

Օրենքից բխող առաքելությունն է ունակ լինել արդյունավետ գործելու կրթության, վերապատրաստումների, ուսումնական հասարակության մտավոր ենթակառուցվածքների միջոցով, Ռումինիայի Եվրոպական Միության անդամ լինելու հանգամանքով և գլոբալացման համատեքստում նոր պահանջներին համապատասխան ու բարձր մրցունակ ազգային մարդկային ռեսուրսների կայուն զարգացումն ապահովելու գործառնությամբ պայմանավորված:

Պետությունը ապահովում է Ռումինիայի քաղաքացիների համար հավասար իրավունքներ բարձրագույն կրթության բոլոր մակարդակները և ձևերը մուտք գործելու, այդ թվում՝ կյանքի ընթացքում ուսումնառության համար՝ առանց խտրականության որևիցե ձևի կամ միջոցի:

Բարձրագույն կրթության ազգային համակարգը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- 1 համալսարանի ինքնավարության սկզբունքը,
- 2 ակադեմիական (համալսարանական) ազատության սկզբունքը,
- 3 հանրային պատասխանատվության սկզբունքը,
- 4 որակի ապահովման սկզբունքը,
- 5 արդարության սկզբունքը,

- 6 կառավարչական և ֆինանսական մենեջմենթի արդյունավետության սկզբունքը,
- 7 թափանցիկության սկզբունքը,
- 8 ուսանողների և ակադեմիական (պրոֆեսորադասախոսական) անձնակազմի իրավունքների և ազատությունների պահպանման սկզբունքը,
- 9 գաղափարների, դավանանքի և քաղաքական հայացքների անկախության սկզբունքը,
- 10 ուսանողների, դասախոսների և հետազոտողների ազգային ու միջազգային շարժունության ազատության սկզբունքը,
- 11 որոշումների կայացման գործընթացում սոցիալական գործընկերների խորհրդատվության սկզբունքը,
- 12 ուսանողականությունության սկզբունքը:

Բարձրագույն կրթությունում չի կարող լինել խտրականություն տարիքային, էթնիկ ծագման, սեռական, սոցիալական կարգավիճակի, քաղաքական կամ կրոնական կողմնորոշման, սեռական կողմնորոշման կամ խտրականության այլ տեսակների հոդի հիման վրա՝ բացառությամբ օրենքով սահմանված միջոցների:

Բարձրագույն կրթության և համալսարանի գիտական հետազոտությունների որակի ապահովումը բարձրագույն ուսումնական հաստատության պարտականությունն է և Կրթության ու գիտական հետազոտության նախարարության հիմնարար խնդիրը:

Որակի ապահովման գործընթացում ուսանողները լիիրավ գործընկերներ են:

Ուսանողները բարձրագույն ուսումնական հաստատություններում համարվում են գործընկերներ և ակադեմիական (համալսարանական) հասարակության հավասար անդամներ: Եկեղեցական (կրոնական) կրթության դեպքում ուսանողները ակադեմիական հասարակության անդամներ են որպես աշակերտներ:

Ուսանողներն օրենքով իրավունք ունեն բարձրագույն ուսումնական պետական կամ մասնավոր հաստատություններում անցկացնելու աշխատաժողովներ, հիմնելու ակումբներ, մարզական կազմակերպություններ և տպագրելու հրապարակումներ:

Համալսարանի որոշումների կայացման և խորհրդատվական բոլոր կառույցներում ուսանողների մասնակցությունը կազմում է 25%:

Ուսանողական ազգային միություններն օրինականորեն կազմավորված մարմիններ են, որոնք արտահայտում են ուսումնական պետական հաստատությունների (համալսարանների) ուսանողների շահերը:

Համալսարանի կառավարման խորհուրդում հետազոտողների և դասախոսների մասնակցությունը 75% է, իսկ ուսանողության ներկայացուցիչներինը՝ 25%:

Ուսանողներն նվազագույնը մեկ ներկայացուցիչ ունեն էթնիկայի, կացարանների ընտրության, որակի ապահովման, ինչպես նաև սոցիալական ուղղվածության այլ հանձնաժողովներում:

Ուսանողների կողմից դասախոսների գնահատումը պարտադիր է: Գնահատման արդյունքները համարվում են հանրության համար մատչելի տեղեկություններ:

Ռումինիայում բարձրագույն կրթության որակը կառավարվում է կրթության որակի պահպանման վերաբերյալ արտակարգ իրավիճակների 75/2005 որոշմամբ (համապատասխան փոփոխություններով և լրացումներով):

Վերոնշյալ նորմատիվ ակտին համապատասխան՝ «կրթության որակը կրթական ծրագրի և կրթական ծառայություն մատուցողի բնութագրիչների ամբողջությունն է, որի միջոցով իրագործվում են շահառուների սպասելիքներն, ինչպես նաև որակի չափանիշները»:

Կրթության գնահատման որակն ընկած է այն ծավալի բազմաշափանիչ փորձաքննության հիմքում, որն ապահովում է կրթության կազմակերպումն ու կրթական ծրագրերի համապատասխանությունն ընդունված չափանիշներին: Երբ որակի գնահատումը կատարվում է կրթական ծառայություն մատուցող հաստատության կողմից, ապա այն կրում է ներքին գնահատման ձև:

Երբ որակի գնահատումն իրագործվում է ազգային կամ միջազգային մասնագիտացված գործակալության կողմից, ապա այն ենթադրում է արտաքին գնահատման ձև:

Կրթության որակի ապահովումը մի շարք գործողությունների արդյունքում է իրագործվում կրթական ծրագրերի ձևավորման, պլանավորման և իրագործման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար, որի հետևանքով պետք է ձևավորվի շահառուների վստահությունն այն հարցում, որ ուսումնական հաստատությունը պահպանում է որակի չափանիշները: Որակի ապահովումը արտահայտում է կազմակերպության կարողությունն առաջարկելու ընդունված չափանիշներին համապատասխան կրթական ծրագրեր:

Կրթության որակը կրթական ծառայություն մատուցող ուսումնական յուրաքանչյուր հաստատության և գործատուների համար մշտական գերակայություն է:

Գլխավորապես, որակյալ կրթության ապահովումը հիմնվում է արդյունքների վրա:

Արդյունքներն արտահայտվում են այն գիտելիքների, հմտությունների, արժեքների և հարաբերությունների համատեքստում, որոնք ձեռք են բերվում կրթական կամ վերապատրաստման ծրագրի համապատասխան մակարդակի ավարտի և ամփոփման միջոցով:

Կրթության որակի ապահովման մեթոդաբանությունը հետևյալ բաղադրիչներն է ներառում՝

- 1 չափորոշիչ,
- 2 չափանիշներ,
- 3 կատարողականի ցուցիչներ,
- 4 որակավորումներ:

Կրթության որակը ձեռք է բերվում հետևյալ գործընթացների միջոցով.

- 1 ուսումնառության սպասվելիք արդյունքների պլանավորում և փաստացի կատարում,
- 2 արդյունքների մշտադիտարկում,
- 3 արդյունքների ներքին գնահատում,
- 4 արդյունքների արտաքին գնահատում:

Կրթության որակը վերաբերում է հետևյալ ոլորտներին և չափանիշներին՝

- 1 Ինստիտուցիոնալ կարողությունն առկա ենթակառուցվածքի ներքին կազմակերպման արդյունք, որը սահմանվում է հետևյալ չափանիշներով.
 - 1 ինստիտուցիոնալ, վարչական ու կառավարչական կառուցվածքներ,
 - 2 նյութական բազա և վերջինիս օգտագործման օպտիմալացում,
 - 3 մարդկային ռեսուրսներ և հաստատության կարողությունը գրավելու օտարերկրյա մարդկային ռեսուրսներ (օրենսդրությունը համապատասխան):
- 2 Կրթության արդյունավետությունը, որն ընկած է ռեսուրսների շարժունության հիմքում, և ուսումնառության սպասվելիք արդյունքներին հասնելու նպատակով ենթադրում է հետևյալ չափանիշները՝
 - 1 կրթական ծրագրերի բովանդակությունը,
 - 2 կրթական վերջնարդյունքներ,
 - 3 պարտականություն,
 - 4 կազմակերպության ֆինանսական ակտիվությունը:
- 3 Որակի կառավարումն արտահայտվում է հետևյալ չափանիշներում.
 - 1 որակի ապահովման ռազմավարություններ և ընթացակարգեր,

- 2 ծրագրերի և գործողությունների ընդունմանը, մշտադիտարկմանն ու պարբերական գնահատմանը վերաբերող ընթացակարգեր,
- 3 կրթական վերջնարդյունքների գնահատման օբյեկտիվ և թափանցիկ ընթացակարգեր, ներառյալ նաև ուսանողների կողմից գնահատումը,
- 4 դասավանդող անձնակազմի որակի պարբերական գնահատման ընթացակարգեր,
- 5 ուսումնասիրության համար համապատասխան ռեսուրսների մատչելիությունն ու առկայությունը,
- 6 որակի ներքին ապահովմանը վերաբերող և համակարգայնորեն թարմացվող տվյալների բազա,
- 7 հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության թափանցիկությունը, այդ թվում՝ այն տեղեկատվության, որը վերաբերում է կրթական ծրագրերին (համապատասխանաբար նաև վկայականները, դիպլոմներն ու առաջարկվող որակավորումները),
- 8 օրենքին համապատասխան կրթության որակի ապահովման միավորների գործառնությունը,
- 9 աշխատանքային օրենսգրքին համապատասխան հաշվետվությունների ճշգրտությունը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ռումինիայում կրթական ծառայություն մատուցող ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրն ունի գնահատման և որակի ապահովման հանձնաժողով:

Օպերատիվորեն, հանձնաժողովը պետք է կառավարվի հաստատության ղեկավարի կամ նշանակված համակարգողի կողմից:

Հաստատության ղեկավարը անմիջականորեն պատասխանատու է մատուցվող կրթության որակի համար:

Բարձրագույն կրթական հաստատության Գնահատման և որակի ապահովման հանձնաժողովը ներառում է՝

- 1 դասախոսական անձնակազմի 1-3 ներկայացուցիչներ, ովքեր, ըստ կրթության նախարարի հրամանի դրեքենտի կոչում ունեն, և ընտրված են համալսարանի գիտական խորհրդի կողմից գաղտնի քվեարկության արդյունքում,
- 2 Առևտրի միության ներկայացուցիչ՝ նշանակված հենց միության կողմից,
- 3 ուսանողների ներկայացուցիչ՝ նշանակված ուսանողական կազմակերպության կողմից:

Հանձնաժողովի անդամ կարող է լինել գործատուների ներկայացուցիչը:

Հանձնաժողովի ներկայացուցիչը կարող է լինել դասախոսների կամ ուսանողների շրջանում փոքրամասնության ներկայացուցիչ:

Հանձնաժողովի անդամները չեն կարող կրթական հաստատության կամ փոխկապակցված կազմակերպության կառավարման գործառույթներ կատարել, բացառությամբ այն անձի, ով ընթացիկ ղեկավարմամբ է զբաղվում:

Գնահատման և որակի ապահովման հանձնաժողովի լիազորություններն են՝

- 1 գնահատման և որակի ապահովման ուսումնական հաստատության կողմից հաստատված ընթացակարգերի ու գործողությունների ընդունման համակարգում,
- 2 համապատասխան հաստատության կրթության որակի ներքին գնահատման տարեկան հաշվետվության պատրաստում: Հաշվետվությունը պետք է բոլոր շահառուներին հասանելի լինի ներկայացման կամ հրապարակման միջոցով:
- 3 կրթության որակի բարելավման համար առաջարկների մշակում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կրթության որակի արտաքին գնահատումը ներառում է

- 1 կրթական ծառայություն մատուցող ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողության գնահատումը,
- 2 ուսումնական հաստատության կրթական արդյունավետության գնահատումը,
- 3 որակի կառավարման գնահատումը ինստիտուցիոնալ մակարդակում,
- 4 առաջարկվող կրթական ծրագրերի որակի գնահատումը,
- 5 ներքին գնահատման և իրական պատկերի (իրավիճակի) համապատասխանության գնահատումը,
- 6 կրթական ծառայություն մատուցող ուսումնական տարբեր հաստատությունների կողմից առաջարկող նույն տեսակի կրթական ծրագրերի ներինստիտուցիոնալ համեմատական գնահատում:

Կրթության որակի արտաքին գնահատման համար ստեղծվել է Բարձրագույն կրթության որակի ապահովման ուսումնական գործակալությունը, այսուհետ՝ ԲԿՈԱԳ (ARACIS):

ԲԿՈԱԳ-ն անկախ, ազգային շահերը ներկայացնող, իր սեփական բյուջեով (եկամուտներով ու ծախսերով) պետական կազմակերպություն է:

ԲԿՈԱԳ-ն հավատարմագրման ոլորտում ունի հետևյալ լիազորությունները՝

- 1 պարբերաբար, բարձրագույն ուսումնական տարբեր հաստատությունների ու ծրագրերի համար մեթոդաբանության և հավատարմագրման չափանիշների մշակում, որը հավանության է արժանանում Կրթության նախարարության կողմից և հաստատվում կառավարության կողմից,
- 2 Կառավարության որոշումներով հաստատված չափանիշներով և մեթոդաբանությամբ, իր սեփական նախաձեռնությամբ կամ արտաքին պահանջով գնահատումների իրականացում և բարձրագույն ուսումնական հաստատությունների և վերջիններիս կրթական ծրագրերի լիցենզավորման և հավատարմագրման առաջարկում: Հավատարմագրման հաշվետվությունների հիման վրա Կրթության և հետազոտության նախարարությունը մշակում է նորմատիվ ակտեր բարձրագույն կրթության կառուցվածքային միավորներ ստեղծելու համար:

ԲԿՈԱԳ-ն որակի ապահովման բնագավառում հետևյալ պարտականություններն ունի

- 1 բարձրագույն կրթության որակի ապահովման և գնահատման համար ազգային չափանիշների ու կատարողականի ցուցիչների ստեղծում և պարբերաբար վերանայում՝ հիմնված լավագույն փորձի վրա,
- 2 Կրթության նախարարության հետ համագործակցություն Ռումինիայում կրթության որակի բարձրացման նպատակով քաղաքականությունների և գործողությունների ռազմավարության մշակման ու առաջխաղացման գործում,
- 3 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ամենամյա խորհրդակցությունների անցկացում որակի ապահովման գերակայություններ սահմանելու նպատակով,
- 4 կրթության որակի արտաքին գնահատման իր ընթացակարգերի մշակում և հանրայնացում,
- 5 երկրի և օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ համագործակցության արդյունքում կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման ծառայությունների, ինչպես նաև նմանօրինակ ծրագրերի ներինստիտուցիոնալ գնահատման ծառայությունների մատուցում,
- 6 արտաքին գնահատումների արդյունքների հանրայնացում,
- 7 գնահատման և որակի ապահովման լավագույն փորձի վերաբերյալ գրքերի, հետազոտությունների և ուղենիշերի հրապարակում,
- 8 պարբերաբար, երեք տարին մեկ, Ռումինիայի բարձրագույն կրթական համակարգի որակի վերլուծության իրականացում,

9 ալլ պետությունների նմանօրինակ գործակալությունների հետ համագործակցություն բարձրագույն կրթության ծրագրերի որակը բարելավելու նպատակով արդյունավետ միջոցների մշակման և իրագործման համար,

10 ԲԿՈԱՌԳ-ի փորձագետների համար էթիկայի մասնագիտական կանոնների մշակում,

11 տարեկան հաշվետվության հրապարակում իր կատարած աշխատանքի վերաբերյալ,

12 իր սեփական գործողությունների վերաբերյալ որակի ինքնավերլուծության եռամյա հաշվետվության կազմում ալլ երկրների գործակալությունների կողմից արտաքին գնահատմանը պատրաստավելու համար:

ԲԿՈԱՌԳ կառավարվում է 21 անդամներից բաղկացած խորհրդի կողմից: Դրանք 17 դասախոսներ են բարձրագույն կրթությունում դասավանդման փորձառություններ, ովքեր սովորաբար ներկայացնում են համալսարանական կրթական ծրագրերի համապատասխան ոլորտները:

Գործատուների մեկ ներկայացուցիչ, մեկ ներկայացուցիչ առևտրական ընկերությունից և երկու ուսանողներ՝ որպես Ռումինիայի ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչներ, վերահաստատվում են ուսումնական լուրաքանչյուր տարվա սկզբում՝ համաձայն ԲԿՈԱՌԳ-ի խորհրդի:



4 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ. ՍԵՐԲԻԱ

Հեղինակներ՝ Միհայի Անդրոնի և Յուստին Անդրոնի (ՍՀՀ)

4.1 Ա) ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Կիրառական բակալավր (մասնագիտական բազային դասընթացներ – I մակարդակ, Բոլոնիա)	18–19	4-ամյա դպրոցի շրջանավարտներ՝ ընդունելության քննությամբ	3 տարի (180 ECTS)
Բակալավր (Համալսարանական բազային դասընթացներ – I մակարդակ, Բոլոնիա)	18–19	4-ամյա դպրոցի շրջանավարտներ՝ ընդունելության քննությամբ	3–4 տարի (180–240 ECTS)
Մագիստրոս (II մակարդակ, Բոլոնիա)	21–23	Բակալավրի շրջանավարտ	1–2 տարի (60–120 ECTS)
Համալսարանական դասընթացների մասնագետ (II մակարդակ, Բոլոնիա)	21–23	Բակալավրի շրջանավարտ	1 տարի (60 ECTS)
Մասնագիտական դասընթացների մասնագետ (II մակարդակ Բոլոնիա)	21–23	Կիրառական բակալավրի շրջանավարտ	1 տարի (60 ECTS)
Դոկտորական ծրագրեր՝ գիտությունների թեկնածու (PhD)	23–24	Նվազագույնը 300 ECTS բազային դասընթացներից	3 տարի (180 ECTS)

Բարձրագույն կրթական համակարգը ենթադրում է երկու տեսակի դասընթացներ՝

- Համալսարանական (ակադեմիական) ծրագրեր, որոնք կազմակերպվում են համալսարաններում,
- Կիրառական մասնագիտական կողմնորոշված դասընթացներ, որոնք կազմակերպվում են կամ կիրառական ուսուցման քոլեջներում, կամ համալսարաններում:

Համալսարանական դասընթացները կառուցված են եռաստիճան համակարգով, որը ներառում է՝

- Համալսարանական բազային դասընթացներ (բակալավրիական կրթաստիճան), տևում է 3–4 տարի, 180-ից 240 ECTS,
- Մագիստրոսական դասընթացներ՝ 1–2 տարվա տևողությամբ 60-ից 120 ECTS,
- Դոկտորական ծրագրեր (գիտությունների թեկնածու) նվազագույնը երեք տարի ուսումնառությամբ կամ 180 ECTS:

Բժշկական գիտությունների ոլորտը (բժշկագիտության, ատամնաբուժության և անասնաբուժության դասընթացները) տարբերվում է այլ ոլորտներից: Այն ենթադրում է 6 տարի ուսումնառություն և նվազագույնը 360 ECTS:

- Կիրառական և նախնական ու միջին մասնագիտական վերապատրաստման դասընթացները ևս կիրառվում են Սերբիայում: Վերջիններս բաժանվում են երկու մակարդակի՝
- Կիրառական բազային դասընթացներ, երեք տարի, 180 ECTS
- Կիրառական մասնագիտացված դասընթացներ, մեկ տարի, 60 ECTS:

4.2 Ա) ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյո՞ք կա որևէ օրենք/կարգավորում կ/կամ ազգային չափանիշ բարձրագույն կրթության որակի ապահովման մասին: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել:
- ԱՅՈ, «Բարձրագույն կրթության մասին» օրենքը (ընդունված 2005թ., փոփոխություններն ու լրացումները՝ 2008թ., 2010թ. և 2012թ.), որին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ: <http://www.minoritycentre.org/sites/default/files/law-higher-education-serbia.pdf>.
- Սերբիան Բոլոնիայի գործընթացին միացել է 2003թ., որը պայմանավորել է երկրի բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների գործընթացի սկիզբը: Այն իր իրավական աջակցությունը ստացել է 2005թ.-ին «Բարձրագույն կրթության մասին» օրենքի ընդունմամբ: «Բարձրագույն կրթության մասին» սերբական օրենքով կառավարվում է երկրի բարձրագույն կրթական համակարգը, սահմանվում բարձրագույն կրթության գործողությունների կատարման պայմաններն ու եղանակը: Այն անդրադառնում է ֆինանսական, ինչպես նաև Սերբիայում բարձրագույն կրթության ապահովման համար կարևոր այլ խնդիրների: «Բարձրագույն կրթության մասին» օրենքը ներկայացնում է Սերբիայում կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը, ուսումնառության եռաստիճան համակարգն ու դիպլոմի միջուկը: 2007–2008թթ. սկսած բոլոր ուսանողները բարձրագույն ուսումնական բոլոր հաստատություններում ուսանում են կրթական նոր բարեփոխված ծրագրերով:
- Բարձրագույն ուսումնական բոլոր հաստատությունները պետք է հավատարմագրվեն աշխատանքային լիցենզիա ձեռք բերելու համար, որը տրվում է Կրթության, գիտության և տեխնոլոգիական զարգացման նախարարության կողմից: Բարձրագույն ուսումնական մասնավոր (ոչ պետական) հաստատություններն ունեն նույն կարգավիճակն, ինչ պետական հաստատությունները:
- Բարձրագույն ուսումնական յուրաքանչյուր հաստատություն պատասխանատու է առաջարկվող կրթական ծրագրերի որակի ապահովման համար: «Բարձրագույն կրթության մասին» օրենքի համաձայն հավատարմագրման գործընթացն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.
- Բարձրագույն ուսումնական հաստատությունն, ըստ իր կանոնադրության կամ իրավական ընդհանուր ակտի, սահմանում է այն մարմիններն ու ընթացակարգերը, որոնք վերաբերում են կրթական ծրագրերի, դասավանդման և աշխատանքային պայմանների որակի վերահսկմանը, ապահովմանը, առաջնադասմանն ու զարգացմանը: Այն նաև պետք է գնահատի որակի ապահովման պարտավորություններին համապատասխանությունը բարձրագույն ուսումնական անկախ հաստատության կամ միավորի կողմից, որն իրականացվում է Ազգային խորհրդի առաջարկով և բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարի կողմից ընդունված կանոններով:
- Որակի գնահատման ընթացակարգը նաև ներառում է ուսանողների կողմից կրթական ծրագրերի գնահատումը:
- Հանձնաժողովը գործողությունների տարեկան պլանին համապատասխան Ազգային խորհրդի հատուկ կարգով ու բարձրագույն ուսումնական անկախ հաստատության կամ նախարարի պահանջով գնահատում է որակի ապահովման պարտավորություններին համապատասխանությունը բարձրագույն ուսումնական անկախ հաստատության կամ միավորի կողմից:
- Հանձնաժողովը բարձրագույն ուսումնական անկախ հաստատության կամ միավորի կողմից որակի ապահովման պարտավորություններին համապատասխանության վերաբերյալ հաշվետու է Ազգային խորհրդին, նախարարին և բարձրագույն ուսումնական անկախ հաստատությանը:
- Բարձրագույն ուսումնական անկախ հաստատությունը կարող է ներկայացնել իր մեկնաբանությունները որակի գնահատման հաշվետվության վերաբերյալ Ազգային խորհրդին հաշվետվությունը ստանալու օրվանից հաշված 15 օրվա ընթացքում:
- Ազգային խորհուրդը հանձնաժողովի հաշվետվությունը ուղարկում է համալսարանների ասոցիացիային և համալսարանների ուսանողական ասոցիացիային և/կամ մասնագիտական առաջնադասման դասընթացների հաստատությունների (ակադեմիաների) ասոցիացիային և մասնագիտական առաջնադասման դասընթացների հաստատությունների ուսանողական ասոցիացիային:

- Ազգային խորհուրդը գնահատում է բարձրագույն ուսումնական անկախ հաստատության կողմից որակի ապահովման պահանջներին համապատասխանությունը հանձնաժողովի հաշվետվության հիման վրա՝ գնահատման արդյունքներն ուղարկելով բարձրագույն ուսումնական անկախ հաստատության ու ոլորտի պատասխանատու նախարարին:
- Որակի ապահովման պարտավորություններին համապատասխանության գնահատման արդյունքը հրապարակվում է բարձրագույն ուսումնական անկախ հաստատության կողմից Ազգային խորհրդի ընդունած իրավական ակտին համապատասխան:
- Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կայքի հասցեն/փաստաթուղթը): <http://www.kapk.org/>
- Այո, Բարձրագույն կրթության ազգային խորհուրդը, այն է՝ հավատարմագրման և որակի ապահովման հանձնաժողովը: Բարձրագույն կրթության ազգային խորհուրդը հիմնել է հավատարմագրման և որակի ապահովման հանձնաժողովը Սերբիայում բարձրագույն կրթության հաստատությունների հավատարմագրում և որակի ապահովում ու կրթական ծրագրերի գնահատում իրականացնելու նպատակով:

Հանձնաժողովը, օրենքին համապատասխան, անկախ է և գործառու է մասնագիտացման սկզբունքի հիման վրա: Հավատարմագրման ընթացակարգի կատարումից և բարձրագույն կրթության հաստատություններին լիցենզիա տրամադրելուց բացի հանձնաժողովը առաջարկում է որակի չափանիշներ և ընթացակարգեր.

 - Բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրման չափանիշներ ու ընթացակարգեր.
 - Կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշներ ու ընթացակարգեր.
 - Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի գնահատման և ինքնավերլուծության չափանիշներ ու ընթացակարգեր:

Ազգային խորհուրդը, օրենքին համապատասխան, կազմված է 16 անդամներից, ովքեր նշանակվում են Սերբիայի Հանրապետության Ազգային ժողովի կողմից.

 - Տասը անդամներ պրոֆեսորների, գիտնականների և/կամ միջազգայնորեն ճանաչված աշխատանքներ կատարած դերասանների (արվեստագետների) կամ այն անձանց շրջանակից, ովքեր նշանակալիորեն նպաստել են ազգային մշակույթի զարգացմանը:
 - Երկու անդամներ մասնագիտական առաջնադասման ծրագրերի ոլորտի պրոֆեսորներից՝ մասնագիտական առաջնադասման դասընթացների հաստատությունների ասոցիացիայի առաջարկով:
 - Չորս անդամներ պետք է նշանակվեն ականավոր գիտնականների, մշակութային գործիչների, դասախոսների, դերասանների կամ գործարարների շրջանից, որոնցից երեքը՝ Սերբիայի Հանրապետության կառավարության առաջարկով:

Ազգային խորհուրդը, «Բարձրագույն կրթության մասին» օրենքին համապատասխան, հետևյալ լիազորություններն ունի.

 - Բարձրագույն կրթության զարգացման և վերջինիս՝ եվրոպական ու միջազգային չափանիշներին համապատասխանության նկատմամբ իրականացնում է վերահսկողություն:
 - Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարությանը առաջարկություններ է ներկայացնում բարձրագույն կրթության քաղաքականության վերաբերյալ:
 - Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրում:
 - Խորհրդատվություն է տրամադրում բարձրագույն կրթության գործողությունների կառավարման խնդիրներին վերաբերող օրենսդրության ընդունման գործընթացում:
 - Կառավարությանն առաջարկություններ է ներկայացնում բարձրագույն կրթության հաստատություններում աշխատանքի ընդհանուր կանոնների և չափանիշների, ինչպես նաև դրանց

կատարման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ՝ միաժամանակ խորհուրդ ստանալով համալսարանների ասոցիացիայից և մասնագիտական առաջնադասյան դասընթացների հաստատությունների ասոցիացիայից:


- ❖ Համալսարանների ասոցիացիայի և մասնագիտական առաջնադասյան դասընթացների հաստատությունների ասոցիացիայի առաջարկով որոշում է գործողությունների գիտական, գեղարվեստական և/կամ մասնագիտական ոլորտները, ինչպես նախատեսված է «Բարձրագույն կրթության մասին» օրենքով:
- ❖ Սահմանում է չափանիշներ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին գնահատման համար:
- ❖ Սահմանում է չափանիշներ բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատման համար:
- ❖ Չափանիշներ է սահմանում աշխատանքի կատարման համար թույլտվության տրամադրման համար:
- ❖ Սահմանում է չափանիշներ և ընթացակարգ բարձրագույն կրթության հաստատությունների հավատարմագրման համար:
- ❖ Սահմանում է չափանիշներ և ընթացակարգ կրթական ծրագրերի հավատարմագրման համար:
- ❖ Հավատարմագրման ընթացակարգի համաձայն որոշում է կայացնում բողոքական երկրորդ ատյանում:
- ❖ Առաջարկություններ է ներկայացնում թափուր հաստիքներում ընտրության առավել հստակ պայմանների վերաբերյալ:
- ❖ Կազմում է մասնագիտական, ուսումնական (ակադեմիական) և գիտական որակավորումների ցանկ՝ նշելով ուսումնառության տվյալ մակարդակում, տվյալ ճյուղում աստիճանը, ինչպես նաև հապավումները մասնագիտական, ուսումնական և գիտական այս որակավորումների համար,
- ❖ Իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

4.3 ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՍ

- ❖ Արդյոք ուսանողները ներգրավված են ՈՍ գործընթացներում (ԱՅՈ/ՈԶ) - ԱՅՈ
- ❖ Եթե այո, խնդրում ենք մանրամասնել (ավելացրեք աղբյուրը, որին հղում եք կատարել):
- ❖ Ներգրավվածության մակարդակը (օրինակ, որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- ❖ «Բարձրագույն կրթության մասին» օրենքի համաձայն՝ ուսանողները ներգրավված են կառավարման ու որոշումների կայացման, մասնավորապես՝ դասավանդման որակի ապահովմանը վերաբերող հարցերում,
- ❖ որակի գնահատման ընթացակարգը պետք է նաև ներառի ուսանողների կողմից կրթական ծրագրերի գնահատումը,
- ❖ որակի ներքին գնահատման ընթացակարգը նաև ներառում է ուսանողների կողմից գնահատումը,
- ❖ «Բարձրագույն կրթության մասին» Սերբիայի օրենքի 56-րդ հոդվածի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է ունենա ուսանողական խորհուրդ,
- ❖ բարձրագույն ուսումնական հաստատության խորհուրդը, հղում կատարելով «Բարձրագույն կրթության մասին» Սերբիայի օրենքին, պետք է կազմված լինի նաև ուսանողների ներկայացուցիչներից,
- ❖ «Բարձրագույն կրթության մասին» Սերբիայի օրենքի համաձայն՝ կրթական ծրագրերի որակի ապահովմանը վերաբերող հարցերի քննարկման և/կամ որոշումների կայացման, կրթական ծրագրերի փոփոխման, ուսումնառության արդյունավետության վերլուծության և ECTS կրեդիտների քանակի որոշման ժամանակ ուսանողների ներկայացուցիչները պետք է ներկայացված լինեն մասնագիտական

մարմիններում և դրանց կառուցվածքային միավորումներում: Ուսանողները պետք է կազմեն մասնագիտական մարմինների անդամների մինչև 20%-ը,

- ▶ «Բարձրագույն կրթության մասին» Սերբիայի օրենքի համաձայն գործում են համալսարանների ուսանողական ասոցիացիան և մասնագիտական առաջխաղացման դասընթացների հաստատությունների ուսանողական ասոցիացիան ներկայացնելու համար ուսանողների որպես բարձրագույն կրթության գործընթացում գործընկերների, ընդհանուր շահերը: Համալսարանների ուսանողական ասոցիացիան բաղկացած է համալսարանների ուսանողական խորհուրդների ներկայացուցիչներից: Մասնագիտական առաջխաղացման դասընթացների հաստատությունների ուսանողական ասոցիացիան իր հերթին կազմված է մասնագիտական առաջխաղացման դասընթացների հաստատությունների ուսանողական խորհուրդների ներկայացուցիչներից: Համապատասխան ասոցիացիայի կանոնադրությունը սահմանում է և կարգավորում ասոցիացիայի աշխատանքն ու վերջինիս վերաբերող կազմակերպչական խնդիրները: Օրենքի համաձայն ուսանողական ասոցիացիաների երկու ներկայացուցիչներ առանց քվեարկության իրավունքի կարող են մասնակցել Ազգային խորհրդի աշխատանքներին:
- ▶ Ժամկետները (օրինակ, կրթական ծրագրի ավարտին, ուսումնական ողջ տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
 - ▶ Ուսումնական տարվա ընթացքում և կրթական ծրագրի ավարտին ուսանողների կողմից հետադարձ կապի ապահովում կրթական ծրագրերի որակի վերաբերյալ այն հաստատություններում, որտեղ իրենք ներկայացված (սովորում) են,
 - ▶ ուսանողները նաև կարող են իրենց շահերը ներկայացնել՝ որպես ուսանողական ասոցիացիայի անդամներ առանց քվեարկության իրավունքի մասնակից լինելով խորհրդի հանդիպումներին:
- ▶ Ձևերը (օրինակ, ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
 - ▶ Ուսանողները բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում ներկայացնում են իրենց շահերը՝ գլխավորապես ներկայացված լինելով որակի ապահովման տարբեր մարմիններում
 - ▶ Մասնագիտական մարմիններ,
 - ▶ Ուսանողական խորհուրդ,
 - ▶ Բարձրագույն կրթության խորհուրդ,
 - ▶ Ուսանողական ասոցիացիաներ:



5 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎԱԼՆԵՐ. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ¹⁰

Հեղինակ՝ Քրիստի Պոպեսկու (ԵՈՒՄ)

5.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԻՆԶԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Բակալավր	—	Միջնակարգ կրթության դիպլոմ (Մակարդակներ, միջազգային բակալավրիական կրթաստիճան, շտաբանդական բարձրագույն կամ համարժեք որակավորումներ միջնակարգ դպրոցն ավարտելու համար)	3 տարի, որոշ դեպքերում՝ 4
Հիմնական կրթաստիճան	—	Միջնակարգ կրթության դիպլոմ (Մակարդակներ, միջազգային բակալավրիական կրթաստիճան, շտաբանդական բարձրագույն կամ համարժեք որակավորումներ միջնակարգ դպրոցն ավարտելու համար)	2 տարի
Բարձրագույն կրթության դիպլոմ	—	Միջնակարգ կրթության դիպլոմ (Մակարդակներ, միջազգային բակալավրիական կրթաստիճան, շտաբանդական բարձրագույն կամ համարժեք որակավորումներ միջնակարգ դպրոցն ավարտելու համար)	2 տարի
Բարձրագույն կրթության վկայական	—	Միջնակարգ կրթության դիպլոմ (Մակարդակներ, միջազգային բակալավրիական կրթաստիճան, շտաբանդական բարձրագույն կամ համարժեք որակավորումներ միջնակարգ դպրոցն ավարտելու համար)	1 տարի
Բարձրագույն ազգային դիպլոմներ (ԲԱԴ)	—	Միջնակարգ կրթության դիպլոմ (Մակարդակներ, միջազգային բակալավրիական կրթաստիճան, շտաբանդական բարձրագույն կամ համարժեք որակավորումներ միջնակարգ դպրոցն ավարտելու համար)	2 տարի
Մագիստրոս	—	Բակալավրի աստիճան	1 կամ 2 տարի
Գործարար կառավարման մագիստրոս	—	Բակալավրի աստիճան	2 տարի
Գիտությունների թեկնածու (PhD)/ դոկտորանտուրա	—	Բակալավրի աստիճան	3 տարի

REFERENCE

10 Անդրադառնալով Մեծ Բրիտանիայում որակի ապահովմանն ուսանողների մասնակցությունը՝ մենք հղում ենք կատարել Անգլիայում, Ուելսում և Հյուսիսային Իռլանդիայում տիրող իրադրությանը՝ միաժամանակ նշելով, որ Շոտլանդիայում որոշակիորեն տարբեր իրավիճակ է:

ՄԻՆԶԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Հետբուհական դիպլոմներ և որակավորումներ	—	Բակալավրի աստիճան	Մի քանի ամսից մինչ 1 կամ 2 տարի
Մասնագիտական և միջին մասնագիտական որակավորում	—	Բակալավրի աստիճան	Մի քանի ամսից մինչ 1 կամ 2 տարի
Վերաորակավորման դասընթացներ	—	Բակալավրի աստիճան	Մի քանի ամսից մինչ 1 կամ 2 տարի

5.2 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյո՞ք կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշ բարձրագույն կրթության որակի ապահովման մասին: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել:

Այո, կա Մեծ Բրիտանիայի Բարձրագույն կրթության որակի կոդեքս՝ գրված Որակի ապահովման գործակալության (ՈԱԳ, QAA) կողմից Մեծ Բրիտանիայի բարձրագույն կրթության ոլորտի հետ համագործակցության արդյունքում: Մեծ Բրիտանիայի Բարձրագույն կրթության որակի կոդեքսն ունի երեք հիմնական բաժիններ՝ ակադեմիական/ուսումնական չափանիշների հաստատում և պահպանում, ակադեմիական/ուսումնական որակի ձեռքբերում և ապահովում ու բարձրագույն կրթության ապահովման մասին տեղեկատվություն:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները փաստաթուղթն օգտագործում են որպես ելակետային ուղեցույց բարձրագույն կրթության որակի տեսականը սահմանելու համար՝ հաշվի առնելով իրենց սեփական ներքին քաղաքականությունները: Փաստաթուղթն օգտագործվում է նաև ՈԱԳ-ի գնահատողների կողմից՝ որպես հղման հիմնական աղբյուր բարձրագույն կրթության գնահատման աշխատանքում:

Աղբյուր: <http://www.qaa.ac.uk/assuring-standards-and-quality/the-quality-code>

- Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կայքի հասցեն/փաստաթուղթը):

Այո, կա Որակի ապահովման գործակալություն անկախ մարմինը, որը պատասխանատու է Մեծ Բրիտանիայում չափանիշների մշտադիտարկման ու բարձրագույն կրթության որակի ապահովման համար: ՈԱԳ-ն ըստ օրենքի անմիջականորեն նպատակ չի հետապնդում արտաքին գնահատումներ իրականացնելու, սակայն գործակալությունը պայմանագրեր ունի Մեծ Բրիտանիայի՝ Ֆինանսավորող պետական մարմինների հետ (Բարձրագույն կրթության ֆինանսավորման շտաբնական խորհուրդ, Բարձրագույն կրթության ֆինանսավորման Ուելսի խորհուրդ, Զբաղվածության և կրթության բաժին, Բարձրագույն կրթության ֆինանսավորման Անգլիայի խորհուրդ) վերջիններիս գործառույթն իրականացնելու, այսինքն՝ հավաստելու համար, որ ֆինանսավորման գործընթացում ևս ապահովվում է որակը:

ՈԱԳ-ի կողմից իրականացվող բոլոր գնահատումները փորձագիտական գնահատումներ են և ենթադրում են աշխատանքային թիմում նվազագույնը մեկ ուսանողի մասնակցություն:

Աղբյուրներ: <http://www.qaa.ac.uk/about-us>

http://www.qu.edu.qa/offices/vpcao/documents/accreditation/UK_QA_in_higher_education.pdf

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՍ

- Արդյո՞ք ուսանողները ներգրավված են ՈԱ: (ԱՅՈ/ՈԶ)
- ԱՅՈ: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել (ավելացրեք աղբյուրը, որին հղում եք կատարել):
- Ներգրավվածության մակարդակը (օրինակ, որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)

Որակի արտաքին ապահովման համար.

- Փորձագետներ. նվազագույնը մեկ ուսանող գնահատման յուրաքանչյուր թիմի լիիրավ անդամ է:
- Տեղեկություն հաղորդողներ. բոլոր գնահատումները ենթադրում են ուսանողական խմբերի և ուսանողական ներկայացուցչական մարմինների հետ հանդիպումներ:

Որակի ներքին ապահովման համար.

- Փորձագետներ. կան համալսարաններ, որտեղ ուսանողները կարող են լինել որակի ապահովման համար պատասխանատու ներքին մարմինների լիիրավ անդամներ:
- Խորհրդատու գործընկերներ. կան համալսարաններ, որտեղ ուսանողական ներկայացուցչական մարմինները խորհրդատվություն են ստանում այն կառույցների կողմից, որոնք պատասխանատու են որակի ներքին ապահովման համար:
- Տեղեկություն հաղորդողներ. ապահովում են հետադարձ կապն ուսումնառության, դասավանդման կամ ուսանողական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերյալ:
- Ժամկետները (օրինակ, կրթական ծրագրի ավարտին, ուսումնական ողջ տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)

Որակի արտաքին ապահովման համար.

- Ուսումնական ողջ տարվա ընթացքում՝ կախված այն հանգամանքից, թե ՈԱԳ-ի գնահատումները երբ են իրականացվում:

Որակի ներքին ապահովման համար.

- Ուսումնական ողջ տարվա ընթացքում, եթե ուսանողները որակի ներքին ապահովման մարմինների լիիրավ անդամներ են կամ խորհրդատու գործընկերներ:
- Երբեմն կրթական ծրագրի ընթացքում կամ վերջինիս ավարտին ուսումնառության, դասավանդման կամ ընդհանրապես ուսանողական կյանքի վերաբերյալ հետադարձ կապն ապահովվելու համար:
- Ձևերը (օրինակ, ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)

Որակի արտաքին ապահովման համար.

- Որպես լիիրավ անդամներ՝ գնահատման թիմում մասնակցություն:
- Արտաքին գնահատման թիմերին հետադարձ կապի ապահովում (ֆոկուս խմբերին մասնակցության կամ հարցաթերթեր լրացնելու միջոցով):
- Արտաքին գնահատման թիմերին ուսանողների գրավոր հարցման (Student Written Submission) ներկայացում:

Որակի ներքին ապահովման համար.

- Որպես լիիրավ անդամներ կամ խորհրդատու գործընկերներ՝ որակի ներքին ապահովման մարմիններում մասնակցություն (օրինակ, մասնակցություն հանդիպումներին, աշակցություն քաղաքականությունների, հաշվետվությունների ու վերլուծությունների մշակմանն ու կատարմանը,

որոնք իրականացվում են որակի ապահովման մարմինների կողմից, որակի ապահովմանը վերաբերող որոշումների քվեարկությանը մասնակցություն և այլն):

- Հետադարձ կապի ապահովում կառուցվածքային տարբեր միավորներին (օրինակ, դասավանդման և ուսումնառության մեթոդների, կրթական ծրագրի, լուրաքանչյուր դասախոսի կատարողականի, ուսանողների կարողությունների, ուսանողներին աջակցության ծառայությունների և այլնի մասին):
- Հետադարձ ընդհանուր կապի ապահովում բարձրագույն կրթության մասին (ուսանողների ազգային հարցում, հիմնական տեղեկատվության հավաքագրում):
- Որպես լիիրավ անդամներ՝ որոշումների կայացման գործընթացում մասնակցություն:
- Ուսանողական տեսակետի ներկայացում ուսանողական միությունների կամ այլ ներկայացուցչական մարմինների միջոցով:
- Ուսումնառության և դասավանդման զարգացման աջակցություն (օրինակ, հետադարձ կապի ապահովման միջոցով, կրթական նոր ծրագրերի մշակման գործընթացին մասնակցությամբ):

Աղբյուրներ:

<http://www.qaa.ac.uk/partners/students>

<http://www.enqa.eu/indirme/papers-and-reports/workshop-and-seminar/Student%20involvement.pdf>

<http://www.qaa.ac.uk/partners/students>

<http://www.qaa.ac.uk/partners/students/our-review-methods/student-reviewers>





6 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ. ԲԵԼԱՌՈՒՍ

Հեղինակ՝ Գրգոր Հովհաննիսյան (ՀՈՒԱԱ)

6.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բուհական ծրագրեր	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
I մակարդակ (բարձրագույն կրթությամբ մասնագետ)	—	Նախնական կամ միջին մասնագիտական վերապատրաստման դասընթացի կամ միջնակարգ մասնագիտացված կրթության վկայական կամ դիպլոմ	4–6 տարի
II մակարդակ (մագիստրատուրա) (մագիստրոսական կրթաստիճան)	—	I մակարդակ (բարձրագույն կրթությամբ մասնագետ)	1–2 տարի
Ասպիրանտուրա «Հետազոտող» (հետբուհական կրթաստիճան)	—	II մակարդակ (մագիստրատուրա) (մագիստրոսական կրթաստիճան)	3–5 տարի
Դոկտորանտուրա (դոկտորական կրթաստիճան)	—	Ասպիրանտուրա «Հետազոտող» (հետբուհական կրթաստիճան)	

6.2 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյո՞ք կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշ բարձրագույն կրթության որակի ապահովման մասին: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել:

«Կրթության մասին» Բելառուսի Հանրապետության կողմից

http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=32756

Кодекс Республики Беларусь об образовании” Кодекс Республики Беларусь об образовании 2011 թ.

<http://cis.rudn.ru/document/show.action;jsessionid=B894B7CAF5530180D7F3EA2618254DD5?document.id=2108>

Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կալքի հասցեն/փաստաթուղթը):

Բելառուսի Հանրապետության Կրթության նախարարություն

<http://edu.gov.by>

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ

- Արդյո՞ք ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում (ԱՅՈ/ՈԶ) ՈԶ



7 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ.ՄՈԼԴՈՎԱ

Հեղինակ՝ Գրեգոր Հովհաննիսյան (ՀՈՒԱԱ)

7.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բուհական ծրագրեր	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Բակալավր	17	DIPLOMA DE BACALAUREAT միջնակարգ դպրոցի երաշխավորագիր/ վկայական/ դիպլոմ	3-4 տարի (180–240 ECTS) 5-6 տարի բժշկության և դեղագիտության համար (300– 360 ECTS)
Մագիստրոս	—	baza diplomei de licență (բակալավրի աստիճան)	1.5–2 տարի (90–180 ECTS)
Դոկտորական կրթաստիճան (Ph.D)	—	Մագիստրոսի աստիճան	Հիմնականում 3 տարի (180 ECTS) հումանիտար, բժշկական, անասնաբուժական, գյուղատնտեսական, կենսաբանական և դեղագիտական մասնագիտությունների դեպքում 4 տարի
Հետդոկտորանտուրա (postdoctoral)	—	Գիտությունների թեկնածուի աստիճան (Ph.D)	Առավելագույնը 3 տարի

7.2 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սրբոց կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշ բարձրագույն կրթության որակի ապահովման մասին: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել:

Մոլդովայում որակի ապահովման դրույթը սահմանվում է «Կրթության մասին» կողմնորոշող 99-րդ հոդվածով (<http://lex.justice.md/viewdoc.php?action=view&view=doc&id=355156&lang=1>).

Այլ պաշտոնական փաստաթղթեր.

- «Կրթության մասին» օրենք (nr. 547-XIII of 21.07.1995)
- «Կրթական հաստատությունների գնահատման և հավատարմագրման մասին» օրենք (Nr. 1257-XIII of 16.07.1997)
- «Կրթական հաստատությունների գնահատման և հավատարմագրման մասին» որոշում (Nr. 423-XIV of 04.06.1999)
- «Որակի կառավարման համակարգի (ՈԿՀ) մասին» որոշում (2000թ.)
- ԲՈՒՀ ՈԿՀ-ի գործառնության հայեցակարգային բենչմարք (2009թ.)
- Մոլդովայի Հանրապետության ազգային ռազմավարության մշակում 2012–2020թթ.

- Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կայքի հասցեն/փաստաթուղթը):

Մի քանի ամիս առաջ՝ 01.04.2015թ., Մոլդովայի կառավարությունը հավանության տվեց նախնական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային գործակալության ANACIP-ի ստեղծմանն ու գործառնությունը (National Agency for Quality Assurance in Vocational Education, <http://anacip.md/>): ANACIP-ն իրականացնելու է կրթական գործընթացի արտաքին գնահատում: Այն գնահատելու է միջին մասնագիտական տեխնիկական բոլոր դպրոցների, համալսարանների և վերապատրաստման հաստատությունների կրթական ծրագրերն ու իրականացնելու է ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Բացի այդ, Մոլդովայում նաև գործում են AQAS (Agency for Quality Assurance through Accreditation of Study Programmes, <http://www.aqas.de/>) և ARACIS (Romanian Agency for Quality Assurance in Higher Education <http://www.aracis.ro/>) գործակալությունները:

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ

- Արդյոք ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում (ԱՅՈ/ՈԶ) – ԱՅՈ:
- Եթե այո, խնդրում ենք մանրամասնել (ավելացրեք աղբյուրը, որին հղում եք կատարել):
 - Ներգրավվածության մակարդակը (օրինակ, որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
 - Չկա որևէ տեղեկատվություն:
 - Ժամկետները (օրինակ, կրթական ծրագրի ավարտին, ուսումնական ողջ տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
 - Չկա որևէ տեղեկատվություն:
 - Ձևերը (օրինակ, ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
 - Ուսանողները ներգրավված են որակի ապահովման ազգային գործակալությունների կառավարման կառուցվածքում, արտաքին գնահատման թիմում՝ որպես դիտորդ անդամներ, ինքնավերլուծության հաշվետվության պատրաստման աշխատանքներում, շարունակական գործընթացներում (աղբյուրը՝ Բոլոնիայի գործընթացի կատարման ազգային հաշվետվություն 2012–2015թթ., Մոլդովա):





8 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆ

Հեղինակ՝ Գրեգոր Հովհաննիսյան (ՀՈՒՍԱ)

8.1 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բուհական ծրագրեր	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Բակալավր		Ավագ դպրոցի վկայական (ատեստատ)	4 տարի (180-240 ECTS) 5 տարի բժշկական և գյուղատնտեսության ծրագրերի համար (300 ECTS)
Մագիստրոս	—	Բակալավր (Bachelor)	1-2 տարի (60-120 ECTS)
Գիտությունների թեկնածու/ Հետազոտող (ասպիրանտուրա, PhD)	—	Մագիստրոսի դիպլոմ	3 տարի
Գիտությունների դոկտոր	—	Գիտությունների թեկնածու/ Հետազոտող	—

8.2 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյո՞ք կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշներ բարձրագույն կրթության որակի ապահովման վերաբերյալ: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել հղումը, կայքի հասցեն կամ փաստաթուղթը):

ՈԱԱԿ հայեցակարգ http://www.anqa.am/am/Portals/o/nor_hayecakarg_december_27.pdf

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 14.12.2004թ. (<http://www.armenic.am/?laid=2&com=module&module=menu&id=97>)

- Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել կայքի հասցեն կամ փաստաթուղթը):

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ (կայքի հասցե՝ <http://www.anqa.am/am/>):

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՍ

- Սրիլանդի ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում (ԱՅՈ/ՈԶ) ԱՅՈ

- Եթե այո, խնդրում ենք մանրամասնել (ավելացնել աղբյուրը, որին հղում եք կատարում)

- Ներգրավվածության մակարդակը (օր.՝ որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն, ներկայացնել որոշ օրինակներ) Որպես տեղեկություններ հաղորդող քննարկումների մասնակիցներ.

Հավատարմագրման խորհրդի փորձագետներ (Աղբյուր՝ ՈԱԱԿ Հավատարմագրման ձեռնարկ¹¹, Փորձագիտական խմբի ձևավորման կանոնակարգ¹²).

ՈԱԱԿ հոգաբարձուների խորհրդի անդամներ¹³

Հավատարմագրման կոմիտեի անդամներ (Աղբյուր՝ Հավատարմագրման հանձնաժողովի կազմավորման եւ գործունեության կանոնադրություն¹⁴)

- Ժամկետները (օր.՝ կրթական ծրագրի ավարտին, ողջ ուսումնական տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)

Ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ կախված հավատարմագրման ժամանակացույցից:

- Ձևերը (օր.՝ ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)

Ուսանողները ներգրավված են ազգային ՈԱ գործակալությունների կառավարման կառույցներում, որպես լիիրավ անդամներ՝ արտաքին գնահատման թիմերում, որպես դիտորդներ՝ արտաքին գնահատման թիմում, ինքնագնահատման հաշվետվությունների նախապատրաստման գործընթացում, հետագա ընթացակարգերում և արտաքին գնահատումների համար որոշումների կայացման գործընթացում (աղբյուր՝ National Report regarding the Bologna Process implementation 2012–2015 Armenia («Հայաստանում Բոլոնիայի գործընթացի ներդրման ազգային հաշվետվություն 2012–2015թթ.»)):

REFERENCE

11 <http://www.anqa.am/en/Portals/0/ANQA%20Accreditation%20Manual.pdf>

12 <http://www.anqa.am/am/%D4%B3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%B6%D5%A5%D6%80/%D4%B8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D6%80.aspx>

13 <http://www.anqa.am/en/ANQA/StructureandStaff.aspx>

14 <http://www.anqa.am/am/Portals/0/Havataarmagman%20karg-nor.pdf>

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՋ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(հեղինակ՝ Ներսես Գևորգյան, ՀՊՏՀ)

- ❖ Ներգրավվածության մակարդակը (օր.՝ որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- 1 Մասնակցություն որակի արտաքին ապահովման (հավատարմագրման) գործընթացին որպես փորձագետներ,
- 2 Մասնակցություն որակի ներքին ապահովմանը որպես տեղեկություններ հաղորդողներ (մասնակցություն ինքնագնահատմանը և դասավանդման գնահատմանը, ուսումնառության և արդյունավետության գնահատման հարցումների միջոցով):
- ❖ օ Ժամկետները (օր.՝ կրթական ծրագրի ավարտին, ողջ ուսումնական տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
Մոտավորապես 2 շաբաթ
- ❖ Ձևերը (օր.՝ ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- ❖ Պատասխանելով հարցաթերթերի,
- ❖ Ինքնավերլուծությանը մասնակցություն,
- ❖ Մասնակցություն որակի արտաքին ապահովմանը:

ՈՒՍԱՆՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՋ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵԳՊԱՌՈՒՄ

(հեղինակ՝ Ելենա Բայթալյան, ԵԳՊԱ)

- ❖ Ներգրավվածության մակարդակը (օր.՝ որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- Ուսանողները մասնակցում են Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվող հարցումներին, հարցազրույցներին և ֆոկուս խմբերին:
- Որոշ ուսանողներ մասնակցում են ԵԳՊԱ-ի ինքնավերլուծության հաշվետվությունների նախապատրաստմանը:
- ❖ Ժամկետները (օր.՝ կրթական ծրագրի ավարտին, ողջ ուսումնական տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- Հարցումներն ու հարցազրույցները իրականացվում են ամբողջ տարվա ընթացքում: Ուսանողների շրջանում անցկացվում են նաև տարեկան և 3-4 տարվա կտրվածքով հարցումներ:
- Օրինակներ՝ ուսանողների կողմից դասընթացի գնահատումը, ուսանողների կողմից Ակադեմիայի ռեսուրսներով ապահովվածության և ծառայությունների մատուցման գնահատումը:
- ❖ Ձևերը (օր.՝ ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- ԵԳՊԱ-ն ներկայումս նախապատրաստում է ինքնավերլուծության հաշվետվություն ինստիտուցիոնալ հավատարմագրմանը ներկայացնելու համար:



9 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ ՎՐԱՍՏԱՆ

Հեղինակ՝ Անուշ Գասպարյան (ՈԱԱԿ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2-րդ աշխատանքային փաթեթի վերջնարդյունք 2.1-ի պահանջի կատարման նպատակով իրականացվել է ոլորտային նյութերի ուսումնասիրություն փաստաթղթերի, իրավական ակտերի և կայքերի ուսումնասիրության հիման վրա: Սույլ ժամկետների պատճառով սույն հետազոտության հիմքում ընկած են Վրաստանի օրենքը բարձրագույն կրթության մասին, Վրաստանի Կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքի աղբյուրները, ինչպես նաև Տեմպուս ծրագրի որոշ փաստաթղթեր և հաշվետվություններ:

9.1 ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վրաստանի բարձրագույն կրթության համակարգը բաղկացած է երեք ցիկլից՝ Առաջին ցիկլ՝ Բակալավրի աստիճան (240 կրեդիտ),
Երկրորդ ցիկլ՝ Մագիստրոսի աստիճան (120 կրեդիտ),
Երրորդ ցիկլ՝ Դոկտորական աստիճան (180 կրեդիտ):

Առաջին ցիկլի ավարտին տրվում է որակավորված մասնագետի աստիճան (120–180 կրեդիտ): Բժշկությունը, ատամնաբուժությունը և անասնաբուժությունը (300–360 կրեդիտ) ինտեգրված կրթական ծրագրեր են, և նրանց ուսումնառության վերջնարդյունքները համապատասխանում են որակավորման, որը համարժեք է մագիստրոսի աստիճանի:

Բարձրագույն կրթության (ԲԿ) համակարգի վերոնշյալ երեք ցիկլերը կիրառվում են Վրաստանում: Բակալավրի, մագիստրոսական և դոկտորական ծրագրերը արդեն ներդրվել են բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դոկտորական աստիճանից ցածր ծրագրերում ընդգրկված են բոլոր ուսանողները երկցիկլ աստիճանով համակարգում (բացառությամբ այնպիսի առանձին մասնագիտությունների, ինչպիսին է բժշկությունը): Կարճ ցիկլով բարձրագույն մասնագիտական ծրագրերը դասավանդվում են որպես բակալավրիական կրթություն այն ուսանողների համար, որոնց համար առաջնային է պրակտիկ ունակությունների ձեռքբերումը:

Նման ծրագրի ավարտից հետո նրանք ստանում են որակավորված մասնագետի դիպլոմ: Այս ծրագրերը համապատասխանում են 120-ից 180 ECTS կրեդիտին: Դրանք կարող են համարվել բակալավրիական ծրագրին համարժեք, եթե ուսանողները շարունակեն իրենց ուսումը: Բակալավրիական ծրագրերը չեն կարող պարունակել 240 ECTS կրեդիտից պակաս կրեդիտ, այնինչ մագիստրոսական ծրագրերով նախատեսվում է 120 ECTS կրեդիտ, իսկ դոկտորականում՝ 180 ECTS: Բացի այդ, բժշկությունը, ատամնաբուժությունը և անասնաբուժությունը (300–360 կրեդիտ) ինտեգրացված կրթական ծրագրեր են, և նրանց ուսումնառության վերջնարդյունքները համապատասխանում են որակավորման, որը համարժեք է մագիստրոսի աստիճանի:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի բարձրագույն կրթական հաստատությունները հետևյալն են.

- ❶ Քոլեջ՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որը իրականացնում է մասնագիտական բարձրագույն ուսումնական ծրագիր և/կամ միայն առաջին ցիկլի ծրագրեր՝ բակալավրի ծրագիր,
- ❷ Համալսարան (Teaching University)՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է բարձրագույն ուսումնական ծրագիր/ ծրագրեր (բացառությամբ դոկտորական ծրագրերի): Պահանջվում է նաև երկրորդ ցիկլի իրականացումը՝ մագիստրոսական ուսումնական ծրագիր/ծրագրեր,

- Համալսարանն բարձրագույն ուսումնական հաստատություն, որը իրականացնում է ուսումնական ծրագրեր ակադեմիական կրթության բոլոր երեք փուլերում:¹⁵

ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Միայն այն անձինք, ովքեր ունեն լրիվ ընդհանուր կրթության պետական վկայական կամ դրան համարժեք այլ փաստաթուղթ, իրավունք ունեն ձեռք բերելու բակալավրի աստիճան:¹⁶ Առաջին փուլի տևողությունը, որպես կանոն, չորս տարի է:¹⁷ Բակալավրի կամ դրան հավասարեցված այլ աստիճանը հիմք է հանդիսանում մագիստրատուրա ընդունվելու համար:¹⁸ Այն անձը, ով ունի մագիստրոսի կամ դրան հավասարեցված աստիճան, իրավունք ունի դիմելու դոկտորական ծրագրի:¹⁹ Մագիստրոսական ծրագրի տևողությունը երկու տարի է:²⁰ Ուսանողները, որոնք ստացել են մագիստրոսի աստիճան, կարող են շարունակել իրենց ուսումը երրորդ ցիկլում: Դոկտորական կրթությունը ենթադրում է երեք տարվա ուսում և ավարտվում է ատենախոսության ներկայացմամբ և պաշտպանությամբ:

ԲՆ մասին Վրաստանի օրենքը չի սահմանում բարձրագույն կրթություն ստանալու համար նվազագույն տարիք:

Բուճական ծրագրեր	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Բակալավր	—	Միջնակարգ դպրոցի դիպլոմ	4 տարի՝ 240 կրեդիտ
Մագիստրոս	—	Բակալավրի կամ դրան համարժեք աստիճան	2 տարի՝ 120 կրեդիտ
Հետբուճական ծրագրեր Դոկտորական	—	Մագիստրոսի աստիճան	3 տարի՝ 180 կրեդիտ

9.2 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԼԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԵՏԵՑԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՎ

«Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքը, «Կրթության որակի բարելավման մասին» Վրաստանի օրենքը, փոխկապակցված այլ իրավական ակտեր և մարմիններ:

ՊԱՐԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Համաձայն «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքի՝ ինքնավարության սկզբունքը բուճերում հանդես է գալիս որպես ազգային ԲՆ համակարգի հիմնարար սկզբունքներից մեկը: Համաձայն «Բարձրագույն կրթության մասին» օրենքի նոր լրացումների (2013թ.) բուճերը ձեռք են բերում նոր իրավական կարգավիճակ, և նրանց պարտականությունները համապատասխանաբար տարբերվում են պետական մարմինների պարտականություններից: Գոյություն ունի բուճերի երեք իրավական ձև՝ պետական, մասնավոր և շահույթ չհետապնդող ոչ առևտրային իրավաբանական անձ (NNLE) (վերջինը կարող է նույնպես լինել պետական): Պետական մարմինների գործառույթներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով: Պետական մարմինները ունեն որոշակի լիազորություններ բարձրագույն կրթության ոլորտում՝

REFERENCE

- 15 <http://www.mes.gov.ge/content.php?id=131&lang=eng> Վրաստանի Կրթության և գիտության նախարարություն
- 16 «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենք, Գլուխ I, Ընդհանուր դրույթներ, Հոդված 48, 1.
- 17 <http://www.euroeducation.net/prof/goergco.htm>
- 18 Նույն տեղում, Հոդված 48, 3
- 19 Նույն տեղում, Հոդված 49, 1
- 20 Supra note 3

Վրաստանի խորհրդարանը սահմանում է ԲԿ քաղաքականության և կառավարման հիմնական ուղեւիշները և ընդունում համապատասխան օրենսդրական ակտեր:

Վրաստանի Կառավարությունը սահմանում է պետական կրթական դրամաշնորհի չափը և մշակում սոցիալական և պետական ծրագրեր բարձրագույն կրթության ոլորտում, Կառավարությունը նույնպես կարող է հիմնել բուհ որպես պետական իրավաբանական անձ: Վարչապետը նշանակում է Կրթության որակի բարձրագույն ազգային կենտրոնի և Ազգային քննական կենտրոնի (National Centre for Educational Quality Enhancement and National Examination Centre) տնօրեններին:

Կրթության և գիտության նախարարությունը (MoES)՝ իրականացնում է ընդհանուր ԲԿ քաղաքականությունը, մշակում ԲԿ համակարգի ցուցանիշների հիմնական փաստաթղթերը, առաջարկում է կրթական պետական դրամաշնորհների չափը:

Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը և Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը որոշում են բարձրագույն կրթության, կերպարվեստի և սպորտի ոլորտներում նորմատիվ ակտերը և բարձրագույն կրթության, կերպարվեստի և սպորտի ֆինանսավորումը: Պետական իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բուհերը Կրթության և գիտության նախարարության կողմից ավելի խիստ են վերահսկողվում: Կրթության և գիտության նախարարությունը հաստատում է բուհերի կանոնադրությունը՝ Ներկայացուցիչների խորհրդի ներկայացուցիչ հետո, վերահսկում է նրանց գործունեությունը և պատասխանատու է ԲԿ ոլորտում իրավական ակտերի բարելավման համար: Պետության կողմից ստեղծված ոչ առևտրային, շահույթ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակով բուհերի դեպքում պետական վերահսկողությունը բավականին թույլ է: Միաժամանակ, բուհերը՝ իրենց իրավաբանական կարգավիճակից անկախ, ինքնուրույն են ուսումնական, հետազոտական և ստեղծագործական աշխատանքի քաղաքականության մշակման ու հաստատման, անձնակազմի ընտրության, ներքին կարգավորումների, կառավարման մարմինների և պաշտոնյաների ընտրության գործընթացներում, ֆինանսական և այլ սեփականության տնօրինման հարցերում: Բուհերի ձևական ինքնուրույնությունը, որը նախատեսված է ըստ օրենքի, ներկայումս դառնում է արդյունավետ ինքնուրույնություն: Պետական բուհերի Ռեկտորների խորհրդի և Մասնավոր բուհերի Ռեկտորների խորհրդի հիմնումը 2009թ. դրա վառ ապացույցն է:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններ. «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքը (Գլուխ 4) սահմանում է պետական բուհերի կառավարման մարմինները՝ որպես պետական իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մարմիններ: Նոր օրենսդրությունը սահմանում է ֆակուլտետի անդամներին, ուսանողներին և դասախոսներին՝ որպես հիմնական դերակատարներ/գործակալներ բարձրագույն կրթության մեջ: Բուհերի Ռեկտորներն այլևս չեն նշանակվում Նախագահի կողմից, այլ ընտրվում են Գիտական խորհրդի անդամների կողմից:²¹

ԲԱՐՁՐԱԳՈՒԹՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ

Սույն օրենքը կարգավորում է կրթական և գիտահետազոտական աշխատանքների անցկացումը Վրաստանի բարձրագույն կրթության հաստատություններում, բարձրագույն կրթության կառավարման և ֆինանսավորման սկզբունքներն ու գործընթացները, սահմանում է բարձրագույն կրթության հաստատության հիմնադրման, գործունեության իրականացման, վերակազմակերպման և լուծարման կանոնները և գործընթացները, ինչպես նաև լիցենզավորման և հավաստագրման սկզբունքները:

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է բարձրագույն կրթության նպատակները և սույն հոդվածի 2 մասի դ) կետը սահմանում է:²²

«Բարձրագույն կրթության հաստատություններում որակի ապահովման համակարգի՝ ներառյալ լիցենզավորման համակարգի, հավաստագրման համակարգի և որակի կառավարման (ապահովման) ծառայությունների ձևավորումը»:

REFERENCE

21 European Commission http://eacea.ec.europa.eu/tempus/participating_countries/overview/georgia_tempus_country_fiche_final.pdf

22 <http://eqe.ge/res/docs/2014120816000571585.pdf>

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ

Սույն օրենքի նպատակն է սահմանել կրթության որակի բարձրացման աջակցության մեխանիզմների իրավական հիմքերը: Օրենքի 2-րդ գլուխը նվիրված է լիազոր մարմնին կրթության որակի բարձրացմանը աջակցության մեխանիզմներին, և համաձայն 3-րդ հոդվածի՝ բարձրագույն կրթության ՈԱ լիազոր մարմինն է Կրթության որակի բարձրացման ազգային կենտրոնը, իսկ հոդված 5-ը սահմանում է, որ Կենտրոնի գործունեության հիմնադիր տնօրենները պետք է աջակցեն կրթության որակի բարձրացմանը՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ և ալլն:²³

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման մեխանիզմները, ներառյալ՝ թույլտվության և հավատարմագրման գործընթացները, սահմանված են «Կրթության որակի բարձրացման մասին» օրենքով (հուլիս 2010թ.): Լիազորման մեխանիզմի միջոցով հաստատությունն ստանում է բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ, եթե այն համապատասխանում է տվյալ ոլորտներում գործունեություն ծավալելու համար սահմանված չափանիշներին: Այդ չափանիշներն են՝ ա) կրթական ծրագրերը, բ) նյութական ռեսուրսները, գ) մարդկային ռեսուրսները: Պետությունը ճանաչում է միայն այն դիպլոմները, որոնք տրվել են լիցենզավորված բուհերի կողմից: Թույլտվությունը տրվում է հինգ տարի ժամկետով: Հավատարմագրման գործընթացի արդյունքում է որոշվում տվյալ բուհի և/կամ կրթական ծրագրի կարգավիճակը (պետություն կողմից ճանաչվող վկայական տալու իրավունք): Հավատարմագրման գործընթացի նպատակն է համակարգային ինքնազնադատման անցկացումը համալսարաններում: Այն նպատակ ունի բարելավելու կրթության որակը՝ ունենալով կրթական ծրագրեր, որոնք համապատասխանում են հավատարմագրման ու որակի բարձրացման մեխանիզմների չափանիշներին:²⁴

Հատուկ պետական մարմին՝ Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնը (NCEQE) հիմնադրվել է թույլտվության և հավատարմագրման գործընթացների իրականացման համար: Այն գործում է Եվրոպական տարածքում բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական Չափանիշներին և Ուղենիշներին (ԵՉՈՒ) համաձայն:²⁵

Հանրային իրավունքի իրավաբանական անձը (LEPL)՝ Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնը հիմնադրվել 2010թ. սեպտեմբերի 1-ին, «Կրթության որակի բարձրացման մասին» Վրաստանի օրենքով: LEPL-ի իրավահաջորդն է EQE-ն՝ Կրթության հավատարմագրման ազգային կենտրոնը:

2010թ. «Կրթության որակի բարձրացման մասին» և «Հանրակրթության մասին» Վրաստանի օրենքներում կատարված փոփոխությունների արդյունքում պարտադիր լիցենզավորումն ու ինստիտուցիոնալ հավատարմագրումը փոխարինվել են թույլտվության գործընթացով: Փոփոխվել է նաև հավատարմագրման բովանդակությունը, այն սահմանում է կրթական ծրագրի համատեղելիությունը հավատարմագրման չափանիշներին և նպատակ ունի ներդնելու կրթական որակի բարելավման համար կանոնավոր ինքնազնադատմանը և որակի ապահովման բարձրացման հետագա խթանումը: Թույլտվությունը կրթական հաստատությունների համար պարտադիր գործընթաց է, մինչդեռ հավատարմագրումը կամավոր է:

Մինչ այս փոփոխությունները լիցենզավորումն ու հավատարմագրումը պարտադիր չէին ուսումնական հաստատության կարգավիճակ ստանալու համար: Լիցենզավորման գործընթացներն իրականացվում էին Վրաստանի Կրթության և գիտության նախարարության կողմից, իսկ հավատարմագրումը՝ LEPL-ի Կրթության հավատարմագրման ազգային կենտրոնի կողմից:

Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունն սկսել է ինստիտուցիոնալ հավատարմագրումը 2004թ., և 2006թ. մարտի 27-ին հիմնադրել Հանրային իրավունքի իրավաբանական անձը (LEPL)՝ Վրաստանի կրթական հաստատությունների հավատարմագրման պետական ծառայությունը: Հետագայում հիմնադրվեց Կրթության հավատարմագրման ազգային կենտրոնը՝ Վրաստանի Կրթության և գիտության նախարարի №222 հրամանի համաձայն: Այն իրականացնում է Վրաստանի նախնական, մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատությունների ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները:²⁶

REFERENCE

23 <http://eqe.ge/res/docs/201412081600419310.pdf>

24 Տե՛ս վերևում՝ Եվրոպական Հանձնաժողով

25 Նույն տեղում

26 <http://eqe.ge/eng/static/5/about-us>

Վրաստանում որակի ապահովման գործընթացի շահառուների հարցման արդյունքները, կրթության որակի բարելավման ազգային կենտրոն (NCEQE), Թիֆլիս, 2013թ.

Հետևյալ հարցումն իրականացվել է «Բարձրագույն կրթության որակի ապահովման միջազգայնացման և համագործակցության խթանման» ծրագրի շրջանակներում 2013թ. փետրվարից մարտ ամիսների միջև ընկած ժամանակահատվածում:

Ուսանողներ. հարցվել է ընդհանուր 140 ուսանող գործընկեր բոլոր չորս բուհերում:

Ուսանողների հարցաշարերը վերաբերվում էին հավաստագրման գործընթացներում ուսանողների մասնակցության փորձին, բուհի որակի ապահովման գործընթացում ուսանողների սպասելիքներին և ներգրավվածությանը: Հարցվել են բակալավրի ուսանողներ (67.4%), մագիստրոսներ (18.8%), դիպլոմավորված բժշկ ուսանողներ (3.6%) և PhD ուսանողներ/հետազոտողներ (10.1%): Մասնակիցների 97.8% ներգրավվել է ԲԿ ծրագրերի հավաստագրմանը: Ուսանողների 84.7%-ը նշել են, որ իրենք տեղեկացված են ծրագրի հավաստագրման գործընթացի վերաբերյալ և տեսնում են հավաստագրված ծրագրով ուսանելու առավելությունները, մինչդեռ 15.3% նշել է, որ նրանք տեղեկացված չեն

ծրագրերի հավաստագրման գործընթացի մասին: Հարցումը ցույց տվեց, որ ուսանողներն ունեն հստակ պատկերացում ծրագրերի հավաստագրման գործընթացի և դրա առավելությունների մասին, բացի այդ, ուսանողների 74.3%-ը տեղեկացված է ուսումնական հաստատությունների լիցենզավորման վերաբերյալ, մինչդեռ հարցվողների 23.6% դրա մասին ոչինչ չգիտեին: Հարցվածների 83.1%-ը նշել է, որ լիցենզավորումը խիստ էական է, մինչդեռ 10.3%-ը համարում են այն բավական նշանակալի, և համարյա 3%-ի կարծիքով այն կարևոր չէ:

Հարցվածների մեծ մասը կողմ էր այն գաղափարին, որ ուսումնական հաստատությունների համար առկա չափանիշները սահմանվեն պետության կողմից (78.3%), և միայն 13.8% էր նշել, որ չունի հստակ պատկերացում, թե ով պետք է որոշի այդ չափանիշները, իսկ 8%-ը դեմ էր պետության կողմից այդ չափանիշների սահմանմանը: Ինչ վերաբերվում է որակի ապահովման գործընթացին ուսանողների ներգրավվածությանը, ապա արդյունքները ցույց են տալիս, որ այն ցածր է: Ուսանողների միայն 12.5%-ն է ակտիվորեն ներգրավված, իսկ հարցվածների մնացած 87.5% արձագանքեց, որ նրանք երբևէ ներգրավված չեն եղել:
(http://www.picqa.org/en/Portals/o/PicqaFiles/6_2%20NCEQE%20stakeholder%20surveys%20oreport%20ofinal%203-%20onk.pdf)

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՍ

Համաձայն «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքի՝ ուսանողական ինքնակառավարմանը տրամադրվել են որոշակի լիազորություններ բուհի կառավարման մասնակցության համար: Համաձայն «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքի 45-րդ հոդվածի՝ ուսանողի ինքնակառավարումը կանոնադրության համաձայն ենթադրում է.

- ❑ ուսանողների մասնակցությունը բարձրագույն ուսումնական հաստատության կառավարմանը,
- ❑ ուսանողների իրավունքների պաշտպանության ապահովումը,
- ❑ Ֆակուլտետային խորհրդի ներկայացուցիչներին ընտրելու իրավունքը,
- ❑ Ֆակուլտետի/բարձրագույն կրթական հաստատության կառավարման համակարգերը և ուսուցման որակի բարձրացման համար առաջարկությունների ներկայացում ֆակուլտետային խորհրդին, Կառավարման խորհրդին ու Գիտական խորհրդին և կանոնադրությամբ սահմանված այլ գործողությունների իրականացում:²⁷

Լրացուցիչ տեղեկատվություն. հեղինակներ՝ Միհայի Անդրոնի և Յուստին Անդրոնի (ՍՀՀ)

REFERENCE

27 <http://eqe.ge/res/docs/2014120816000571585.pdf>

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈԱ

- ◉ Եթե այո, խնդրում ենք մանրամասնել (ավելացնել աղբյուրը, որին հղում եք կատարել) ներգրավվածության մակարդակը (օր.՝ որպես տեղեկություն հաղորդողներ, փորձագետներ և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- ◉ Ուսանողները ընդգրկված են ծրագրերի որակի համակարգային գնահատման և դրանց կառավարման գործընթացներում:
- ◉ Ուսանողները համակողմանիորեն ներգրավված են գործընթացում առցանց հարցումների միջոցով:
 - ◉ Հարցումների արդյունքները (ինչպես որակական, այնպես էլ քանակական) կիրառվում են ուսումնական ծրագրերի բարելավման ժամանակ:
 - ◉ Նպատակաուղղված միջամտությունը ներառում է կրթական ծրագրերի և վարչական ծառայությունների մատուցման խնդիրների քննարկման և վերլուծության համար ուսանողների ֆոկուս-խմբերի ստեղծումը:
 - ◉ Ժամկետները (օր.՝ կրթական ծրագրի ավարտին, ողջ ուսումնական տարվա ընթացքում և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
 - ◉ Ուսումնական կիսամյակի ավարտին՝ երկու անգամ ուսումնական տարվա ընթացքում:
- ◉ Ձևերը (օր.՝ ինստիտուցիոնալ գրավոր հարցաթերթերի լրացում, արտաքին աուդիտին մասնակցություն և այլն. ներկայացնել որոշ օրինակներ)
- ◉ Առցանց հարցումներ, ֆոկուս-խմբեր, մասնակցություն հավաստագրման գործընթացին (այսինքն՝ արտաքին աուդիտին):



10 ՀԱՎԵԼՎԱԾ ԲԿ ԵՐԿՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ. ՈՒԿՐԱԻՆԱ

Հեղինակ՝ Էլլա Կարապետյան (ՈԱԱԿ)

10.1 Ա) ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բուհական ծրագրեր	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Նախաավարտական Կրտսեր մասնագետ (թերի բարձրագույն կրթություն)	-	Ամբողջական հիմնական միջնակարգ կրթության վկայական ²⁹ կամ որակավորված աշխատողի դիպլոմ	2-3 տարի. 120-180 ECTS (3-4 տարի՝ հիմնվելով միջնակարգ կրթության վկայականի վրա)
Ավարտական	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Бакалавр Բակալավր	-	Կրտսեր մասնագետի դիպլոմ կամ ամբողջական ընդհանուր միջնակարգ կրթության վկայական	3-4 տարի. 180-240 ECTS (2-3 տարի կրտսեր մասնագետի դիպլոմի դեպքում)
Специалист Մասնագետ	-	Բակալավրի դիպլոմ	1-1.5 տարի. 60-90 ECTS (Բժշկության և անասնաբուժության ծրագրերը տևում են 5-6 տարի. 300-360 ECTS)
Магистр Մագիստրոս	-	Բակալավր	1-2 տարի. 60-120 ECTS (Բժշկության և անասնաբուժության ծրագրերը ունեն հետևյալ տևողությունն ալլ է)
Հետբուհական	Նվազագույն տարիք	Պահանջվող հավաստագիր	Տևողություն
Գիտությունների թեկնածու (դոկտորական)	-	Մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմ	3 տարի
Գիտությունների դոկտոր (հետ-դոկտորական)	-	Գիտությունների թեկնածուի դիպլոմ	3 տարի

10.2 Բ) ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սրբաշուք կա որևէ օրենք/կարգավորում և/կամ ազգային չափանիշներ բարձրագույն կրթության որակի ապահովման մասին: Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ և նշել համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (նշել կայքը/փաստաթուղթը):

Խնդրում ենք հաշվի առնել, որ ներկայումս Ուկրաինան իրականացնում է կառուցվածքային բարեփոխումներ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում: «Բարձրագույն կրթության մասին» Ուկրաինայի նոր

REFERENCE

28 Հիմնական միջնակարգ կրթություն ունեցող անձինք կարող են սովորել կրտսեր մասնագետի վերապատրաստման կրթական և մասնագիտական ծրագրերում՝ միաժամանակ ձեռք բերելով ամբողջական միջնակարգ կրթություն

օրենքն ուժի մեջ է մտել 2014 թ. սեպտեմբերին, և որակի ապահովման նոր համակարգի հիմնումը սկզբնական փուլում է (կարգավորումների ստեղծում, համապատասխան մարմիններ և այլն):

Որակի ապահովման համակարգը երկրում կարգավորվում է «Բարձրագույն կրթության մասին» Ուկրաինայի օրենքի բաժին V-ի 16–25-րդ հոդվածներով (Բարձրագույն կրթության որակի ապահովում) (ուժի մեջ է մտել 2014 թ. սեպտեմբերի 6-ին):²⁹

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի՝ Ուկրաինայում բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգը ներառում է.

- բուհերի կողմից կրթական գործունեության որակի ապահովման համակարգ և բարձրագույն կրթության որակի ապահովում (որակի ներքին ապահովման համակարգ),
- բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական գործունեության որակի արտաքին ապահովման համակարգ և բարձրագույն կրթության որակի ապահովում,
- ԲՆ որակի ապահովման ազգային կենտրոնի և բարձրագույն կրթության որակի գնահատման և ապահովման անկախ հաստատությունների աշխատանքի որակի ապահովման համակարգ:

Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնն օրենքով լիազորված մշտական կոլեգիալ մարմին է, որը բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում իրականացնում է պետական քաղաքականություն (Օրենքի 17-րդ հոդված):

Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի իրավասությունները սահմանված են Օրենքի 18-րդ հոդվածով:

Օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի անդամակցության կարգը:

Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի նիստերը իրավազոր են, եթե նիստին ներկա է անդամների առնվազն երկու երրորդը: Բոլոր հարցերով որոշումները կայացվում են Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի անդամներն իրականացնում են քաղաքացիաիրավական պայմանագրերով իրենց վերապահված գործառույթները: Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը կարող է ներգրավել անկախ հաստատություններ՝ բարձրագույն կրթության որակի գնահատման և որակի ապահովման հավատարմագրման, կրթական ծրագրերի հավաստագրման համար մասնակցելու համար (Օրենքի հոդված 20):

Համաձայն Օրենքի 21-րդ հոդվածի՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ոլորտային փորձագիտական խորհուրդները ձևավորվում են 9-ից 15 անդամից 3 տարին չգերազանցող ժամկետով: Անդամներն ունեն ակադեմիական որակավորում համապատասխան ոլորտում (առարկայում) կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ այդ ոլորտում՝ բացառությամբ ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների: Ոլորտային փորձագիտական խորհուրդներում կարող են ընդգրկվել պետական հաստատությունների ներկայացուցիչներ, գործատուների և իրենց կազմակերպությունների, ասոցիացիաների, մասնագիտական միությունների, բոլոր իրավակազմակերպական ձևերով բուհերի, ակադեմիական ինստիտուտների, Ուկրաինայի Գիտությունների ազգային ակադեմիայի, ոլորտային գիտական ակադեմիաների, ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և միջազգային փորձագետներ:

Բարձրագույն կրթության որակի գնահատման և ապահովման անկախ ինստիտուտը Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից լիազորված ոչ պետական կազմակերպություն է (ինստիտուտ, գործակալություն, բյուրո և այլն), որը բուհերին բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացում առաջարկություններ ներկայացնելու և աջակցելու նպատակով գնահատում է կրթական ծրագրերը, կրթական արդյունքները և/կամ բարձրագույն ուսումնական հաստատությունները (իրենց կառուցվածքային ստորաբաժանումները), ինչպես նաև կրթական ծրագրի հավատարմագրման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (Օրենքի 23-րդ հոդված):

REFERENCE

29 Այս օրենքի համառոտ տարբերակն է միայն հասանելի անգլերենով, իսկ օրենքն ամբողջությամբ առկա է միայն ուկրաիներենով

Օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է, որ բարձրագույն կրթության ոլորտում կրթական գործունեությունը իրականացվում է բարձրագույն կրթական հաստատությունների և ակադեմիական ինստիտուտների կողմից (որոնք պատրաստում են գիտությունների դոկտորի աստիճան ունեցող մասնագետներ), որոնց լիցենզիաները տրվում են կրթության և գիտության ոլորտում լիազորված կենտրոնական գործադիր մարմնի կողմից՝ համաձայն Ուկրաինայի Նախարարների Կաբինետի սահմանած կանոնակարգի: Որպեսզի ձեռք բերվի կրթական գործունեության իրականացման թույլտվություն, հայտատուն կրթության և գիտության ոլորտում լիազորված կենտրոնական գործադիր մարմնին ներկայացնում է գրավոր դիմում և Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագիտական կարծիքը: Հիմնվելով ստացված փաստաթղթերի վրա՝ կրթության և գիտության ոլորտում լիազորված կենտրոնական գործադիր մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությանը տրամադրում է կրթական գործունեության իրականացման լիցենզիա: Լիցենզիայի տրամադրման մերժման որոշումը պետք է լինի հիմնավորված և պարունակի հղումներ կրթական գործունեության չափանիշների հատուկ դրույթներին, որոնց հայտատուն չի համապատասխանում: Յուրաքանչյուր մասնագիտության համար լիցենզիաները տրամադրվում են առանձին, տասը տարի ժամկետով և կարող են անվավեր ճանաչվել օրենքով սահմանված պատճառներով: Լիցենզիայի տրամադրման մասին տեղեկատվությունը և անվավեր ճանաչումը տեղադրվում են Կրթության հարցերով միասնական պետական էլեկտրոնային բազայում:

Կրթական ծրագրերի հավաստագրման գործընթացը հաստատված է Օրենքի 25 հոդվածով:

Աղբյուր.

- Ուկրաինայի Գերագույն Ռադայի 2014 թվականի հուլիսի 1-ի № 1556-VII «Բարձրագույն կրթության մասին Ուկրաինայի օրենքը» (տեքստի համառոտ բովանդակությունը), 2015 թվականի մայիսի 15-ին վերականգնված <http://zakon4.rada.gov.ua/laws/anot/en/1556-18> [տեքստի համառոտ բովանդակություն անգլերենով]:
- Ուկրաինայի Գերագույն Ռադայի 2014 թվականի հուլիսի 1-ի № 1556-VII Բարձրագույն կրթության մասին Ուկրաինայի օրենքը (էջ 1-ից 6), (առանց ամսաթվի): Վերականգնված 2015 թվականի մայիսի 15-ին <http://zakon4.rada.gov.ua/laws/show/en/1556-18> [ուկրաիներեն].
- Արդյո՞ք ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կա գնահատման որևէ գործակալություն, որի նպատակը բարձրագույն կրթության որակի ապահովման գնահատումն է: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել և ավելացնել համապատասխան աղբյուրը, որին հղում եք կատարել (ավելացնել հղումը, կայքի հասցեն կամ փաստաթուղթը):

«Բարձրագույն կրթության մասին» Ուկրաինայի օրենքը սահմանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ստեղծման և գործունեության կարգը: Այն հանդես է գալիս որպես Օրենքով լիազորված կոլեգիալ մարմին բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման քաղաքականության իրականացումը: Այնուամենայնիվ, օրենքի կիրառումը դեռևս նախնական փուլում է մարմինը դեռ ձևավորվում է և ստեղծվում են համապատասխան կարգավորումները:

Ներկա պահին Ուկրաինայի որակի ապահովման համակարգը իրականացվում է լիցենզավորման և հավաստագրման գործընթացներով: Ուկրաինայի Կրթության և գիտության նախարարության լիցենզավորման, հավաստագրման և ծանուցման վարչությունը պատասխանատու է բուհերի լիցենզավորման և հավաստագրման համար: Բարձրագույն կրթության որակի ապահովման հսկողության գործընթացում ներգրավված այլ պետական մարմիններն են Պետական հավաստագրման հանձնաժողովը, Գերագույն ատեստավորման հանձնաժողովը, Ուկրաինայի Կրթական հաստատությունների պետական տեսչությունը:

Աղբյուր.

- Ուկրաինայի Կրթության և գիտության նախարարություն DINZ. (առանց ամսաթվի). Վերականգնված է 2015 թվականի մայիսի 15-ին <http://old.mon.gov.ua/en/>

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՍ

Արդյո՞ք ուսանողները ներգրավված են ՈՍ գործընթացներում (ԱՅՈ/ՈԶ)

«Բարձրագույն կրթության մասին» Ուկրաինայի օրենքը սահմանում է ուսանողների մասնակցությունը որակի արտաքին ապահովման մակարդակում, մասնավորապես, որպես Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ոլորտային փորձագիտական խորհուրդներ (Օրենքի 21 հոդված):

«Ոլորտային փորձագիտական խորհուրդները կարող են ներառել հանրային ներկայացուցիչներ, գործատուներ, նրանց կազմակերպությունների և միությունների, մասնագիտական ասոցիացիաների, սեփականության բոլոր


ձևերով գործող բարձրագույն կրթական հաստատությունների, գիտական ինստիտուտների, ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչություններ և միջազգային փորձագետներ»:

Որոշ հաշվետվություններ նույնպես ցույց են տալիս ուսանողների ներգրավվածությունը որակի ներքին ապահովման մակարդակում՝ ներառելով վերջիններիս պատասխանները հարցաշարերին, այնուամենայնիվ, առկա է բուհերի և ԿԳՆ Բարձրագույն կրթության վարչության կողմից լրացուցիչ հետազոտության կարիք:³⁰

REFERENCE

30 http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/links/documents/HigherEducation_in_Ukraine_Russian.pdf

11 ՀԱՎԵԼՎԱԾ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ



11.1 ԳԵՐՄԱՆԻԱ

Հեղինակ՝ Քրիստի Պոպեակու (ԵՈՒՄ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր՝ կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուժ է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալություն, նախարարություն)

Համապատասխանությունը ESPAQ-ին

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն):

Գերմանիա

Եվրոպական ուսանողական միություն (ԵՈՒՄ), «Ուսանողների համար որակի որոնում. հիմունքներ», 2012թ. (The European Students Union, Quest for Quality for Students: Going back to basics, 2012) <http://www.esu-online.org/asset/News/6068/QUEST-for-quality-for-students-publication-Part1.pdf>

Ազգային մակարդակ, տարբեր դաշնային միավորների ուսանողներ

Ուսանողների ազգային անկախ միություններ (fzs), դաշնային միավորներ ուսանողների միություններ, Գերմանիայում ուսումնական ծրագրերի ընդհանուր ժողովներ

Այն ուսանողներն ՈԱ փորձագիտական բազայի լավ օրինակ է

2011թ-ից ուսանողները, որոնք ներգրավված են Գերմանիայում ՈԱ համակարգում, համարվում են փորձագետներ՝ ձևավորելով փորձագետների բազա: Այն միակ լեզվաբան կառույցն է, որը կարող է պատվիրակել ուսանողներին Գերմանիայի որակի ապահովման համակարգի հետ կապված ցանկացած պաշտոնում հանդես գալու համար: Այն բաղկացած է մոտավորապես 700 ուսանողից և կառավարվում է երեք կազմակերպության կողմից՝ Գերմանիայի ուսանողների ազգային միություն, դաշնային միավորների ուսանողների միություն, Գերմանիայում ուսումնական ծրագրերի ընդհանուր ժողովներ: Այն պատասխանատու է ուսանողների իրենց պաշտոններին համապատասխան վերապատրաստումների համար և ապահովում է կանոնավոր գործողություններ, որոնք թույլ են տալիս ուսանողներին անընդհատ լինել տեղեկացված և իրականացնել փորձի ու գիտելիքների փոխանակում: Գրեթե բոլոր ուսումնական ծրագրերը ներկայացվում են փորձագետների բազայի ուսանողների կողմից՝ չնայած որ նրանց միջև առկա են որոշակի անհամամասնություններ:

Նրանց կառավարման գլխավոր մարմինն ընդհանուր ժողովն է, որն ընդգրկում է բոլոր անդամներին: Այն գործադիր կոմիտե է, որն իր կազմում ունի 3-ից 5 անդամ, որոնք պատասխանատու են ամենօրյա աշխատանքի համար: Փորձագետների բազան ունի երկու աշխատող, որոնք պատասխանատու են գործակալությունների հետ կապի, ուսումնական տարիների և վերապատրաստումների պլանավորման համար, որակի ստուգումներին ուսանողների պատվիրակման և ֆինանսավորման համար: Գնահատումների համար ուսանողների ընտրությունը կատարվում է պատահականորեն և գենդերային հավասարության սկզբունքով:

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, քաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/գնահատման գործընթաց/ կառուցվածքային հետադարձ կապ

ԲՆ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Միայն նրանք են, որոնք առաջնորդում և կազմակերպում են ՈԱ ուսանողների փորձագետների բազան

Միայն ուսանողներն աշխատողներին հետ միասին

Տեղեկատվությունը բացակայում է

Մեծ թվով ուսանողներ, որոնք մասնակցում են փորձագետների բազայի գործունեությանը, ակտիվորեն ընդգրկված են իրենց համալսարանի ՈԱ գործընթացներում կամ արտաքին գնահատումներում

11.2 ՌՈՒՄԻՆԻԱ

Հեղինակ՝ Քրիստի Պոպեսկու (ԵՈՒՄ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր.՝ կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուն է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալություն, նախարարություն)

Համապատասխանությունը ESPAQ-ին

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն):

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, քաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/գնահատման գործընթաց/ կառուցվածքային հետադարձ կապ

Բկ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Ռումինիա

Ռումինիայում Ուսանողական կազմակերպությունների ազգային միությունը Dragoș Dumitru, Գլխավոր քարտուղար

Ազգային մակարդակի ներառյալ տարբեր Բկ հաստատությունների ուսանողներին

Ռումինիայում Ուսանողական կազմակերպությունների ազգային միությունը (ANOSR), Ռումինիայի Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն (ARACIS)

Այն ցույց է տալիս օրինակ, թե ինչպես կարող է բարձրացվել ուսանողների ներգրավվածության մակարդակը ՈԱ գործընթացներում

Ռումինիայի ուսանողները ունեն որակի ապահովման ուսանողների փորձագիտական իրենց բազա, որը կառավարվում է ANOSR-ի կողմից: Բազայի անդամ յուրաքանչյուր ուսանող պետք է մասնակցի վերապատրաստմանը, որը կազմակերպվում է ANOSR-ի կողմից: Վերապատրաստման ժամանակ ուսանողները տեղեկացվում են Բոլոնիայի գործընթացի, որակի ապահովման ազգային շրջանակների, ներքին և արտաքին ՈԱ փորձերի մասին և, վերջում, նրանք սիմուլյացիոն արտաքին գնահատում են իրականացնում վերապատրաստում իրականացնող համալսարանում (ներառյալ փորձագիտական այցեր, քննարկումներ շահակիցների հետ, պաշտոնական փաստաթղթերի, ոլորտային նյութերի ուսումնասիրություն և վերջում գրավոր հաշվետվություն):

Վերապատրաստումը տևում է 4-ից 6 օր և մասնակիցները գնահատվում են ANOSR-ի կողմից՝ հիմնվելով վերապատրաստման ընթացքում իրենց ցուցաբերած արդյունքների վրա, իրենց ներգրավվածությանը սիմուլյացիոն արտաքին գնահատմանը և վերջնական հաշվետվությանը:

Հիմնվելով այդ գնահատականի վրա՝ լավագույն մասնակիցները ընտրվում են արտաքին գնահատման թիմերում հետագայում մասնակցելու ՈԱ գնահատման գործընթացին:

Վերապատրաստումը անցկացվում է յուրաքանչյուր տարի ANOSR-ի և տարբեր բուհերի կողմից: Վերապատրաստումը բաց է Ռումինիայի յուրաքանչյուր ուսանողի համար և այն պաշտոնապես տեղադրվում է ANOSR-ի վեբկայքում և գովազդվում է լրատվամիջոցներով: Ամբողջ բովանդակության պատրաստումը և մասնակիցների ընտրությունը կատարվում է ANOSR-ի կողմից:

Ուսանողները ANOSR-ի միջոցով կազմակերպում են վերապատրաստման բովանդակությունը, պատասխանատու են հայտագրման գործընթացի համար, ընտրում են լավագույն հայտատուներին և աջակցում են վերապատրաստման ընթացքին՝ նիստերին: Ամբողջ գործընթացը ղեկավարում է ANOSR-ի կողմից, մինչդեռ ARACIS-ը և ընդունող Բկ հաստատությունը աջակցում են ռեսուրսներով:

Ուսանողների ներկայացուցիչները, ANOSR-ի խորհրդի անդամները (վերապատրաստումը կազմակերպելու և կառավարելու), ARACIS-ի վարչական անձնակազմը (ֆինանսական գործողությունների համար), Բկ հաստատության վարչական և գիտական անձնակազմը (սիմուլյացիայի ընթացքում)

ANOSR-ն իրականացնում է մշտադիտարկում և մասնակիցների գնահատում: Ծրագրի ավարտին կազմակերպվում է հանդիպում ANOSR-ի և ARACIS-ի միջև, որտեղ ANOSR-ը ներկայացնում է վերապատրաստման արդյունքներն ամփոփող հաշվետվություն, ներառյալ՝ մասնակիցների հետադարձ կապը, ովքեր լրացրել են վերապատրաստման ավարտին տրվող հարցթերթերը:

Վերապատրաստումը օգնում է ուսանողներին լավ պատրաստված լինել ՈԱ արտաքին գնահատման համար: Նրանք տիրապետում են ողջ անհրաժեշտ տեղեկատվությանը այն մասին, թե ինչպես է արտաքին գնահատումը կազմակերպվում, և նրանք կարող են ավելի վստահ լինել՝ որպես գնահատման թիմի լիիրավ անդամներ: Մյուս կողմից, նրանք տեղեկանում են ESG-ի մասին և ՈԱ ազգային մեթոդաբանության մասին, որով նրանք կարող են ավելի ներգրավված լինել իրենց համալսարանների ՈԱ ներքին գործընթացներում:

11.3 ՌՈՒՄԻՆԻԱ

Հեղինակներ՝ Մարիա Անդրոնի և Ֆլորին Ֆայնիսի (ՄՀՀ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր՝ կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուհ է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալության, նախարարություն)

Համապատասխանությունը ESPAQ-ին

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն)

Ռումինիա

Որակի ձեռնարկով սահմանված կանոններն ու գործընթացները գործում են համալսարանական մակարդակում <http://www.spiruharet.ro>, <http://www.edu.ro>

Կրթական ծառայությունների զարգացումը առաջարկվել է ֆակուլտետների և համալսարանի կողմից

Համալսարանի ղեկավարությունը և ARACIS-ը (Ռումինիայի Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն), Կրթության և գիտական հետազոտությունների նախարարությունը

Հատուկ ունակություններ ձեռք բերելու նպատակով ուսանողներին տրամադրվող կրթական ծառայությունների հարմարեցումը նպաստում է ԲԿ որակի բարձրացմանը

Համալսարանի կողմից առաջարկվող կրթական/զարգացման միջավայրով ուսանողների բավարարվածության մակարդակի գնահատման գործընթացի մշակում և իրականացում:

Նկարագրություն.

Յուրաքանչյուր ֆակուլտետում իրականացվող հարցումները նպատակ ունեն պարզելու ուսանողների կարծիքը համալսարանի կողմից տրամադրվող ուսուցման/զարգացման միջավայրի և իրենց ուսումնական ընթացքի վերաբերյալ:

Այս ամենը իրականացնելու համար օգտագործվում են հարցաթերթեր, որոնք ներառված են ուսանողների բավարարվածության գնահատման գործընթացում:

Որակի գնահատման և ապահովման հանձնաժողովների անդամները կիրառում են հարցաթերթերը, և յուրաքանչյուր բաժնի անդամները հավաքում, միավորում են արդյունքները և ամփոփում դրանք եզրակացությունների տեսքով ու տրամադրում ֆակուլտետի ղեկավարությանը: Այդ արդյունքների հիման վրա իրականացվում են միջոցառումներ ուսման/զարգացման միջավայրի և ուսանողների ուսման ընթացքի շարունակական բարելավման համար:

Տնօրնության (Direcția) SS վարչությունը աջակցում է հարցաշարերի էլեկտրոնային գրատախտակին հարմարեցման և արդյունքների էլեկտրոնային կենտրոնացման հարցում:

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, քաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/գնահատման գործընթաց/ կառուցվածքային հետադարձ կապ

ԲԿ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Պատասխանելով հարցաթերթերի հարցերին յուրաքանչյուր ուսանող տալիս է օբյեկտիվ գնահատական համալսարանի կողմից տրամադրվող ուսուցման/զարգացման միջավայրի վերաբերյալ:

Այս գործընթացի իրականացման ժամանակ ուսանողներին որպես անդամ ֆակուլտետային մակարդակով Որակի գնահատման և ապահովման հանձնաժողովներում ակտիվ ներգրավմամբ երաշխավորվում է արդյունքների վավեր լինելն ու դրանց ճիշտ մեկնաբանումը:

Ակադեմիական աշխատակազմը, տեխնիկական և վարչական անձնակազմը, քաղաքականություն մշակողները, ուսանողները, Որակի գնահատման և ապահովման հանձնաժողովների անդամները, ՄՀՀ Որակի կառավարման վարչությունը, Ուսումնական բաժնի ծրագրի խորհուրդը, ֆակուլտետի խորհուրդը, SS վարչությունը, ԲԿ որակի գծով պրոռեկտորը:

Ուսուցման/զարգացման միջավայրի վերաբերյալ Ուսանողների բավարարվածության գնահատման գործընթացի ճիշտ իրականացումը մշտադիտարկման է ենթարկվում անմիջականորեն Կառավարման խորհրդի ներքին աուդիտի հանձնաժողովի և ֆակուլտետային հանձնաժողովների, ՄՀՀ Կառավարման խորհրդի կողմից հատուկ մասնագիտացված հանձնաժողովի միջոցով. ՄՀՀ Որակի կառավարման վարչության միջոցով:

ԲԿ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեքը բխում է Ուսանողների բավարարվածության գնահատման գործընթացի ճիշտ իրականացումից, բարձր մակարդակի ներդրումների աճի հաշվին, որոնք ուղղվում են Hebased համալսարանի կողմից առաջարկվող ուսումնական/զարգացման միջավայրի բարելավմանը:

11.4 ՖԻՆԼԱՆԴԻԱ

Հեղինակ՝ Քրիստի Պոպեսկու (ԵՈՒՄ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր՝ կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուհ է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալության, նախարարություն)

Համապատասխանությունը ESPAQ-ին

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն)

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, քաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/գնահատման գործընթաց/ կառուցվածքային հետադարձ կապ

ԲԱ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Ֆինլանդիա

Եվրոպական ուսանողական միություն, «Ուսանողների համար որակի որոնում. հիմունքներ», 2012թ. (The European Students Union, Quest for Quality for Students: Going back to basics, 2012)

<http://www.esu-online.org/asset/News/6068/QUEST-for-quality-for-students-publication-Part1.pdf>

Ազգային մակարդակ, ներառյալ՝ Բարձրագույն կրթության գնահատման ֆիննական խորհուրդը (FINHEEC) և 9 համալսարաններ ու կիրառական գիտությունների համալսարաններ

Բարձրագույն կրթության գնահատման ֆիննական խորհուրդ (FINHEEC)

Բուհերում ՈԱ ուսանողակենտրոն համակարգի ձևավումն աջակցելու օրինակ է

Որպես Բոլոնիայի գործընթացի և առաջին անգամ 2005թ. ընդունված ESG-ի արդյունք թուրք ֆիննական համալսարանները ներդրեցին ՈԱ համակարգեր: Որպեսզի որակի ապահովման համակարգերն ավելի ուսանողակենտրոն լինեն, FINHEEC-ն աջակցել է համալսարաններին 2005թ. աշնանը 9 համալսարանների ու կիրառական գիտությունների համալսարանների համար կազմակերպելով վերապատրաստման ծրագիր: Բուհերը փորձել են մշակել իրենց համար ուսանողների դերի նորարարական մոդելներ, և վերապատրաստման արդյունքում ակնհայտ է դարձել, որ համալսարանների ՈԱ-ները կարող են ապահովել ուսանողների մասնակցության բազմաթիվ տեսակներ:

FINHEEC-ի լիիրավ երկու անդամը ուսանող են (12-ից), որոնք ներկայացնում են ազգային ուսանողական երկու միություններ (SYL ուսանողների ներկայացուցիչ համալսարաններում և SAMOK ուսանողների ներկայացուցիչ կիրառական գիտությունների համալսարաններում): Այս կերպ ուսանողներն ընդգրկվել են վերապատրաստման գործընթացում և տվել հետադարձ կապ:

FINHEEC-ի անդամներ, 9 հալսարանների ակադեմիական և տեխնիկական անձնակազմի ներկայացուցիչներ և ՈԱ ներքին քաղաքականություն իրականացնողներ:

Տեղեկատվությունն այս մասին բացակայում է:

Բուհերը վերապատրաստման արդյունքում տեղեկացվել են որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության դերի վերաբերյալ, և դա օգնել է նրանց գտնել իրենց տեղական միջավայրում ուսանողների ներգրավման նոր ձևեր:

11.5 ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

Հեղինակ՝ Լաուրա Ֆեդելի (ՄՀ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր.՝ կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուն է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալության, նախարարություն)

Համապատասխանությունը ESPAQ-ին

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն):

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, քաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/գնահատման գործընթաց/ կառուցվածքային հետադարձ կապ

ԲՆ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Պորտուգալիա

http://www.forumgestaoensinosuperior2011.ul.pt/docs_documentos/15/paineis/08/ma_ms_cc.pdf

Կոիմբրայի համալսարան (UC)

Կոիմբրայի համալսարանը ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցություն

2014 թվականին UC-ն ձեռք բերեց գերազանցության ճանաչման հատուկ հիշատակում՝ Պորտուգալիայի որակի համակարգում (Menção Honrosa no Prémio de Excelência 2004 - Sistema Português da Qualidade). UC -ում ՈԱ գործընթացում ուսանողների մասնակցության համապատասխան դերը

Կոիմբրայի համալսարանը եվրոպական մակարդակի վկայակոչվող հաստատություն է այն ժամանակվանից, երբ այն ճանաչվել է Պորտուգալիայի որակի չափանիշներին լավագույնս բավարարող համալսարան: UC-ը հաստատեց ռազմավարական ծրագիր (2011–2015թթ.), որում հետազոտության, դասավանդման և գիտելիքի փոխանցման վերաբերյալ առաքելության մեջ առանձնացվում է դասավանդումը և որակի գնահատումը: Ռազմավարական նախաձեռնություններից է այն, որ UC-ի կողմից կարևորվում է ուսանողների մասնակցությունն ու ներգրավվածությունը: Մշտադիտարկման և աջակցման գործիքները հիմնվել են, որպեսզի ինտեգրվեն որակի ապահովման համակարգի հետ (Sistema de Gestão da Qualidade da UC):

Հղում իրականացվող փաստաթղթերից՝ UC-ի կողմից մշակված որակի ձեռնարկում (Manual de Qualidade) առանձին գլուխ նվիրված է ուսուցման/սովորելու գործընթացի որակին (տե՛ս, օրինակ, գաղափարապես վանդակը նկար «Մանկավարժական որակի կառավարումը»): INCLUDEPICTURE "https://lh4.googleusercontent.com/A_3VeudAV4MIyCrDWoBkGsUKojmZVDorowD9qjMu021LfgLCc0VntaQzvu42LxGgKXomQfPGtYqFHHx3iL4_rSIEtN0UikOUk97CZsJTIn7SMbOYH9W7ESS6ntw7VgvgFK_YzebAfyUNq64" * MERGEFORMATINET

Դասախոսների և ուսանողների հետ անցկացվող աուդիտները որակի համակարգի համապատասխան կողմերն են: Ներքին աուդիտները կազմակերպվում են յուրաքանչյուր կիսամյակ և ներգրավվում են տարբեր մասնագիտություններ ունեցող անձնակազմի ներկայացուցիչներ: Ծրագրի գնահատման գրավոր հաջաթերթիկները ներկայացվում են ուսման առաջին և երկրորդ փուլերում:

Ուսանողները խորը համագործակցության մեջ են գտնվում համալսարանի ստորաբաժանումների հետ՝ կիսելով որակի ապահովման համակարգի համապատասխան դերը դասավանդման/ ուսումնառության գործընթացի որակի համակարգի ձևավորման հարցում, ինչպես նաև ձեռք բերված տվյալների խորհրդակցությունների և քննարկումների շարունակական գործողություններում:

Ակադեմիական անձնակազմը, ուսանողները, ներքին և արտաքին շահակիցները

Գրավոր հարցաթերթիկներ այլ գործողություններ (քննարկումներ, խորհրդակցություններ, SWOT վերլուծություններ)

Արժեքներ, որոնք տրվում են ուսանողական հետադարձ կապի մեխանիզմով բաց հարցերում և մեկնաբանությունների բաժիններում: Գործընթացում արտացոլվում է ուսանողների շարունակական ներգրավվածությունը:

11.6 ՍԵՐԲԻԱ

Հեղինակներ՝ Միհայի Անդրոնի և Յուստին Անդրոնի (ՍՀՀ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր. կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուհ է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալություն, նախարարություն)

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն):

Սերբիա

«Բարձրագույն կրթության մասին» Սերբիայի օրենքը

Փորձը կարելի է տեսնել բարձրագույն կրթական հաստատությունների ցանկացած մակարդակում կամ ստորաբաժանման մեջ, քանի որ այն սահմանված է «Բարձրագույն կրթության մասին» Սերբիայի օրենքով:

Ազգային մակարդակ՝ համաձայն «Բարձրագույն կրթության մասին» օրենքի

Բարձրագույն կրթական հաստատությունում/ստորաբաժանման մակարդակում ուսանողներին ներկայացնող Ուսանողական պալամենտի առկայությունը:

Համաձայն «Բարձրագույն կրթության մասին» Սերբիայի օրենքի ուսանողական պալամենտը ունի հետևյալ հատկանիշները.

- ▶ Ուսանողական պալամենտը բարձրագույն կրթական հաստատության մարմին և բարձրագույն կրթության ստորաբաժանում է, որն ունի վարչական մարմին և ներգրավված ուսանողներ,
- ▶ Ուսանողական պալամենտի անդամների ընտրության կարգը և անդամների թիվը սահմանվում է բարձրագույն կրթական հաստատության հիմնարար ակտով,
- ▶ Ուսանողական պալամենտի անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն բարձրագույն կրթական հաստատության և/կամ բարձրագույն կրթական ստորաբաժանման բոլոր այն ուսանողները, ովքեր ուսանում են ուսանողական պալամենտի ընտրության ուսումնական տարվա ընթացքում,
- ▶ Ուսանողական պալամենտի անդամները ընտրվում են մեկ տարի ժամկետով,
- ▶ Ուսանողական պալամենտի անդամները ընտրվում են փակ և ուղղակի քվեարկությամբ յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին,
- ▶ Նպատակ ունենալով ապահովելու ուսանողական իրավունքների կիրարկումը և պաշտպանելու ուսանողների շահերը՝ ուսանողական պալամենտը պետք է ընտրի կամ հեռացնի բարձրագույն կրթական հաստատության և/կամ բարձրագույն կրթության ստորաբաժանման ուսանողների ներկայացուցիչներին,
- ▶ Այն պետք է նաև ընտրի կամ հեռացնի ուսանողների ներկայացուցիչներին այլ հաստատությունների ուսանողական ներկայացուցչական մարմիններում համաձայն հաստատության կանոնադրության:

Ուսանողական պալամենտը կարող է ներկայացնել ուսանողների շահերը ՈԱ ցանկացած բարձրագույն կրթության հաստատության մակարդակով:

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, ֆաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/գնահատման գործընթաց/կառուցվածքային հետադարձ կապ

ԲԿ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Ուսանողները կարող են ներկայացնել իրենց շահերը ՈԱ հետ կապված հարցերում ուսումնական հաստատության մակարդակում:

Ուսանողները համատեղ աշխատում են բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարության հետ:

Հաստատության ՈԱ համար պատասխանատու անձանց հետ հետադարձ կապն ուսանողներից ապահովվում է իրենց ներկայացուցիչների միջոցով (Ուսանողական Պալամենտ)

Ավելացված արժեքն այն է, որ ուսանողները կարող են ներառվել ուսումնական հաստատության ղեկավարության կազմում, որում նրանք սովորում են:

Ուսանողական պալամենտի միջոցով կարող են բարձրացվել ոչ միայն որակի ապահովմանն առնչվող հարցեր, այլև այլ հարցեր, որոնք առաջանում են ուսանողների շրջանում:

11.7 ՎՐԱՍՏԱՆ

Հեղինակներ՝ Միհայի Անդրոնի և Յուստին Անդրոնի (ՍՀՀ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր՝ կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուհ է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալություն, նախարարություն)

Համապատասխանությունը ESPAQ-ին

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն)

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, քաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/գնահատման գործընթաց/ կառուցվածքային հետադարձ կապ

ԲՆ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Վրաստան

Կրթության որակի բարձրացման ազգային կենտրոն. կայք՝ <http://eqe.ge/enq/>

Հավատարմագրման փորձագիտական հանձնաժողովները՝ հավատարմագրման այցերի ժամանակ

Կրթության որակի բարձրացման ազգային կենտրոնն իր հավատարմագրման հանձնաժողովների միջոցով

Հավատարմագրման փորձագիտական հանձնաժողովի անդամների կազմում կարող է ընդգրկվել ուսանող և NCEQE-ի աշխատակից և համապատասխան մասնագիտական ասոցիացիայի ներկայացուցիչ այն դեպքում, եթե տվյալ կրթական ծրագիրը կարգավորման է ենթակա: Այս կերպ ուսանողները կարող են մասնակցել կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացին: Հավատարմագրման այցի ընթացքում բուհի ուսանողները և անձնակազմը կարող են հարցազրույց անցնել, ինչի միջոցով հնարավոր է տեղեկատվություն ստանալ իրենց համալսարանում ՈԱ վերաբերյալ ուսանողների կարծիքի մասին:

Ուսանողները կարող են լինել և՛ հավատարմագրման հանձնաժողովների անդամներ, և՛ կարող են հարցվել հավատարմագրման ընթացքում

Ուսանողներ, հավատարմագրման հանձնաժողովի այլ անդամներ, NCEQE-ի աշխատողներ և այլն

Այն կատարվում է ուսանողների կողմից կրթական ծրագրերի հավատարմագրման ընթացքում ուսանողների արտահայտած կարծիքի միջոցով

Այն կրթական ծրագրերը, որոնք հավատարմագրվել են, հարմարեցվել և համապատասխանեցվել են ուսանողների պահանջներին

11.8 ՀԱՅԱՍՏԱՆ

Հեղինակ Գոհար Հովհաննիսյան (ՀՈՒՍԱ)

Երկիր

Տեղեկատվության աղբյուր (օր.՝ կայք, հոդված, անձինք, որոնց հղում է կատարվել և այլն)

Զարգացման համատեքստ (ինչ բուհ է, կրթական ծրագիր, և այլն)

Նախաձեռնող (ասոցիացիա, գործակալություն, նախարարություն)

Համապատասխանությունը ESPAQ-ին

Ամփոփում (պրակտիկայի, նախաձեռնության համառոտ նկարագրություն)

Լրացուցիչ տեղեկատվություն

Ուսանողների դերը

Ներգրավված անձինք (դասախոսական անձնակազմ, տեխնիկական, վարչական անձնակազմ, քաղաքականություն իրականացնողներ և այլն)

Մշտադիտարկում/զննատման գործընթաց/կառուցվածքային հետադարձ կապ

ԲՆ ՈԱ գործընթացներին ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման արդյունքում ստացված ավելացված արժեք

Հայաստան

ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն http://media.asue.am/upload/HPTH_inqnaverlucutyun.pdf

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)

ՀՊՏՀ-ն ներքին և արտաքին շահակիցների հետ համատեղ

2014թ. կատարված ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ցույց է տալիս ՈԱ համակարգում գոյություն ունեցող բոլոր բացթողումները նաև ուսանողների մասնակցության տեսանկյունից: SWOT վերլուծության արդյունքում որպես ՀՊՏՀ ՈԱ համակարգի թուլ կողմ է առանձնացվել ՈԱ գործընթացում ուսանողների մասնակցության անկատարությունը: Այս խնդիրն ընդգրկված է բարելավման ուղղությունների ցանկում: ՀՊՏՀ-ն նպատակ ունի բարձրացնելու ուսանողների՝ ՈԱ համակարգում մասնակցության աստիճանը:

ՀՊՏՀ-ն սկսել է աշխատել որակի ապահովման հարցի շուրջ 2008թ., երբ մշակվեց Միջին մասնագիտական կրթության ՈԱ ժամանակավոր կարգը: Այդ ժամանակվանից ի վեր կարգը փոփոխվել է հիմնվելով ՀՊՏՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում անցկացված բազմաթիվ քննարկումների և հարցումների արդյունքների վերլուծության վրա: Այս ընթացքում ՈԱՀ-ը բարելավվել է: ՀՊՏՀ-ը համագործակցում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների հետ: Անձնակազմն ընդգրկված է կրթական ծրագրերի մշակման գործընթացում, և բուհը պարբերաբար կազմակերպում և անցկացնում է հարցումներ իր շրջանավարտների շրջանում:

ՀՈՒՍԱ-ն մշակել է 2012–2016թթ. զարգացման ռազմավարական պլան, որում հետազոտության, դասավանդման և գիտելիքի փոխանցման վերաբերյալ առաքելության մեջ առանձնացվում է դասավանդման և որակի զննատմանը: Առավել կարևոր ուղղություններից է բուհում Որակի կառավարման համակարգի ներդրումը, ինչպես նաև կրթական ծրագրերի ներքին և արտաքին աուդիտների պարբերաբար անցկացումը: ՀՊՏՀ-ն կարևորում է նաև ուսանողների մասնակցությունն ու ներգրավվածությունը, որը հստակորեն արտահայտված է 2013թ. հրատարակված «Որակի ապահովման ձեռնարկում»:
(http://media.asue.am/upload/VORAKI_DZERNARK.pdf)

Ուսանողների որոշ մասը հետաքրքրված է և փորձում է ներգրավվել ՈԱ գործընթացներում և իրենց դերն ունենալ դրանում: Սակայն ուսանողների մեծամասնությունը մոտիվացված չեն մասնակցության խմաստով, որի պատճառ կարող է լինել Բոլոնիայի գործընթացի և ՈԱ համակարգի վերաբերյալ տեղեկատվության պակասը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ուսանողներ, ներքին և արտաքին շահակիցներ

Գրավոր հարցաթերթիկներ և շարունակական գործողություններ (քննարկում, խորհրդակցություն, SWOT վերլուծություն)

Փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ձևավորել աշխատանքային համակարգ ուսանողների մասնակցությունը ընդլայնելու համար: Սա արտացոլված է ռազմավարական պլանում և ենթակա է լուծման որոշակի ժամանակահատվածում:

